

Հակոբ Պարոնեան

ՄԵԾԱՊԱՏԻՎ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐԸ

Ա

Հազար ութը հարյուր յոթանասուն... չեմ հիշեր՝ քանիին, սեպտեմբերի երեսունը մէկին,— ներեցէք, երեսունին պիտի ըսեի, վասն զի սեպտեմբերն երեսուն օր միայն ունի,— երկար եւ ընդարձակ թիկնոցի մը մէջ փաթաթված միջահասակ եւ գիրուկ մարդ մը, որ Տրապիզոնի շոգենավէն նոր ելած էր, Ղալաթիո նավամատույցին վրա կայնած՝ նավակէ մը յուր սնդուկները հանել կաշխատեր։

Կը տեսնէք՝ որչափ պարզութեամբ սկսա։ Պատմությունս հետաքրքրական ընելու ջանքով եւ անկից քանի մը հարյուր օրինակ ավելի ծախելու համար չըսի, թէ նույն օրն սաստիկ հով մը կար, թէ տեղատարափ անձրեւ կուգար, թէ խառն բազմություն մը հետաքրքրութեամբ դէպի Ղալաթիո հրապարակը կը վազեր, թէ ոստիկանությունն աղջիկ մը ձերբակալած էր եւ այլն խոսքեր, որովք վիպասաններն կսկսին միշտ իրենց վէպերը։ Ես ալ կրնայի ըսել այս ամենը, բայց չըսի, որովհետև նույն օրն ոչ հով կար, ոչ անձրեւ, ոչ խառն բազմություն եւ ոչ ձերբակալված աղջիկ մը։

Արդ, առանց կասկածելու հավատացէք պատմութեանս, որ ժամանակակից դէպք մ՚է։

Այս ճամփորդն օժտված էր զույգ մը խոշոր եւ սեւ աչքերով, զույգ մը հաստ, սեւ եւ երկար հոնքերով, զույգ մը մեծ ականջներով եւ զույգ մը քիթեր... չէ՛, չէ՛, մէկ քիթով, թէպէտեւ բայց զույգ մը քիթերու տեղ կրնար ծառայել. անոր մեծությունը սխալեցուց զիս։ Ուներ այնպիսի նայվածք մը, որուն եթէ պ. Հ. Վարդովեան[1] հանդիպեր յուր աչերով, կը հարցուներ այդ մարդուն. «Ի՞նչ ամսական կուզես՝ թատրոնիս մէջ ապուշի դեր կատարելու համար»։

Սնդուկներն եւ անկողինն, որ քուրջի մը մէջ ներփակված էին, նավակէն հանելուն պէս ճամփորդն քաշեց քսակն ու նավավարին իրավունքը վճարելով՝ բեռնակիր մը կանչեց։ Հինգ բեռնակիրներ ներկայացան իրեն։ Տարակույս չկա, որ եթէ հինգ կանչեր, քսան եւ հինգ պիտի ունենար յուր առջեւ մայրաքաղաքիս տովորութեանը համեմատ։

— Ո՞ր կողմ պիտի երթաք աղա,— հարցուց բեռնակիրներէն մին՝ մէկ ոտքը սնդուկներէն միույն վրա կոխելով։

— Բերա, Ծաղկի փողոց, թիվ 2 պիտի երթամ,— պատասխանեց խոշոր մարդը։

— Շատ աղէկ, հասկցա, Բերա, Ծաղկի փողոց... պատվական փողոց մ՚է,— ըսավ հարցումն ընող բեռնակիրն եւ սնդուկին մէկն ալ շալկելով սկսավ երթալ։

— Ծաղկի փողոցն ես ալ գիտեմ,— ըսավ երկրորդ բեռնակիրն եւ սնդուկին մէկն ալ ինք առնելուն պէս՝ Բերայի ճամփան բռնեց։

— Ես ամեն օր կերթամ Ծաղկի փողոցն,— ըսավ երրորդն եւ մարդուն անկողինը գետնէն վերցնելն, կռնակին վրա առնելն ու վազելն մեկ ըրավ։

/ 1 Հակոբ Վարդովեանը 70-80-ական թվականների անվանի գործիչ էր, դերասան, թատրոնական խմբերի կազմակերպիչ /

Այս գործողություններն այնքան արագութեամբ կատարվեցան, որ մարդը շվարելով սկսավ չորս կողմը նայիլ՝ տեսնելու համար բեռնակիրներն, որ բազմութեան մէջ անհայտ եղած էին։

— Ի՞նչ խայտառակություն է աս,— պոռաց վերջապէս ոտները գետինը զարնելով, ո՞ւր տարին անկողինս եւ մնդուկներս, ատոնք ի՞նչ իրավունք ունին իմ անկողնուս եւ մնդուկներուս խառնվելու, ի՞նչ աներես մարդ են եղեր այս տեղաց մարդերը. ինչ որ կը տեսնեն, կառնեն, կը տանին։

— Ծաղկի փողոցը մենք ալ գիտենք, աղա, մեզի ալ բան մը տուր, որ տանինք,— ըսին միուս երկու բեռնակիրները։

— Ծաղկի փողոցն ալ գետնին տակն անցնի, դուք ալ,— պատասխանեց մարդն, որուն այտերն նեղութենէ կարմրիլ սկսած էին։

Երկու բեռնակիրները խնդալով հեռացան. եւ ճամփորդն ալ յուր մնդուկներուն ետևէն երթալ կը պատրաստվեր, երբ բարձրահասակ, թխադէմ, փոքր աչերով մարդ մը ուսերը տնկած, ձեռները շփելով եւ բռնազբոսեալ ժպիտով մը մոտեցավ անոր եւ քաղաքավարական ձևով մը ձեռները բռնելով հարցուց.

— Դո՞ւք էք, Աբիտողոմ աղա, ե՞րբ եկաք, ո՞ր շոգենավով եկաք, ի՞նչպէս էք, ձեր եղբայրն ի՞նչպէս է, ազգային գործերն ի՞նչպէս են Տրապիզոն, հացին գինը քա՞նի է հոն, անձրեւ եկա՞վ այս օրերս ձեր քաղաքը... վայ, Աբիտողոմ աղա, վայ...

— Ես եմ Աբիտողոմ աղան, հիմա եկա, տաճկի շոգենավով եկա, շատ աղէկ եմ, եղբայրս ալ աղէկ է, ազգային գործերն ալ աղէկ են Տրապիզոն, հացին գինը մէկ դահեկան[2] է, անձրեւ չեկավ այս օրերս մեր քաղաքը,— պատասխանեց փութով թիկնոցաբնակն՝ առանց ճանաչելու այս անձն։

— Ներեցէք, թողություն ըրէք, որ չկրցի մինչև շոգենավ գալ զձեզ դիմավորելու համար։ Ինծի գրված էր Տրապիզոնէն, որ այս շաբթու անպատճառ հոս պիտի գաք...

— Ես ատանկ բաներու չեմ նայիր։

— Արդարեւ մայրաքաղաքս ինքզինքը բախտավոր համարելու է ձեզի պէս պատվական ազգային մը, շնորհալի երիտասարդ մը, ողջամիտ մէկը...

/ 2 դահեկան — դրամ (8-ից 10 մանրադրամի չափ) /

— Սնդուկներս...

— Ազնիվ սիրտ մը, վեհանձն հոգի մը...

— Բեռնա...

— Հայրենասէր անձ մը...

— Կիրները...

— Ազգասէր, ուսեալ, կրթեալ...

— Սնդուկ...

— Դաստիարակեալ...

— Ներս առին, տարին...

— Ազնվասիրտ, ազնվախոհ, ազնվադէմ մէկը իր մէջ ունենալու համար։
— Սնդուկներուս մէջ ատանկ բաներ չկան,— պատասխանեց Աբիտողոմ աղան քալել սկսելով՝ բեռնակիրները գտնելու համար։

— Թէպէտեւ դուք զիս չեք ճանչնար, բայս ես ձեր գերդաստանը խիստ լաւ կը ճանչնամ. ձեր լուսահոգի հայրն իմ լրագրուս բաժանորդ էր։ Շատ բարի մարդ մ՚էր, աղքատներուն ողորմություն կուտար, աղքատ աղջիկներ կը կարգեր եւ իրեն դիմողներուն բարություն կըներ։ Ասանկ ողորմած մարդերը շատ ապրելու են, բայց, ի՞նչ օգուտ, անգութ մահը միշտ բարիները կառնէ եւ թող կուտա չարերն, որ ազգին չարություն ընեն։ Թողունք սակայն հիները և ուրիշ բանի վրա խոսինք։ Շոգենավուն մէջ հանգի՞ստ էիք։
— Շատ հանգիստ էի, պատվականապէս կերա, խմեցի եւ պառկեցա,— պատասխանեց Աբիտողոմ աղան՝ քայլերն շուտ առնել սկսելով։

— Եթէ հանգիստ չըլլայիք, վաղվան լրագրուս մէջ պիտի գրէի եւ ընկերութեան ուշադրությունը պիտի հրավիրեի,— ըսավ խմբագիրն ետեւէն վազելով։
— Շնորհակալ եմ։

— Կաղաչեմ, ըսէք ինձի, քանի՞ տարեկան էք։
— Քառասուն։

— Վաճառական էք, կարծեմ։
— Այո... եթէ անցագիր պիտի շինել տաք, հարկ չկա, վասն զի հատ մը ունիմ։

— Չէ, վաղվան թերթիս մէջ պիտի գրեմ, որ առջի օրը Տրապիզոնէն մայրաքաղաքս եկավ մեծապատիվ Աբիտողոմ աղա երեւելի վաճառականն, որ յուր լեզվագիտութեամբ եւ վաճառականական հմտութեամբն ծանոթ է մեր ազգայիններուն։ Տաճկերէն գիտէք կարծեմ։
— Ո՛չ։
— Ֆրանսերէ՞ն։

— Ո՛չ։

— Անգլիերէ՞ն։
— Ո՛չ։

— Գերմաներէ՞ն։
— Ոչ։

— Վնաս չունի, ես լեզվագէտ պիտի ըսեմ ձեզի համար եւ ձեր վրայոք գովեստով պիտի խոսիմ։
— Ամեն Պոլիս եկողներուն անունները ձեր թերթին մէջ կը գրէ՞ք։

— Գրեթէ ամենն ալ, եթէ ձեզի պէս պատվավոր ազգայիններ ըլլան։
— Պոլիսէն գացողնե՞րն ալ կը գրէք։

— Գրեթէ կը գրենք, եթէ պատվավոր ազգայիններ ըլլան։
— Շատ լավ, իմ անունս ալ գրեցէ՛ք, ես ալ պատվավոր ազգային մ՚եմ։ Մեր քաղքին մէջ արտերու, եզերու, կովերու եւ ագարակներու տէր եմ... Ատոնք ալ գրէ՛,— ըսավ այնպիսի դէմքով մը, որ կը հայտներ, թէ մեծ շահ մ՚ուներ այս խոսքերուն հրատարակութեանը մէջ։

— Հոգ մի՛ ընէք. խղճի եւ արդարութեան պարտք մը կատարելու համար անոնք ալ կը գրեմ։
— Երկու-երեք հատ սպասավոր ալ ունիմ... անոնք ալ լրագրույդ մէկ կողմը կրնա՞ս անցունել։
— Ինչո՞ւ չէ։

— Ոսկիէ ժամացույց եւ շղթա ալ ունիմ, բայց շոգենավուն մէջ չգողցնելու համար վրաս չառի. անոնք ալ գրել պէ՞տք է,— հարցուց Աբիտողոմ աղան, որ բոլորովին մոռցած էր սնդուկները։
— Ատոնք գրելու հարկ չկա։

— Շատ լավ, բայց մյուս ըսածներս լրագրույդ մէջ ամենէն առաջ դիր, որ կարդան։
— Այնպէս ընելու միտք ունիմ։
— Խոշոր գրերով գրէ՛։
— Հանգիստ եղէք. ամէնէն խոշոր գրերով։

— Միայն հարուստ մարդերուն գալն եւ երթալն կը գրէք... այնպէս չէ՞։
— Այո։

— Եթէ աղքատ մարդերն ալ կը գրէք, չեմ ուզեր, որ իմ անունս...
— Բնավ երբէք, ստակ չունեցողներուն անունները բնավ չենք գրեր, նույնիսկ եթէ հազար ոսկի ալ տված ըլլան դպրոցի մը շինութեան համար։

— Ըսել է որ դուք ամեն իրիկուն հոս կսպասէք Պոլիս եկող կամ անկից մեկնող հարուստները տեսնելու և անոնց անունները հրատարակելու համար, որպէսզի ժողովուրդն գիտնա, թէ ով եկած է եւ ով գացած է... Տարակույս չկա, որ վաղը իրիկուն իմ անունս պիտի կարդամ ձեր լրագրին մէջ։

— Այո՛, ձեր հացէն տվէք, որ տեղական թղթատարով ղրկեմ լրագիրը։
— Բերա, Ծաղկի փողոց, թիվ 2։
— Շատ աղէկ,— ըսավ խմբագիրն եւ գրպանէն թուղթ մը հանելով բաժանորդներուն ցուցակին մէջ անցուց Աբիտողոմ աղան։
— Վաղը առտու լույսը չճղքված ղրկէ, որ կարդամ իմ անունս լրագրին մէջ։
— Իրիկվան դէմ կը ղրկեմ, վասնզի լրագիրս իրիկունները կը տպվի։
— Որչա՛փ ուրախ կըլլայի, թէ ձեր վաղվան լրագիրն առտուն տպէիք... բայց վնաս չունի, իրիկվան թո՛ղ ըլլա, բավական է. որ անունս խոշոր գիրերով գրվի։

— Այդ մասին հանգիստ եղէ՛ք. վաղը իրիկուն անպատճառ կը ղրկեմ լրագիրն ընկալագրով։

— Ընկալագրո՞վ... Տեղական թղթատարով պիտի ղրկէիք հապա... Ընկալագիրն ո՞վ է, անունս գիտէ՞...
— Ընկալագիրն թուղթ մ՚է, որուն մէջ կը գրեմ. «Ընկալա մեծապատիվ Աբիտողոմ աղայեն... լրագրո տարեկան բաժանորդագին մէկ ու կէս ոսկի». եւ այդ թուղթը ձեզի կը հանձնեմ, որով տարի մը իրավունք կունենաք իմ լրագիրս ընդունելու։

— Տարի մը շարունակ պիտի գրէ՞ք իմ անունս։

— Չէ, բայց դուք բաժանորդ պիտի ըլլաք իմ լրագրույս՝ մէկ ու կէս ռսկի վճարելով ինծի։
— Մէկ ու կէս ռսկի՜՜... շատ է... երեք քառորդ ռսկի չբա՞վեր։

— Խմբագիրները բաժանորդագնույն վրա սակարկություն չեն ըներ...։
— Շատ լավ. ղրկեցէք ձեր լրագիրն եւ այն թուղթը, բան մը կընենք։

— Սակայն չկարծէք, թէ ես բաժանորդ գրելու նպատակով զձեզ տեսնելու եկա, քավ լիցի, այդ պզտիկությունը չեմ ընդունիր. բարեկամական պարտք մը կատարելու համար եկա զձեզ տեսնելու։
— Հայտնի բան է։

— Բնավ ձեր մտքէն չանցունէք, թէ այս մարդը մէկ ու կէս ռսկի փրցնելու համար զիս տեսնելու եկավ։
— Չեմ անցուներ։

— Վասնզի կան խել մը մուրացկան խմբագիրներ, որք Պոլիս եկողները կողոպտելու համար անոնց քովը կերթան եւ բաժանորդ կը գրեն զանոնք. ես այդ բանը չեմ կարող ընել, վասնզի բնութեանս մէջ չկա... ես իբրեւ պատվավոր մարդ կուզեմ ապրիլ։
— Հասկցա, իբրեւ պատվավոր մարդ կուզէք ապրիլ։

— Ինձ հետ ձեր ունեցած այս տեսակցությունն ալ ուրիշի մի՛ զրուցէք, վասնզի տեսակ մը բախտանդիր, չվառական անձեր կան, որք բանդագուշական կենսագրություններ կը գրեն եւ իմ անձնականությունս կը խծբծեն։

— Կը հասկնամ, անձնականությունդ կը խծբծեն։

— Օրինակի համար սա պարագային մէջ հանցանք մ՚ունի՞մ ես. զձեզ դիմավորելու եկա եւ խոստացա ձեր անունը լրագրույս մեջ հրատարակէ. դուք ալ իբրեւ ողջամիտ ազգային մը բաժանորդ գրվեցաք. կաղաչեմ, ըսէք, ձեր կոկո՞րդը սղմեցի, որ ինծի բաժանորդ գրվիք։
— Ամենեւին։

— Ատրճանա՞կ ցցուցի։
— Բնավ երբէք։

— Դանա՞կ քաշեցի։
— Ոչ. բայց ուրիշ տեղեր ատրճանա՞կ կամ դանա՞կ ցցունելով բաժանորդ կը գրեն։

— Ատ ըսել չեմ ուզեր, սա ըսել կուզեմ, որ դուք ձեր հոժար կամքով բաժանորդ գրվեցաք։
— Այո՛։

— Եվ ես վեհանձնաբար վարվեցա այս պարագային մէջ։
— Տարակույս չկա։

— Չվարվեցա այն խմբագիրներուն պէս, որք օտարականի մը Պոլիս գալն իմանալուն պէս՝ վազելով անոր տունը կերթան բաժանորդ գրելու համար։
— Այդ չվառականներն իրավունք չունին քու անձնականությունդ խծբծելու... դուն վստահ եղի՛ր ինծի...

— Շնորհակալ եմ ձեզմէ. մնաք բարով, Աբիտոդոմ աղա՛. օր մը մեր խմբագրատունը հրամմեցէք խահվէ մը խմելու։
— Շատ աղէկ. օր մը կուգամ։ Վաղվանին մէջ անցունելու չմոռնաք։
— Անհոգ եղէք։

Աբիսողոմ աղան եւ խմբագիրն բաժնվեցան իրարմէ Բերայի քառուղվոյն առջեւ, ուր հասած էին խոսելով։

Աբիսողոմ աղան առանձին մնալով սկսաւ ճամփան շարունակել՝ ինքն իրեն հետեւյալ խորհրդածություններն ընելով. «Ես ինքզինքս չէի կարծեր այն չափ մեծ մարդ, որչափ որ կը կարծէ այս խմբագիրն. բայց հարկաւ այն ինձմէ աղէկ գիտէ իմ որչափ մեծ ըլլալս, վասնզի խմբագիր մ՛է եւ ուսումնական է...։ Վաղը լրագրի մէջ իմ անունս տեսնողները անշուշտ իրար պիտի անցնին եւ հետաքրքրություն պիտի ունենան ինձի հետ տեսնվելու. վաղը պէտք է որ կիրակի օրվան հագուստներս հագնիմ եւ ոսկիէ ժամացույցս ու շղթաս ալ դնեմ. սպասավորներս ալ հետս բերելու էի. ո՞վ գիտեր...։ Ամէն մարդ պիտի իմանա վաղը, որ մեծ մարդ մը եկած է Կ. Պոլիս. ազնվախոհ, ազնվասիրտ, լեզվագէտ, ուսումնական, դաստիարակեալ, կրթեալ եւ այլն մէկը, ե՛ւ յուրաքանչյուր կնիկ պիտի ըսէ իր էրկանը. «Մեր աղջիկը սա Աբիսողոմ աղային տանք»։ Էրիկն ալ պիտի պատասխանէ կնկանը. «Նայինք՝ Աբիսողոմ աղան մեր աղջիկը կառնէ՞, անիկա հարուստ տեղէ մը աղջիկ առնել կուզէ հարկաւ»։ Այս պատասխանին վրա էրկան եւ կնկան մէջ վեճ մը պիտի ծագի եւ իրարու գլուխ պիտի պատռեն. որո՞ւ հոգ...։ Անունիս լրագրին մէջ անցնիլն սա օգուտն պիտի ունենա, որ երկու օրվան մէջ հարուստ աղջիկ մը առնելով պիտի լրմնցունեմ ամուսնութեան գործն, որու համար միայն եկած եմ հոս... այս ամուս...»։

Աղյուս բեռցված էշերու կարավանէն էշ մը բախվելով Աբիսողոմ աղային դէմ՝ ընդմիջեց զայն իր խորհրդածություններու մէջ, ուր ընկղմած ըլլալով ուշադրություն չէր ըներ առջեւէն եկող էշերուն, որովք լի է միշտ Բերայի մեծ փողոցը։

— Մէկդի կեցիր,— ըսաւ իշավար պարսիկն Աբիսողոմ աղային՝ արդարացնել ուզելով յուր էշը։

— Ատ խոսքը առաջ ըսելու էիր, որ զգուշանայի,— պատասխանեց Աբիսողոմ աղան եւ ճամփան շարունակեց։

Բ

Բեռնակիրներն ոչ լսած եւ ոչ ալ տեսած էին Ծաղկի փողոցն, բայց քաջալերվելով կարգ մը մարդերէն, որք գիտնալ կը ձեւացունէն, ինչ որ չեն գիտեր, եւ որք խիստ բազմաթիվ են մեր ազգին մէջ, համարձակած էին ըսել Աբիսողոմ աղային, թէ շատ աղէկ գիտէին Ծաղկի փողոցը։

Բեռնակիրներուն այս հանդգնությունն այնքան պարսավելի չէ, որչափ այն մարդերունն, որ խոհարարություն ուսած են եւ բանադատություն կընեն, կամ քիչ մը երկրաչափութեան պարապած ըլլալով՝ աստղերուն շարժումներուն վրայոք կը ճառեն, կամ երկու սագ եւ չորս կով մեծցուցած ըլլալով՝ դաստիարակութեան խնդիր կը հուզեն, կամ զավակ մ՚ունեցած ըլլալով՝ առաջին մարդուն ո՛ր աշխարհի մէջ ծնած ըլլալուն վրա կատենաբանեն, կամ վերջապէս անանկ նյութի մը վրա կը խոսին, որ բոլորովին օտար է իրենց, այո՛, այս մարդերուն հանդգնությունն ավելի է, վասնզի բանադատությունն կամ աստղագիտությունն կամ մանկատածությունն եւ այլն Ծաղկի փողոց չէ, որ ուրիշներուն հարցնելով անմիջապէս տրվի մարդ։ Եվ արդարեւ բեռնակիրներն, ամեն քայլափոխին, իրենց դէմն ելնողներուն հարցունելով՝ անմիջապէս գտան Ծաղկի փողոցն եւ թիվ 2 տան դուռը զարկին. մինչդեռ ես շատ ատէնաբաններ[3] մտիկ ըրած եմ, որ յոթը–ութը ժամ շարունակ խոսելով՝ չեն կարողացած իրենց փնտրած փողոցը գտնել եւ ստիպված են ուրիշ փողոցներու մէջ թափառիլ եւ թափառեցնել իրենց ունկնդիրներն՝ անոնց քթէն բռնելով։

Բեռնակիրները դուռը զարնելուն պէս դուռը բացվեցավ եւ ներկայացավ իրենց թուխ եւ երկար դէմքով կին մը, որուն դէմքին վրա ժամանակն այնքան գծեր գծած էր զայն սրբագրելու համար, որքան որ կը գծէ «Մասիսի»[4] խմբագիրն յուր չորս տող մէկ ձեռագրին վրա, որ կամ մէկուն վախճանիլը կիմացունէ եւ կամ ուրիշի մը կարգվիլը։ Բեռնակիրները դռնէն ներս մտնելով բեռները գետինը ձգեցին եւ սկսան իրենց քրտինքը սրբել։
— Աբիսողոմ աղային ըլլալու են ասոնք, այնպէս չէ՞,— հարցուց բեռնակիրներուն թխադէմ տիկինը։
— Անունը չըսավ մեզի,— պատասխանեց բեռնակիրներէն մին՝ սեւ թաշկինակովն գլխուն քրտինքը սրբելը շարունակելով։
— Ի՞նչ տեսակ մարդ էր։
— Խոշոր թիկնոց մը հագած էր։
— Ի՞նչ գույնով էր, ճերմա՞կ թէ թուխ։
— Ո՛չ, սեւ էր։
— Սե՞ւ էր։
— Այո, սեւ, բայց աղվոր, անոր փաթտրվողը ձմեռը չմրսիր։
— Ատ ի՞նչ խոսք է, փաթտրվիլն ի՞նչ պիտի ըլլա... ես քունկին գիտցած կնիկներէն չեմ, հասկցա՞ր,— ըսավ տիկինը յուր խոսքերը շեշտելով։
— Վնասակար բան մը չըսի. փաթտրվելով ի՞նչ կըլլա եղեր,— պատասխանեց բեռնակիրն աթոռի մը վրա փռելով յուր թաշկինակն։
— Ատկէ ավելի վնասակար ի՞նչ կրնա ըլլալ։
— Շատ բարակ բաներու մեր խելքը չպառկիր։
— Ես կը պառկեցունեմ... դուն զիս կը ճանչնա՞ս...։
— Փաթտրվելէն ի՞նչ վնաս կուգա։
— Ես էրիկ ունիմ, ինչու պիտի փաթտրվիմ եղեր անոր։
— Էրիկ ունեցողներն ալ կը փաթտրվին. էրիկն ուրիշ, աս ուրիշ. աս կը տաքցունէ։ Ըսենք, որ ձմեռը գիշեր մը դուրս ելար, փողոցին մէջ էրկանդ չես կրնար փաթտրվիլ, բայց աս կռնակդ կառնես...։

/ 3 ատէնաբան — ճառախոս

4 «Մասիս» — պահպանողական շաբաթաթերթ էր, հետագայում օրաթերթ եւ դարձեալ շաբաթաթերթ, հրատարակվել է Պոլսում 1852-1889թթ. /

— Աբիտողո՞մ աղան։
— Թիկնոցը, տիկին... Աբիտողոմ աղան կռնակի վրան կառնվի՞։
— Մինչեւ հիմա թիկնոցի՞ վրա կը խոսէիր։
— Խոպերնիս թիկնոցի վրա չէ՞ր մի... Հապա դուն ի՞նչ հասկցար։
— Ես հասկցա, որ Աբիտողոմ աղային փաթտրվելու է, կըսես։
— Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր Աստված,— ըսավ բեռնակիրն՝ թաշկինակը քաշելով աթոռէն։
Տիկինն բեռնակրին տված բացատրութենէն գոհ ըլլալով, հրամայական եղանակով մ՚ըսավ.
— Աս անկողինն եւ սնդուկներն վե՛ր հանեցէք։
Բեռնակիրներն հնազանդելով բեռներն նորէն վերցուցին, եւ հազիվ թէ սանդուղին առաջին աստիճանին վրա կոխած էին, տիկինն պոռաց.
— Լեռնէ՞ն եկաք դուք։
— Ոչ, մեծ փողոցէն եկանք։
— Գիտեմ, որ մեծ փողոցէն եկաք. այդ ոտքի ամաններով վեր կելնվի՞. տեսէք՝ ի՞նչ ըրիք տախտակներս, ես այսօր սրբեցի զանոնք, եւ հոգիս բերանս եկավ։
— Ի՞նչ ընենք, ուրիշ ոտքի աման չունինք։
— Ինչո՞ւ կայներ երեսս կը նայիք, չհանէ՞ք տվնք։
— Մի՛ պոռար, տիկին, մի՛ պոռար, կը հանենք։
Եվ հանեցին իրենց ոտքի ամաններն, որք ավելի մաքուր էին, քան իրենց ոտներն։
— Ա՞յդ ոտքերով վեր պիտի ելնէք,— կրկնեց տիկինն։
— Ուրիշ ոտք չունինք, այս ոտներով պիտի ելնենք,— պատասխանեցին պանդուխտներն այնպիսի խղճուկ կերպով մը, որ կարծես թէ իրենց աղքատութեան պատճառով երկու ոտքէն ավելի չէին կրցած ունենալ, եւ որպէս թէ հարուստներն չորս, հինգ կամ վեց ոտք ունեցած ըլլային։
— Վա՛ր իջէք, չեմ ուզեր, գետինը ձգեցէ՛ք, ես կը տանիմ։
— Ատանկ ավելի աղէկ կըլլա։
— Ա՛հ, ես ի՞նչ ըսեմ իմինիս, որ գործի չերթար, եւ առտվնէ մինչեւ իրիկուն սրճարանները կերթա, կը նստի, ազգային գործերու վրա կը խոսի, գիս ասանկ խեղճ կը թողու, եւ ես ալ կստիպվիմ տունս մարդ դնելու,— մռմռաց ինքնիրեն տիկինն եւ սանդուղին առջեւ դրված թաց լաթով մը սանդուղին առաջին աստիճանն սրբել սկսավ։
— Տիկին, մենք սպասե՞նք պիտի...
— Եթէ խելքը գլուխը մէկն ըլլար,– շարունակեց տիկինն ինքնիրեն,— ես հիմա թագուհիի մը պէս կեանք կանցունէի. զավակ չունիմ, բան չունիմ. բայց ինչ ընեմ, որ խելքը միտքը թաղական[5] ընտրելու եւ թաղական վար առնելու վրա է։ Աստուծմէ գտնան այն թաղականներն ալ, որ ամենուս խեղճութեանը պատճառ կըլլան կոր։ Ինչո՞ւդ պէտք քուկին, տնաշէն, ուզողը նստի, չուզողը չնստի, դո՞ւն մնացիր այս ազգին գործերը շտկող...
— Տիկին, մեր իրավունքը տուր, որ երթանք, պարապ տեղը չսպասենք հոս,— ըսին բեռնակիրները։
— Վաղը եկէք,— պատասխանեց տիկինն. եւ բեռնակիրներն, որք վաղը բառն ամեն օր լսելու վարժված էին, տիկնոջ պատասխանին վրա դռնէն դուրս ելան։
— Թաղականի մը ետեւէն է ինկեր,— շարունակեց տիկինն դարձեալ,— եւ բնավ չմտմտար, որ ուտելու համար հաց պէտք է, միս պէտք է, եղ պէտք է, բրինձ պէտք է. զանոնք եփելու համար փայտ պէտք է, ածուխ պէտք է. ատոնք բնավ չհարցուներ, առտուն լուսը չճեղքված կերթա եւ իրիկվան մութուն կուգա։ Ահա հյուրերնիս այսօր եկած է եւ ժամէ մը հոս պիտի գա. հարկավ անոթի է մարդն, առջեւը բան մը հանելու է, որ ուտէ, եւ մենք բան մը չունինք, վասն զի իրիկունները տուն եկած ժամանակ կտոր մը միս կամ ձուկ չբերեր, որ տունին մէջ կերակուր գտնվի... թաղականէն ուրիշ բան չունինք տուներնուս մէջ, ամեն իրիկուն թաղական...

/ 5 թաղական — այսինքն՝ թաղական խորհրդի անդամ։ Թաղական խորհուրդն ըստ ազգային սահմանադրութեան տաճկահայերի ինքնավարական օրգանների՝ հիմնական բջիջն էր, թէ Պոլսում եւ թէ գավառներում, որ ընտրվում էր տեղական ժողովրդի կողմից շրջանի ազգային-մշակութային գործերը տնօրինելու համար /

Տիկինն դեռ դիտողություններն լմնցուցած չէր, եւ ահա յոթանասունի մոտ մարդ մը, որ բանալիով բացած էր դուռն, ժպիտով ներս մտավ եւ բարեւեց տիկինը։ Այս մարդը տիկնոջ ամուսինն էր։ Յուր խորշոմած կունտ ճակատն չափէն ավելի դուրս ցցված էր եւ այնպիսի դէմք մը ուներ, որ կարծես թէ մէկն զայն կը խտղտեր։ Այս մարդն հազիվ թէ դռան սեմէն ներս ոտք կոխած էր, կինն առջեւն ելնելով՝ հարցուց անոր։
— Ո՞ւր էիր մինչեւ հիմա, մարդ Աստուծո։
— Չես ըսեր, կնի՛կ, թաղականին գործն ալ այսօր լմնցուցինք. կիրակի օրը քվեարկությունը պիտի կատարվի, եւ բոլոր անդամները պատվավոր մարդիկ պիտի ըլլան։ Թորոս աղան ինծի քանի մը օրի խմցունելով ետեւէս ինկավ, որ յուր ուզած մարդոցը քվէ տամ, բայց ես իմ մարդոցս տվի, վասնզի իմ մարդիկս ինծի ամեն գիշեր օրի կը խմցունեն եւ շատ բարի եւ պատվավոր մարդիկ են, ուրիշներուն պէս թաղին անտուկէն ատակ չեն գողնար եւ դպրոցն ալ...

— Այդ խոսքերուն ատենը չէ հիմա, շուտ մը գնա կտոր մը միս առ։
— Թորոս աղան քիչ մը սրդողեցավ, եւ ասկից վերջը հետս սքամպիլ[6] չպիտի խաղա. թո՛ղ չխաղա՛...։
— Ես քեզի ի՞նչ կըսեմ կոր... շուտ ըրէ՛, գնա՛։
— Ես ալ տիրացու Մարտիրոսին հետ տամա կը խաղամ ասկից ետքը...
— Այդ խոսքերը վերջն ալ կընենք, Մանուկ աղա, գնա՛ մսավաճառէն քիչ մը միս առ ու բեր։
— Տիրացու Մարտիրոսին գլխուն եկածը չես ըսեր, կնի՛կ. խեղճին կինն այս գիշեր մազ մնացեր է, որ մեռնի եղեր...
— Ինչո՞ւ։
— Մանչ մը բերեր է. բայց շատ դժվարութեամբ. չորս դայեակ եւ տասնվեց բժիշկ հազիվ կրցած են տղան առնել։
— Խեղճ կնիկ...
— Վաղը քիչ մը գնա՛, զինքը տե՛ս։
— Կերթամ, հիմա դուն գնա, սա մսին գործը լմնցուր։
— Այս գիշեր անպատճառ միս պէ՞տք է։
— Հապա, Աբիսողոմ աղային անկողինն ու մնդուկները բերին, ինքն ալ հիմա կուգա։
— Իրա՞վ կըսես, կնի՛կ։
— Սուտ ինչո՞ւ պիտի խոսիմ։
— Շատ աղէկ ուրեմն. երթամ պատվական միս մ՚առնեմ ու գամ։
Մանուկ աղան անմիջապէս տունէն դուրս ելավ եւ հազիվ թէ քանի մը քայլ առած էր, կինը ետեւէն պոռալ սկսավ.
— Մա՛նուկ աղա, Մա՛նուկ աղա...
Մանուկ աղան ետ դարձավ.
— Միսն ինչո՞վ պիտի եփենք,— հարցուց կինը։
— Կուզես գետնախնձորով եփէ՛, կուզես լուբիայով[7] ։
— Ատ չէ իմ ըսածս. ածուխ չունինք, քիչ մ՚ալ ածուխ առնէիր։
— Շատ աղէկ,— պատասխանեց Մանուկ աղան եւ սկսավ երթալ։
— Մա՛նուկ աղա, Մա՛նուկ աղա,— կանչեց տիկինը նորէն։
Ետ դարձավ Մանուկ աղան։
— Աղէկ ա՛, մինակ միտով չըլլար, քիչ մ՚ալ բրինձ ա՛ռ, որ ապուր մ՚ալ շինենք։
— Աղէկ ըսիր, կնի՛կ, քիչ մ՚ալ բրինձ առնենք։
Մանուկ աղան այս անգամ վազելով սկսավ երթալ. փողոցը դառնալու վրա էր, երբ կինն բոլոր ձայնովն ետեւէն զայն կանչեց.
— Մա՛նուկ աղա, Մա՛նուկ աղա... Ման...

/ 6 սքամպիլ — թղթախաղի մի տեսակը
7 լուբիա — լոբի /

Կանգ առավ էրիկն եւ վերստին ետ դարձավ՝ այս անգամ դէմքին զվարթութեան վրա քիչ մը գեղջ ընելով։
— Ի՞նչ կուզես...
— Մարդ Աստուծո, շոգէկառքի պէս կը վազես, ձայնս մարեցավ։ Սոխ չունինք, աղ ալ չունինք, քիչ մ՚ալ գազ կամ ճրագ առնելու է, որ վառենք. մարդը մութո՞ւն պիտի նստեցունենք։
— Աղէկ ա՛, ամենը մէկէն ըսէ, որ նպարավաճառին երթամ եւ պետք եղածներն առնեմ. հարյուր անգամ ետեւէս կանչեցիր։
— Ջուրի շիշ ալ չունինք... գլուխս կապելու բան մը չունիմ, ոտքս հագնելու կոշիկ չկա. այս վիճակին մեջ ի՞նչպէս Աբիտողոմ աղային դէմը ելնէմ։
— Հիմա ուտելիքը առնենք, վաղն ալ հագնելիքը կը մտմտանք,— ըսաւ Մանուկ աղան եւ դուռն ուժով մը քաշելով դուրս ելաւ□
— Մանո՛ւկ աղա, Մանո՛ւկ աղա...
— Ուզածիդ չափ պոռա՛, ա՛լ ետ չեմ դառնար,— մռմռաց Մանուկ աղան եւ ճամփան շարունակեց։
Մանուկ աղան քանի մը փողոց դարձած էր, երբ կնկան ձայն մը առաւ, որ զինք կը կանչեր։
— Գործ չունիս նէ, պոռալով ետեւէս վազէ,— ըսաւ ինքնիրեն Մանուկ աղան՝ առանց գլուխն ետ դարձնելու՝ տեսնելու համար, թէ ով էր զինք կանչողը։
— Մանուկ աղա, Մանուկ աղա,— կրկնեց ձայնը, որ տիրացու Մարտիրոսին տասնամեա աղջկանն էր։
Մանուկ աղան շարունակեց յուր ճամփան. եւ տիրացու Մարտիրոսին աղջիկն՝ քայլերն փութացնելով՝ տասը քայլ հեռավորութեամբ մոտեցաւ անոր։ Խեղճին շունչը կտրած ըլլալով՝ անգամ մ՚ալ կրցաւ պոռալ.
— Մա՛նուկ աղա։
Դարձեալ պատասխան չառաւ եւ ստիպվեցաւ քիչ մ՚ալ քալելով Մանուկ աղային հագուստի ծայրէն քաշելու։
— Թող տուր, կնի՛կ,— ըսաւ Մանուկ աղան՝ առանց ետեւը նայելու։
— Բան մը պիտի ըսեմ։
— Մտիկ ընելու ժամանակ չունիմ. ըսածներդ արդէն չեմ կրնար միտքս բռնել, հիմա ելեր, ուրիշ բաներ ալ պիտի ըսես...
— Դայեակին տունը պիտի հարցունեի...
Դայակ բառը լսելուն պէս արթնցաւ Մանուկ աղան եւ ետեւը տիրացու Մարտիրոսին աղջիկն տեսնելով՝
— Աղավնի, դո՞ւն էիր ետեւէս վազողը,— հարցուց անոր։
— Ա...յո...ես...— պատասխանեց Աղավնին, որ հեւալէն ա՛լ չէր կարող խոսել։
— Մայրդ ի՞նչպէս է։
Աղավնին կը հեւար։
— Չըսէ՞ս, մայրդ ի՞նչպէս է... դժբախտությո՞ւն մը պատահեցաւ։
Աղավնիին բոլոր պատասխանը հեւալ էր...
— Հետաքրքրութենէս պիտի ճա՛թիմ[8]... չըսէ՞ս, աղջիկ, հեւալու ժամանա՞կ է հիմա, մայրդ ի՞նչպէս եղաւ։
— Մայ...րի...կս... ա...ղէկ է, բայց...տը...ղան... ծիծ չը...բռ...ներ... կոր... դա...յեա...կը...պի...տի...
— Շատ լաւ, շատ լաւ, աղջիկս, դուն տուն գնա, դայեակն ես կը ղրկեմ։
Աղավնին բաժնվեցաւ Մանուկ աղայէն, որ ճամփան փոխեց դայեակին տունը փնտրելու համար։
Չուզելով մեր ընթերցողին ձանձրույթ պատճառել՝ կը թողունք Մանուկ աղան, որ ամեն քայլափոխին բարեկամի մը կը հանդիպեր եւ անոր կծանուցաներ կամ թաղականին ընտրությունը կամ տիրացու Մարտիրոսին կնկան մանչ զավակ մը բերելն կամ Աբիտողոմ աղային գալը։ Դառնանք հիմա Աբիտողոմ աղային։

/ 8 ճաթել — տրաքվել, պայթել /

Գ

Բավական երկար տարիներէ ի վեր սովորություն եղած է, որ շատերը ուսում առնելու համար Ֆրանսիա կամ Գերմանիա երթալէն ետքը մայրաքաղաքս կուգան կին առնելու համար, եւ ընթերցողն ալ գիտէ արդեն, որ Աբիսողոմ աղան ալ ուրիշ նպատակով եկած չէր Կ. Պոլիս։ Ընթերցողս չմոռցավ նաեւ, թէ այս ամուսնութեան խնդիրն ո՛րչափ միտքը գրաված էր Աբիսողոմ աղային, որ առջեւէն եկող էշերը չտեսնելով՝ անոնց միայն դէմ բախեցավ։ Թերեւս հարցվի, թէ Աբիսողոմ աղային դէմ բախվող ավանա՞կն ալ ամուսնութեան վերաբերեալ գործ մ՚ուներ, որ յուր առջեւ չտեսավ Աբիսողոմ աղային պէս խոշոր մարդ մը։ Անոնք, որ պատմութեան քիչ կամ շատ ծանոթություն ունին, գիտեն, որ էշերը, որոնց նախահայրերէն մին ժամանակավ հրեշտակ տեսած է[9], բնավ կարեւորություն չեն տար մահկանացուներուս եւ կուզեն, որ միշտ մենք ճամփա բանանք իրենց։ Աբիսողոմ աղան եթէ պատմութեան տեղեակ ըլլար, կամ կին առնելու խնդիրով միտքն չզբաղեցուներ, անշուշտ ճամփա պիտի բանար այդ արարածներուն, որք իրենց ականջներով Միդաս[10] թագավորին ներկայացուցիչներն ըլլալու պատիվն ալ կը վայելէն։

Արդ, Աբիսողոմ աղան էշերէն բաժնվելէն ետքը Ծաղկի փողոցը գտնելու համար անոր ատոր հարցումներ կուղղեր. վասնզի ինքն առաջին անգամ էր, որ Պոլիս կուգար, եւ Տրապիզոն բնակվող բարեկամներէն մին խորհուրդ տված էր իրեն, թէ հանգիստ ուտելու եւ պառկելու համար հիշեալ փողոցը, հիշեալ թիվը կրող տունն իջնելու էր։ Այդ բարէկամն շաբաթ մը առաջ Մանուկ աղային ալ նամակով իմացուցած էր, որ Աբիսողոմ աղան իրեն տունը պիտի բնակեր։ Աբիսողոմ իրեն տրված տեղեկություններուն համեմատ մէկ փողոցէն կը մտներ, մյուսէն կելլեր, երբեմն ալ սխալմամբ անել փողոցներու մէջ կը մտներ, կը բարկանար, ետ կը դառնար եւ մէկ կողմէն ալ կը կասկածեր, որ բեռնակիրներն իրեն անկողինն եւ սնդուկներն առնելով չփախչէին, թէպէտ եւ անոնց հավատարմությունն շատերէն լսած էր։

Ժամու մը չափ Բերայի փողոցները չափելէն ետքը՝ Աբիսողոմ աղան հաջողեցավ վերջապէս գտնել Ծաղկի փողոցն, զոր շփոթելու չէ նույն անունը կրող փողոցին հետ, որ Բերայի հրդեհէն մոխիր դարձած էր հազար ութը հարյուր յոթանասունը չեմ հիշեր քանիին։ Այս փողոցն Ծաղկի փողոց կանվանվեր սա պատճառով, որ հոն բոլոր տուներուն պատուհաններուն առջեւ միշտ ծաղիկներ կը գտնվէին։

— Երկու թիվն ո՞րն է,— հարցուց, առանց գիտնալու, Մանուկ աղային կնոջը, որ դռան առջեւ յուր երկանը գալատեան կապասեր։

— Աս է, հրամմե՛ցէք, Աբիսողոմ աղա,— պատասխանեց տիկինը։

— Անկողինս եւ սնդուկներս բերի՞ն։

— Բերին, Աբիսողոմ աղա. վեր հրամմեցէ՛ք, Աբիսողոմ աղա, եթէ կուզէք, քիչ մը հոգնություն առնելու համար սա պզտիկ սենեակը նստեցէք,— ըսավ կինը գետնահարկի վրա պզտիկ խուց մը ցույց տալով։

— Շատ հոգնած եմ, քիչ մը հոս կը նստիմ։

— Ձեր կամքն ինչպէս որ կուզէ, այնպէս ըրէ՛ք, Աբիսողոմ աղա. տունը ձերն է, Աբիսողոմ աղա. ձեր տունին պէս հանգիստ ըրէ՛ք։

— Շնորհակալ եմ։

Աբիսողոմ աղան պզտիկ սենեակը մտավ առաջնորդությամբ տիկնոջ, որ դամբար մը բռնած էր, որուն գազը հատնելու վրա էր։

— Ի՞նչպէս եք, Աբիսողոմ աղա, տունէն ի՞նչպէս են, աղէ՞կ են։

— Աղէկ են։

— Թող աղէկ ըլլան, ձեր զավակներն ի՞նչպէս են, Աբիսողոմ աղա, դպրոց կերթա՞ն։

— Զավակ չունիմ։

/ 9 հրեշտակ տեսած է— հրեշտակ տեսած էշը մոգ Բաղաամի էշն է (ըստ Աստուածաշնչի), որ հրեշտակ տեսավ եւ խոսել սկսեց
10 Միդաս— փոյուգիական առասպելական թագավոր, որին պատժեց Ապոլլոնը՝ նրա գլխին իշի ականջներ բուսցնելով/

— Ձեր տիկինն ի՞նչ կընէ, աղէ՞կ է, Աբիտողոմ աղա։
— Տիկին չունիմ դեռ։
— Կարգված չէ՞ք, Աբիտողոմ աղա։
— Չէ։
— Շատ լավ, հոս աղվորիկ աղջիկ մը գտնենք ու պղսեցի ընենք քեզի, Աբիտողոմ աղա։
— Անանկ միտք մը ունինք,— պատասխանեց Աբիտողոմ աղան. — բայց աղջիկէն առաջ ես կերակուր կուզէմ, վասն զի առտվնէ ի վեր բերանս բան դրած չեմ։
— Շատ աղէկ, Աբիտողոմ աղա, շատ աղէկ. հիմա կը բերեմ ձեր կերակուրն։

Տիկինը դուրս ելավ եւ դուռը բանալով սեմին վրա կայնեցավ՝ սպասելու համար Մանուկ աղային, որ, ինչպէս կը հիշեն ընթերցողները, դայակ փնտրելու գացած էր։
Աբիտողոմ աղան սենեակին մէջ մինակ մնալով՝ բարձի վրա դրված Զէն Հոգեւորն[11] առավ եւ թղթատել սկսավ զայն. բայց որովհետեւ մարդս անոթի եղած ժամանակ գիրք չկրնար կարդալ, ինչպէս նաեւ չկրնար գիրք գրել, նորէն բարձին վրա դրավ Զէն Հոգեւորն, վասն զի փորն կիմացուներ իրեն, թէ Զէն մարմնավորին պէտք ուներ, եւ սկսավ սենեակին մէջ պտտելու։

— Կաղաչեմ, Աբիտողոմ աղա, որ ձեր տունին պէս հանգիստ ընէք,— ըսավ տիկինը սենեակը մտնելով։
— Անհանգստութեան պատճառ մը չունիմ, միայն թէ անոթի եմ եւ կերակուր ուտել կուզեմ։
— Կերակուրդ պատրաստվելու վրա է, հիմա պիտի բերեմ,— ըսավ տիկինը եւ դուրս ելավ նորէն դռան առջեւ էրկանը սպասելու համար։
— Ի՞նչ տեսակ կնիկ է այս,— ըսավ Աբիտողոմ աղան, երբ առանձին մնաց,— զիս անոթի կը պահէ եւ կը պատվիրէ, որ հանգիստ ըլլամ. անոթի մարդը հանգիստ կրնա՞ ըլլալ...
— Սեպէ՛ թէ ես ալ քու քույրդ եմ կամ աղջիկդ եմ,— ըսավ վաթսունամյա տիկինը դարձեալ ներս մտնելով,— եթէ բան մը կուզես, մի՛ քաշվիր, ըսէ ինծի, որ բերեմ։
— Շնորհակալ եմ։
— Ես կուզեմ, որ իմ տունս եկող հյուրերը չնեղվին։
— Կը հասկնամ. հիմակուհիմա կերակուրէն ուրիշ բան չեմ ուզեր։
— Կերակուրը պատրաստվելու վրա է, հոգ մի՛ ընէք...

Տիկինը դեռ պիտի շարունակեր յուր բանակցությունն, բայց դուռը զարնվելով՝ դուրս վազեց շուտով, որպէսզի դուռը բանա, էրիկը դիմավորէ եւ բերած պաշարներն առնէ ու կերակուր եփէ։
— Ողջույն, տիկին,— ըսավ մէկը դուռը բացվելուն պէս։
Հարկ չկա ըսելու, թէ եկողը կրոնավոր մ՚էր, ինչու որ անոնք միայն կը գործածեն ողջույնը։
— Օրհնեա՛ Տէր,— պատասխանեց տիկինը։
— Ի՞նչպէս էք, աղե՞կ էք, տիկին։
— Փառք Աստծո, տէր հայր։
— Մանուկ աղան հիմա դէմս ելնելով իմացուց, որ հյուր մը եկած է ձեզի այսօր, ես ալ եկա, որ հետը տեսնվիմ։
— Շատ աղեկ ըրեր էք, ներս հրամմեցէք, տէր հայր,— ըսավ տիկինն՝ ցույց տալով խուցն, որուն մէջ Աբիտողոմ աղան յուր անոթութեամբը կզբաղեր։
Քահանան ներս մտավ։
Աբիտողոմ աղան ոտքի ելավ։
— Ողջո՛ւյն, Աբիտողոմ աղա։
— Օրհնեա՛, տէր հայր։

/ 11 Զեն Հոգեվոր — իսկական վերնագիրն է՝ «Գիրք կոչեցեալ Զեն Հոգևոր». Պոլսի պատրիարք Հակոբի աշխատությունն է, լույս է տեսել Պոլսում 1757 թվականին. ունի կրոնական-բարոյախոսական բովանդակություն եւ մեծ հռչակ է վայելել հոգևորականության շրջաններում /

— Մեղավորս ձեր բարեպաշտութեան գալն իմանալով՝ աճապարանոք եկա ձեր ջերմեռանդութեան պատվական որպիսությունը հարցնելու, ի՞նչպէս եք, Աբիսողոմ աղա։
— Աղէկ ենք։
— Միշտ աղէկ ըլլա՛ք, Տէր Աստված ձեր մեռելոց արքայություն եւ կենդանեաց ավուրս երկարս պարգեւեսցէ։
— Շնորհակալ եմ. դուք ի՞նչպէս էք, տէր հայր։
— Մեր աղէկությունը մի հարցունէք... ժամանակիս աղեկությունը... Տէր Աստված զձեզ համենայն փորձանաց եւ ի չարէ ազատ պահեսցէ. ժողովուրդն երբ աղէկ ըլլա, քահանաներուն ալ երեսը կը խնդա։
— Այնպէս է, տէր հայր,– պատասխանեց Աբիսողոմ աղան՝ յուր աչերն չզատելով բնավ խուցին դռնէն, ուսկից կերակուր կը հուսար։
— Օրհնա՛ծ, ժամանակը շատ գէշ է. ժողովուրդը շատ նեղություն կը քաշէ, այս պատճառավ ջերմեռանդությունն ալ օր ըստ օրէ պակսելու վրա է։
— Իրավ է։
— Բայց ի՞նչ պիտի ընենք, ի՞նչ կուգա մեր ձեռքէն՝ համբերելէն զատ... Սուրբ գիրքը կըսէ. ով համբերեսցէ իսպառ, նա կեցցէ։
— Այնպէս է։
— Եթէ չհամբերենք, բարկանալ պէտք է, եւ մարգարէն կըսէ. բարկանա՛յք եւ մի՛ մեղանչէք։
— Ճիշտ է,— պատասխանեց Աբիսողոմ աղան, որուն ականջը բնավ չէր մտներ քահանային խոսքերը եւ որ քահանային ներկայութենէն նեղություն կիմանար, վասն զի, ինչպէս գիտեն ընթերցողները, կերակուրէն ուրիշ բանի պէտք չուներ։
— Զի ո՛չ հացիվ միայն կեցցէ մարդ, այլ բանիվ տեառն[12]։
Քահանան քթախոտի տուփը ծոցէն հանեց եւ երկու մատներովը քթախոտ լեցուց քթին ծակերուն մէջ եւ հետո, տուփը Աբիսողոմ աղային երկնցնելով՝
— Հրամմեցէ՛ք, օրհնա՛ծ,— ըսավ։
Աբիսողոմ աղան շնորհակալութեամբ առավ տուփն եւ քիչ մը քթախոտ քաշեց։
— Քիչ քաշեցիք, Աբիսողոմ աղա, կաղաչեմ, անգամ մ՚ալ քաշեցէք, քթախոտը վնասակար բան մը չէ։
Աբիսողոմ աղան անգամ մ՚ ալ քաշեց, որպէսզի խոսքը չ՚երկարի եւ հյուրը մէկնի։
— Ինչո՞ւ աղէկ մը չէք քաշեր, Աբիսողոմ աղա,— կրկնեց քահանան, շատկէկ[13] քաշեցէ՛ք։
— Շնորհակալ եմ, տէր հայր, սովորություն չունիմ։
— Կը խնդրեմ, մեղավորիս խոսքը մի՛ կոտրէք, քիչ մ՚ալ քաշեցէ՛ք։
— Ա՛լ չես քաշվիր,— ըսավ Աբիսողոմ աղան մէկուսի եւ քիչ մ՚ալ քաշեց։
— Դավիթ մարգարէն[14] կըսէ, որ՝ մարդոր որպէս խոտոտ են ավուրք յուր...[15]
— Քթախոտին համա՞ր կըսէ։
— Չէ, մեզի համար կըսէ... եւ մենք ալ աշխատելու ենք, որ այս վաղանցուկ կեանքի մէջ ուրիշներուն բարիք ընենք, աղքատ տնանկները խնամենք եւ երբեմն ալ մեր ննջեցելոց հոգվույն համար աղոթենք։
— Այնպէս է։
— Պատրաստ գտնվելու ենք, որ կանչվելնուս պէս երթանք։
— Իրավ է։
— Մեղավորս պիտի համարձակիմ խնդիրք մը ընել ձեր բարեպաշտութեանը եւ կը հուսամ, որ չէք մերժեր, վասնզի ձեր բարեպաշտությունը եւ ջերմեռանդությունը շատ աղեկ կը ճանչնամ մեղավորս։

/ 12 Զի ո՛չ հացիվ միայն կեցցէ մարդ, այլ բանիվ տեառն — Որովհետև ո՛չ միայն հացով կապրի մարդ, այլ Աստծո խոսքով (Քրիստոսի Ավետարանից)
13 շատկէկ — մի քիչ շատ
14 Դավիթ մարգարէ — (մոտ՝1010-970 թթ. Ք. ա.) հրէական թագավոր էր, որ հռչակվել է նաեւ որպէս հեղինակ սաղմոսների մեծ մասի, որոնք հոգեւոր երգեր էին հրեաների եւ քրիստոնեաների համար
15 Մարդոր որպէս խոտոտ են ավուրք յուր — մարդու օրերը (կեանքը) խոտի նման է. այսինքն՝ անցավոր/

— Հրամմեցէ՛ք։
— Տէր Աստված յուր անապառ գանձը միշտ բաց պահէ հրամանոցդ պէս ջերմեռանդներուն։
— Շնորհակալ եմ։
— Մէկուն տեղ հազար տա, հազարին տեղ միլիոն տա ի շինություն սբ. եկեղեցվո եւ ի փառս ազգին։ Խնդիրքս սա է, որ առաջիկա կիրակի կուզեմ ձեր ննջեցելոց հոգուն համար պատարագ մատուցանել։ Ներեցէ՛ք համարձակութեանս, բայց իմ պարտքս է միշտ իմացունել, որ ննջեցեալները մոռնալու չէ։
— Իրավունք ունիս, տէր հայր։
— Արդ, եթէ կուզէք, ըսէք, որ ես ալ անոր համեմատ կարգադրություն մը ընեմ։ Չկարծէք, թէ ծախքը մէկ մեծ բան մ՚ է. երկու ոսկիով կը լմննա։ Նույն օրը հատկապէս ծանուցում ալ կընենք եկեղեցվո մէջ, որ վասն հոգվոցն ննջեցելոց Աբիսողոմ աղային է նույն ավուր տուրբ եւ անմահ պատարագը։
— Շնորհակալ կըլլամ։
— Բան մը չէ, մեր պարտքն է։
— Հրամմեցէ՛ք, երկու ոսկին առէ՛ք,— ըսավ Աբիսողոմ աղան՝ քսակէն երկու ոսկի տալով քահանային։
— Թող այսօր մնար... ինչո՞ւ աճապարեցիք,– պատասխանեց քահանան ձեռները բանալով։
— Չէ, առէ՛ք։
— Որովհետեւ կ՚ստիպէք, ես ալ կառնեմ սիրտդ չկոտրելու համար։ Օրհնեալ ըլլաք. Տէր Աստված ձեր տունը միշտ շէն պահէ, ձեր քսակը միշտ լեցունէ. ինչ որ ունիս սրտիդ մէջ, Տէր Աստված կատարէ. գործերուդ հաջողություն տա եւ ամեն փորձանքներէ ազատ պահէ։

Քահանան բարեմաղթությունները լմնցնելուն պէս մնայք բարեավ ըսելով դուրս ելավ։
—Վերջապէս խալսեցա[16],— ըսավ ինքնիրեն Աբիսողոմ աղան,— սա մարդուն ձեռքէն. — աս ինչ փորձանքներ են, որ կուգան գլուխս այսօր՝ Պոլիս ոտք կոխելէս ի վեր։ Շոգենավէն հազիվ դուրս ելած էի, խմբագիրին մէկը երկու ժամ գլուխս ցավցուց. անկից զատվեցա եւ մինչեւ որ տունը գտա, հազար նեղություն քաշեցի։ Տուն եկա, որ քիչ մը շունչ առնեմ եւ կերակուր ուտեմ, տանտիկինը զիս անոթի կը պահէ եւ միշտ ներս կուգա, կաղաչէ ինձի, որ բան մը հոգ չընեմ եւ հանգստութեանս նայիմ։ Աս ալ հերիք չէր, եւ ահա այս մարդը կուգա, բռնի քթախոտ քաշել կուտա ինձի եւ Դավիթ մարգարէէն խոսք բանալով՝ երկու ոսկի կառնէ, կերթա. երթա բարով։ Այս ամենը քաշեցինք անոթի փորանց. բայց սա կերակուրս ինչո՞ւ համար չեն բերեր. այս գիշեր անոթի՞ պիտի պահեն զիս... աս ի՞նչ խայտառակություն է...

Այս հարցումներն կուղղեր Աբիսողոմ աղան, եւ ահա գազն, որ արդեն հատած ըլլալով տկար լույս մը կուտար, կը մարի եւ մութի մեջ կը ձգէ հյուրը։
— Բայց քաշվելու բան չէ աս,— կը շարունակէ խոշոր մարդը,— կամ ուրիշ տեղ մը երթալու է եւ կամ կինը կանչելով քանի մը խոսք ըսելու է։ Ես իմ քաղաքիս մէջ երկու սպասավոր ունեի, որ դէմս բարեւ կը բռնէին. սեղանը կանուխ կը պատրաստէին եւ իմ գործերս կը տեսնէին. սպասավորներով վարժված մարդ մը ինչո՞ւ այս նեղությունն քաշէ հիմա։
— Աս ի՞նչ է, գազը մարա՞ծ է...— հարցուց տիկինը սենեակին դուռը բանալով։
— Այո՛, մարած է,—պատասխանեց Աբիսողոմ աղան՝ զսպելով յուր զգացած նեղությունն, որ ավելնալու վրա էր։
— Դուն հանգիստ եղիր, Աբիսողոմ աղա, այդ բաները նայիլը մեր գործն է։
— Այո՛, բայց ես անոթի եմ եւ սպասելու կարողություն չունիմ։
— Ես ի՞նչ ըսի քեզի, դուն սիրտ մի՛ հատցուներ. ամէն բան ինձի ձգէ՛, ես կը հոգամ։
Տիկինը շուտ մը դրացվույն տունը վազեց եւ անոր գազն բերելով լուսավորեց Աբիսողոմ աղային խուցը։

/ 16 խալսեցա — ազատվեցի /

Դ

Այս լուսավորութեան վրա կէս ժամ չանցաւ, եւ Աբիտողոմ աղային ներկայացաւ երիտասարդ մը, որ վաճառականի չէր նմաներ. սեղանավորի ալ չէր նմաներ, արհեստավորի ալ չէր նմաներ, գործավորի ալ չէր նմաներ, եւ վերջապէս անանկ բանի մը կը նմաներ, որուն նմանը չկա։ Հազիվ երեսուն երկու տարեկան կը թվեր։ Կապույտ աչերով, դեղին մազերով զարդարված ըլլալով՝ ուներ նաեւ երկու մատ մորուք, որ մայրաքաղաքիս մէջ կամ սգո նշան է եւ կամ չքավորութեան։ Հագուստներն այնքան հին էին, որ հնախույզները զանոնք գնելու համար մեծաքանակ գումար մը կուտային։ Սակայն եթէ հագուստի մասին վանողական էր, դէմքի մասին քաշողական զորություն ուներ այս անձը։

— Ծառա եմ մեծապատվութեանդ, մեծապատիվ տէ՛ր,— պոռաց այս երիտասարդն սենյակէն ներս մտնելով եւ մոտենալով Աբիտողոմ աղային։
— Ի՞նչ կա, ի՞նչ կուզէք,— հարցուց Աբիտողոմ աղան վախնալով։

— Վսեմափայլ տէ՛ր, ձեր գալուստն լսելով փութացի հոս գալ, իմ խորին մեծարանացս հավաստին ձեր ոտքերուն տակը դնել։
— Ոտքերո՞ւս տակը. շատ աղէկ, դի՛ր,— ըսավ Աբիտողոմ աղան, որ կը կարծեր, թէ մուճակ[17] բերած էր իրեն։
— Շնորհակալ եմ, բարձրապատիվ տէր,— ըսավ երիտասարդը, գլուխը բացավ եւ սեղանին վրա ելավ, կանգնեցավ։

Աբիտողոմ աղան այս տեսարանին առջեւ բոլորովին շվարած՝ անհամբեր տեսնալ կուզեր, թէ ի՞նչ պիտի ըներ այս պարոնը սեղանին վրա։
Երիտասարդն ծոցէն թուղթ մը հանեց եւ աչերն Աբիտողոմ աղային անկելով՝ բոլոր ձայնովը պոռաց.
— Տիարք եւ տիկնայք...

Աբիտողոմ աղան այս ահարկու ձայնէն վախնալով՝ նստած տեղէն երկու կանգուն վեր ցատկեց եւ չկրնալով ինքզինքը զսպել՝ պոռաց.
— Ո՞վ է այս մարդը, հիմարանոցէն փախած խե՞նդ է, թէ հիմարանոց երթալու հիմար։
— Հայ ազգն,— շարունակեց երիտասարդը ձայնը քիչ մը իջեցնելով,— այսօր այնպիսի հանդէս մը կը կատարէ, որ մեր հայրենեաց ամենէն քաջ դյուցազնին նվիրված է...
— Միտքդ ի՞նչ է, եղբայր...

— Կար ժամանակ մը, ուր խավարը լուսո դէմ կը կռվեր, տգիտությունը գիտութեան դէմ, անցեալն ապառնիին դէմ, հրամայականը սահմանականին դէմ, սուրը գրիչի դէմ, ատելությունը սիրո դէմ, կրակը ջուրին դէմ, միտը բանջարեղենին դէմ. իսկ հիմա անցան այն ժամանակները. անոնք անցեալ են, մենք՝ ապառնի, անոնք խավար են, մենք՝ լույս, անոնք տգէտ են, եւ մենք՝ գիտուն, անոնք սուր են, մենք՝ գրիչ, անոնք ատելություն են, մենք՝ սէր, անոնք կրակ են, մենք՝ ջուր, անոնք միս են, մենք՝ բանջարեղեն, անոնք վարունգ են, մենք՝ խնձոր, անոնք փուշ են, մենք՝ վարդ. անցան, անցան այն դարերը, ուր մարդկությունը տգիտութեան օրորոցին մէջ մէյ մը ատդին, մէյ մը անդին կերթար, կուգար...

— Միտքդ ի՞նչ է, եղբայրս, ես քեզի բան մը չըրի, ի՞նչ կուզես ինծմէ, գնա քեզի բարկացնողին զրուցէ՛ այդ խոսքերը...
— Այո՛, մարդկությունը կը չարչարվեր, կը նախատվեր անգութ բռնավորներու ձեռքէն եւ չէր գիտեր, որու երթալ եւ որու բողոքել։

/ 17 մուճակ — սենեակի մէջ հագնելու չստիկ /

— Տէր ողորմեա... Տէր ողորմեա,— ըսաւ ինքնիրեն Աբիտողոմ աղան,— քաշելիք ունինք եղեր... ես կրնամ հիմա զինքը սեղանէն վար առնել, բայց կը վախնամ, որ ծոցէն ատրճանակ մը կը հանէ եւ կը զարնէ ինծի, վասնզի խիստ բարկութեամբ կը խոսի։

— Իսկ երբ գիտությունն եկաւ,— շարունակեց ատենաբանը,— և վանեց տգիտությունն, ինչպէս լույսն՝ խավարը, սէրն՝ ատելությունը, գրիչն՝ սուրը, ապագան՝ անցեալը, այն ատեն, ա՜հ, այն ատեն... այո՛, այն ատեն, այո՛, կրսեմ, այն ատեն միայն հասկցվեցաւ, որ մարդկություն, ազգ եւ հայրենիք բառերը բառարանները լեցնելու համար շինված բաներ չէին, այլ ամէն մարդու մտքին մէջ, սրտին մէջ, հոգվույն մէջ երկաթեա տառերով եւ անջինջ կերպով դրոշմելու բառեր էին...
— Եղբա՛յր, կաղաչեմ, վար իջի՛ր եւ այնպէս զրուցէ՛ ցավդ...

Ատենաբանը կայնած տեղը այնպէս կը դողար, որ Աբիտողոմ աղային սիրտը կը հատներ, թէ գազը գետինը պիտի իյնար։
Ուստի չուզելով այլեւս համբերել՝ պոռաց ինքնակոչ ատենաբանին երեսն ի վեր.
— Վա՛ր իջիր սրկէ[18]։
— Կաղաչեմ, մի սաստեր զիս։
— Վա՛ր իջիր, ապա թէ ոչ...
— Մի՛ կոտրեր իմ սիրտս, որ ազգին համար կը բաբախէ։
— Ինչ ըսելիք որ ունիս, եկուր քովս, մարդու պէս նստէ եւ ըսէ. հոն տեղվանքը ելնել ի՞նչ պիտի ըլլա։
— Կաղաչեմ, թո՛ղ տուր վերջացնեմ. ա՜հ, չես գիտեր, թէ որչա՛փ կը հուզվիմ, երբ ճառ կկարդամ։
— Վա՛ր իջիր։



/ 18 սրկէ — այստեղից /

Ատենաբանը բեմէն կիջնա եւ կերթա աթոռի մը վրա կը նստի։
— Հիմա՛ զրուցէ ինծի, միտքդ ի՞նչ է,— կըսէ Աբիտողոմ աղան բարկութեամբ։
— Կաղաչեմ, մի բարկանար։
— Ի՞նչ կուզես, զրուցէ, շո՛ւտ, հիմա՛։
— Բարկութեամբ մի՛ վարվիր հետս, ոտքդ պագնեմ, սիրտս լեցված է, հիմա կսկսիմ լալ։

Եվ ատենաբանը կսկսի լալ։
— Լալու ի՞նչ կա, եղբայրս։
— Ծառադ կը փափագի գրականութեամբ ազգին ծառայել, բայց այս ազգը շատ ապերախտութեամբ կը վարվի յուր գրագէտներուն դէմ։
— Ատոր մէջ ես ի՞նչ հանցանք ունիմ։
— Դուք հանցանք չունիք եւ թերեւս իրավունք ունիք... ոտանավոր ունիմ գրած հայրենիքի վրա, աքանչելի կտորներ, պատվական տողեր, որոնց մէջ երևակայությունը, ավյունը, խանդն, հուրն ու բոցը սավառնաթեւ կը պլանան։
— Շատ աղէկ, ատոր համար լալո՞ւ է։
— Մեր ազգն անոնց հարգն ու պատիվը չի ճանչնար, զանոնք աղայական բաներ կը կարծէ եւ թող կուտա, որ զանոնք գրողը անոթի մնա։
— Ես ի՞նչ ընեմ։
— Կաղաչեմ, քաղցրութեամբ վարվէ՛ հետս։
— Ի՞նչ ըրած ունիմ քեզի։
— Ձեզի պիտի աղաչէի, որ...
— Ի՞նչ, շո՛ւտ ըսէ...
— Մի՛ պոռար երեսս ի վար, հոգիդ սիրես, հիմա կսկսիմ լալ...

Նորէն սկսավ լալ գրագէտը։
— Տէր Աստված, դուն համբերություն տուր ինծի,— ըսավ Աբիտողոմ աղան մէկուսի։
— Խնդիրքս սա էր, որ կուզէի տպել տալ քիչ մը առաջ կարդացած ճառս...
— Գնա տպել տո՛ւր. քու ձեռքէդ բռնող կա՞։
— Պիտի խնդրէի ձեր մեծապատվութենէն, որ տպագրութեան ստակը դուք տայիք։
— Ինչո՞ւ... ի՞նչ պատճառ կա, որ քու ճառիդ համար ես դրամ տամ։ Լավա՞ծ բան է, որ մէկը իրեն շահուն համար գիրք տպէ եւ ծախքն Աբիտողոմը տա...
— Կը խնդրեմ, սիրտս արդեն խոցված է, դուք ալ նոր վերք մը մի՛ բանաք հոս։
— Ինչո՞ւ վերք պիտի բանամ եղեր. գնա՛ բանդ, եղբա՛յր, փորձանք եղար գլխուս։
— Գիտէ՞ք՝ որքան ծանր է գրագէտի մը ասանկ խոսքեր լսելը...
— Չեմ գիտեր եւ գիտնալ ալ չեմ ուզեր։
— Բանաստեղծի մը սիրտը շատ փափուկ է, ամենաթեթեւ խոսքէ մը կվիրավորվի։ Այս նյութին վրա ոտանավոր մը գրած ունիմ, կարդամ, մտիկ ըրէ՛ք։

— Ոտանավոր մտիկ ընելու ժամանակ չունիմ։
— Կաղաչեմ, ոտանավորիս հետ խստութեամբ մի՛ վարվիք. այն ոտանավորին համար, զոր դուք չէք ուզեր մտիկ ընել, երկու ամիս աշխատած եմ ես եւ երբ որ անոր նախատվիլը տեսնեմ, արժանապատվությունս կը վիրավորվի։ Կաղաչեմ, ոտանավորիս համար գէշ մի զրուցէք...։ Կը խնդրեմ, թույլ տվէք ինձ կարդալ զայն անգամ մը...
— Ես ոտանավոր մտիկ ընելու չեկա հոս։
— Շատ լավ. ողբերգություն մը գրած եմ, անոր վրայէն անցնինք։
— Չեմ ուզեր. ես անոթի եմ հիմա, կերակուր պիտի ուտեմ։
— Շատ լավ, ուտելիքի վրա ատենաբանություն[19] մը ընեմ։

/ 19 ատենաբանություն — ճառախոսություն /

— Ժամանակ չունիմ մտիկ ընելու։
— Կաղաչեմ, այդ խոսքը ուրիշ անգամ մի՛ ըսեր, ատկէ ավելի ծանր խոսք չկա հեղինակի մը համար, որ յուր մէկ աշխատասիրությունն ուրիշի կարդալու փափագ կը հայտնէ։ Կը խնդրեմ, բարձրապատիվ տէր, քաղցրութեամբ վարվեցէք հեղինակներու հետ։
— Գլխուս վրա՞ նստեցունեմ քեզի։
— Ոտքդ պագնեմ, մի ծաղրէք զիս, ինչո՞ւ ձեր գլխուն վրա նստեցունէք։

— Ի՞նչ ընեմ հապա, քսակս քեզի՞ տամ՝ հեղինակներու հետ քաղցրութեամբ վարված ըլլալու համար։
— Ո՛չ, միայն ճառիս տպագրութեան ծախքը։
— Քան՞ ոսկիով կը լմննա գործդ։
— Չորս ոսկիով կը լմննա, բան մը չէ, իմ Մեկենասս[20] պիտի ըլլաս, ես ալ քու անունդ ոտանավորով մը գրքույկին ճակատը պիտի դնեմ։
— Ճակա՞տը դնես պիտի։
— Այո՛։
— Ինչո՞ւ համար։
— Որպէսզի ամեն մի մարդ գիտնա, թէ ձեր ստակովը տպված է այն գիրքը։
— Շատ լավ,— պատասխանեց Աբիսողոմ աղան եւ քսակէն չորս ոսկի հանեց, տվավ։

Հեղինակն հազար հարգանք մատուցանելով՝ դուրս ելավ։
Աբիսոզոմ աղան ետեւէն կանչեց զինքը եւ հարցուց.
— Չկրնա՞ր ըլլար, որ գրքին ճակատը սպասավորներուս ալ անունները դնես եւ իմացունես ազգին, որ Աբիսողոմ աղան կովեր, ոչխարներ, էշեր եւ ագարակներ ունի յուր քաղաքին մէջ։
— Ադ ձեր ըսածները հովվերգութեան ճյուղին կը վերաբերին։
— Չեմ հասկնար։
— Ատոնց վրա ոտանավորներ կը գրվի. եթէ փափագիք ոտանավոր մը շինեմ։
— Ի՞նչ ընեմ ոտանավորը։
— Լրագրին մը մէջ տպել կուտաք։
— Կը տպե՞ն։
— Ինչո՞ւ չպիտի տպեն. եթէ կէս ոսկի տալու ըլլաք, քառասուն անգամ կը տպեն։
— Շատ աղէկ. ադ ըսածդ գրէ՛։
— Գլխուս վրա։
— Բայց աղվոր բան մը ըլլա։
— Շատ լավ։
— Այնպէս որ տեսնողը հավնի։
— Հարկա՛վ։
— Վաղը առտու կը բերէ՞ք։
— Վաղը առտո՞ւ... ի՞նչ կըսէք... մէկ ամիսէն հազիվ կրնամ պատրաստել։
— Մէ՞կ ամիսէն։
— Հազիվ. ոտանավորը կարդալը դյուրին է, բայց գրելը՝ դժվար։ Գեղեցիկ ոտանավորի մը համար քիչէն քիչ երկու ամիս պէտք է։
— Ի՞նչ կըսէք...
— Այո՛, բայց ես կաշխատիմ ամիսէ մը լմնցնել։
— Ատ ի՞նչ դժվար բան է եղեր։

/ 20 *Մեկենասը (մեռել է 8 թ. Ք. ա) հռոմեական արիստոկրատ, պետական գործիչ եւ գրականագէտ էր։ Հայտնի է գրականութեանը ցույց տված հովանավորությամբ։ Անունը ստացել է համաշխարհային հռչակ եւ դարձել հասարակ անուն ամէն մի ունեւորի համար, որ հովանավորում է գիտությունն ու արվեստը* /

— Ի՞նչ կարծեցիք հապա. երկու ամիս պիտի սպասեմ, որ մուսաս գա եւ ներշնչէ ինծի, որպէսզի գրեմ. առանց մուսայի ոտանավոր չի գրվիր։

— Եթէ այդ մուսան գալու չըլլա՞...։
— Անպատճառ կուգա։
— Չկրնա՞ր ըլլալ, որ նամակ մը գրես եւ աղաչես իրեն, որ շուտ մը գա եւ դուն ալ երկու ամիս չսպասես։

— Անիկա ինքնիրեն կուգա, նամակի պէտք չունի, մեծապատիվ տէր։
— Ո՞ւր կը նստի... շատ հեռո՞ւն է։
— Այո՛, շատ հեռու է, բայց կուգա։
— Ցամաքէ՞ն, թէ ծովէն։
— Չէ՛, մեծապատիվ տէր, չէ՛։
— Ո՞վ է ուրեմն սա գետնին տակն անցնելու մարդը... ուսկի՞ց պիտի գա... ըսէ, որ ճամփա մը մտմտանք ու բերել տանք... Եթէ մէկ երկու ոսկի տանք, այս շաբաթ կուգա՞։
— Այ՛ո, երկու ոսկի տալուդ պէս գործը կը դյուրանա, եւ մուսաս այս շաբաթ վազելով կուգա,— պատասխանեց անմուսա բանաստեղծը ոսկի բառը լսելուն պէս։
— Գրէ՛ ուրեմն իրեն, իմ կողմէս ալ հատուկ բարեւներ ըրէ եւ ըսէ, որ Աբիտողում աղան քեզ տեսնել կուզէ։
— Գլխուս վրա։ Մնայք բարեավ, տէր, շնորհակալ եմ ձեզմէ, ծառա եմ ձեր մեծապատվութեանը եւ կաղաչեմ ընդունիք...
— Ոչ,— ըսավ Աբիտողում աղա բարկութեամբ,— ա՛լ երկար ըրիր, ահա ինչ որ ըսիր, ընդունեցի եւ դեռ ի՞նչ կուզես, որ ընդունիմ...
— Խորին հարգանացս հավաստիքը, տէր... որով մնամ ձեր մեծապատվութեան ամէնախոնարհ ծառա։
— Շատ աղէկ։

Մէկնեցավ բանաստեղծն՝ երկու ոսկիով բերել տալ խոստանալով մուսան, զոր ոմանք ավելի աժան գնով բերել կուտան։ Մուսայի մ՚օրականն հյուսնի մ՚օրականէն ավելի չէ այժմ։

Աբիտողում աղան, ինչպէս գիտեցին ընթերցողներն, կը մոռնար յուր անոթությունն ամէն անգամ, որ մէկն անոր խոսք կուտար անունը լրագրի մէջ անցունելու եւ կամ եկեղեցվո մէջ ծանուցում ընելու, ինչպէս նաեւ յուր քսակին բերանը կը բանար եւ դրամով կը վարձատրեր ամեն անոնք, որ իրեն կը խոստանային անունն ժողովրդեան մէջ տարածելու։

Փառասիրությունն ալ տեսակ մը անոթություն է, զոր դրամով կը կշտացունեն մարդերը։ Լրագիրներու մէջ գրվելու փառասիրությունն, զոր ոմանք մոլություն կը համարեն, եւ ոմանք առաքինութեան կարգը դասել կը փափագին, եւ որ մեր ժողովրդեան ամեն դասերուն մէջ կը գտնվի այսօր, տիրած էր նաև Աբիտողում աղային վրա, որ բանաստեղծին մեկնելէն ետքը փոխանակ յուր անոթութեանը վրա խորհելու՝ սկսավ ոտանավորին վրա միտք հոգնեցունել։

— Արդեո՞ք—, հարցուց ինքնիրեն,— ոտանավորն ուզածիս պէս պիտի ըլլա՞. սա մարդու մուսան քանի մ՚օրէն պիտի գա՞. եւ եթէ չգա, անոր տեղն ուրի՞շ մը բերելու է...։

Այս հարցումներն կուղղեր իրեն, երբ տան տիկինը ներս մտնելով ըսավ.
— Կերակուրը պատրաստ է, հրամմեցէ՛ք, Աբիտողում աղա։

— Ըստ տաճկաց[21] ժամը գիշերուան չորսը զարկած էր։

/ 21 տաճկաց ժամացույցը ելակետ ունի արեւի մայրամուտը, որ երեկոյեան ժամը 12-ն է համարվում /

Ե

Այն խուցն, որուն մէջ Աբիտողոմ աղան ապաշխարանք քաշած էր, ուներ յուր դէմն սենեակ մը, որ խոհանոցի քովն էր եւ որ ճաշի հատկացված էր։ Այս սենեակը մտավ Աբիտողոմ աղան առաջնորդութեամբ տիկնոջ, որ սեղանը պատրաստած էր վերջապէս։
Աբիտողոմ աղան ճաշի սենեակը մտնելով բարեւեց Մանուկ աղան, որ սեղանին շուրջը աթոռներ շարելու զբաղած էր։

— Սանկ հրամմեցէ՛ք, Աբիտողոմ աղա, ըսավ Մանուկ աղան՝ սեղանին վերի կողմը ցույց տալով յուր հյուրին։
— Հրամանքնիդ նստեցէ՛ք, ես ալ կը նստիմ,— պատասխանեց հյուրն՝ նստելով իրեն ցույց տրված տեղը։

— Ներեցէ՛ք կերակուրս այսչափ ուշացնելուս համար, ուրիշ իրիկուններ ձեր ուզած ժամուն կրնաք ուտել. այս գիշեր քանի մը պատճառներ թող չտվին, որ սեղանն ժամանակին պատրաստվեր. այս պատճառները վերջը կպատմեմ ձեզի։ Ի՞նչպէս էք, տեսնենք, Աբիտողոմ աղա, հանգի՞ստ էք,— հարցուց Մանուկ աղան ձայնին աստիճանն իջեցունելով։

— Շատ հանգիստ եմ։
— Շնորհակալ ենք, մեր բարեկամն ի՞նչպէս է Տրապիզոն։
— Աղէկ է, հատկապէս բարեւ ըրավ ձեզի։
— Բերող տանողն ողջ ըլլա։ Եթէ ձեզի գավաթ մը օղի տամ, կը տնկէ՞ք. ախորժակ կը բանա։
— Գավաթ մը միայն կը խմեմ։
— Շատ լավ. հրամմեցէք։

Մանուկ աղան երկնցուց գավաթն Աբիտողոմ աղային, որ ի մի ումպ կլլեց զայն, այսինքն օղին. գավաթը չհասկնաք։
— Անուշ ըլլա, Աբիտողոմ աղա։
— Շնորհակալ եմ։
— Ձեր կենդանութեանը։
— Ողջ եղէ՛ք։

Մանուկ աղան օղին ջրով բարեխառնելէն ետքը խմեց զայն ի չորս ումպ։
— Տիկինը մինչեւ որ կերակուրներն տաքցունէ եւ բերէ, մենք կրնանք խոսիլ եւ ժամանակ անցունել, այնպէս չէ՞, Աբիտողոմ աղա։
— Այո,— պատասխանեց հյուրն այնպիսի եղանակով մը, որ կը հասկուցներ, թէ ավելի լավ էր նախ կերակուր ուտել եւ ապա խոսիլ։

— Մտիկ արեք ուրեմն այսօր մեր գլուխն եկածները։ Քանի մը շաբաթէ վեր թաղականի մը ընտրութեան ետեւէ ինկած ենք։ Դուք հիմա ձեր մտքէն պիտի ըսեք, թէ՝ մարդ, թաղականը քուկին ինչո՞ւդ է պէտք։ Անանկ չէ, Աբիտողոմ աղա, ազգին գործը ես չնայիմ, դուն չնայիս, ան չնայի, ո՞վ նայէ ուրեմն. ինչուս պէտքը շատ գէշ բան է, անով ամէն մարդ մէկդի կը քաշվի, եւ ազգին գործերն ալ երեսի վրա կը մնան։ Իմ գիտցածս՝ ամէն մարդ ձեռքէն եկածին չափ ազգին գործերուն ալ աշխատելու է։ Հատ մ՚ալ կը խմէ՞ք, Աբիտողոմ աղա, ախորժակ կը բանա։
— Սովորություն չունիմ մէկ գավաթէն ավելի խմելու։
— Մեր գավաթներն պզտիկ են, մանավանդ թէ Պոլտ օղն ալ կը վերցունէ։
— Շատ լավ։
Երկու բարեկամներ մէյմէկ գավաթ եւս խմեցին իրարու կենդանութեանը, եւ Մանուկ աղան սկսավ ատէնաբանութեան։
— Այս առտու,— ըսավ,— մեր թաղէն ազգային զբոսարանը գացած ժամանակս, ձեզմէ աղէկ չըլլա, մեր բարեկամներէն Մելքոն աղային հանդիպեցա։ Այս Մելքոն աղան նախ Բարթողիմեոս աղային աղջիկը առած էր։

Բարթողիմեոս աղան ալ ժամանակավ մատով կը ցցունեն[22] եղեր, իրբեւ բարի մարդ, հյուրասէր մարդ, ազգասէր եւ բարեպաշտ մարդ, եւ շուկային մէջ շատ խանութներ ուներ, որոնցմէ տարին բավական եկամուտ կառներ։ Քանի մը տարիէն Մելքոն աղային կինը մեռավ, եւ Մելքոն աղան համեստագործ Նիկողոսին աղջկանը հետ կարգվեցավ։ Այս աղջիկն քանի մը եղբայներ ունի, որոնց մին Ամբակում աղային քով գրագրություն կընէ։ Այս Ամբակում աղան ալ տղա մը ուներ, որ թուղթ խաղալով հորը շատ ստակը կերավ եւ վերջէն Ռուսաստան փախավ։ Այս աղան Մարգար եպիսկոպոսին քրոջն թոռան եղբորորդին էր։ Մյուս եղբայրը շուկայի մէջ ոսկերիչ է. բարձր հասակով, սիրուն մարդ մ՚է։ Երրորդ եղբայրը ատենոք շատ պարապ պատեցավ, խեղճութեան մէջ ինկավ, անոթութենէ պիտի մեռներ, վերջէն թաղական անդամ ընտրվեցավ եւ մէկ երկու տարիէն ինքզինքը ժողվեց։ Չերկնցնեմ խոսքս, Մելքոն աղան այդ Նիկողոս աղային աղջիկն առնելէն ետքը քանի մը տարիներ շատ հանգիստ կեանք վարեց, բայց վերջէն բախտը դարձավ, ձախորդություն ձախորդութեան վրա եկավ, եւ ունեցած չունեցածը բոլորովին կորսնցուց։ Օր մը առնեմ զինքը, հոս բերեմ, եւ տեսնեք, թէ ինչ բարի մարդ է։ Եղբայր մ՚ալ ունի, որ վարպետ ժամագործ մ՚է, ատենոք Պէյոուք Տէրէ[23] կը նստեր, վերջը քանի մը տարիներ Իսկյուտար[24] նստավ, ետքէն Գում Գաբուն[25] երթալով՝ հոն ալ չկրցավ նստիլ, եւ հիմա չեմ գիտեր, ուր կը նստի։ Բայց շատ վարպետ ժամագործ է։ Թորոս աղան, որ եւ ոչ մէկ ժամագործի կը հանձնէ յուր ժամացույցն, անոր կուտա, որ մաքրէ։ Այս Թորոս աղան կը ճանչնա՞ք. ուրիշ տեսակ մարդ է. անոր մէկ պատմությունը ընեմ քեզի եւ մտիկ ըրէ, որ տեսնես, թէ աշխարհիս վրա ասանկ մարդ կը գտնվի եղեր, որ...

— Բերե՞մ ապուրը,— հարցուց տիկինը սենեակին դռնէն ներս երկնցնելով գլուխը։
— Քիչ մը համբերէ, տիկին, խոսքս լմնցունեմ, վերջը բեր։ Այնպէս չէ՞, Աբիսողոմ աղա, խոսք պէտք է յա՛։ Եթէ մտիկ ընելու ժամանակ չունիք եւ գլուխնիդ կը ցավցունեմ կոր, ըսե՛ք։
— Ատ ինչ խոսք է... բա...

Աբիսողոմ աղան չկրցավ շարունակել յուր խոսքը, զոր ընդմիջեց Մանուկ աղան Թորոս աղային պատմութեանն սկսելով։

— Այս Թորոս աղան,— շարունակից,— մուշտակագործ մ՚է, ականջը խոսի, եւ յուր ընտանիքովը հանգիստ կեանք մը կը վարէ։ Յուր տանը պէտք եղած պարենը, կարասիքս եւ հանդերձեղեն յուր ձեռքովը կառնէ եւ իրմէ զատ եւ ոչ մեկու մը վստահություն ունի, ականջը խոսի։ Մսավաճառէն միս կառնէ, տուն երթալուն պէս կը կշռէ զայն, եւ անպատճառ քանի մը տրամ պակաս կը գտնէ միսը, մսավաճառին կերթա, հետը կռվի կը բռնվի եւ քանի մը տրամ պակաս արված միսը կառնէ տուն կը դառնա։ Ասանկ տարօրինակ մարդ մ՚է. ականջը խոսի։ Օր մը այս Թորոս աղան, ականջը խոսի, ժամացույցին փոշիները մաքրել տալու համար ժամագործի մը կերթա եւ հետը սակարկութեան սկսելով՝ վերջապէս տասն եւ հինգ դահեկան կը հավանի տալ, այն պայմանով, որ ժամագործն յուր առջեւը մաքրէ ժամացույցը, վասնզի Թորոս աղան, ականջը խոսի, ինչպէս ըսի, եւ ոչ մէկու մը վստահություն ունենալով՝ չէր ուզեր իր ժամացույցն ժամագործին հանձնել եւ երթալ՝ վախնալով, որ ժամացույցին մէջէն բան մը կը գողցվի, կամ ժամագործը դիտմամբ կավրէ ժամացույցն՝ մեծ ծախք մը բանալու համար, ինչպէս որ կընեն շատ մը ժամագործներ, երբ քանի մը օր անգործ մնան։ Ժամագործն յուր պատվույն դէմ անարգանք կը համարի Թորոս աղային առաջարկությունն եւ կը բարկանա։ Եթէ դուն ըլլայիր ժամագործին տեղ չէ՞իր բարկանար։

— Կը բարկանայի,— պատասխանեց Աբիսողոմ աղան, որ խելքն ու միտքը ապուրի ղրկած ըլլալով՝ բնավ ականջ չէր կախեր Մանուկ աղային ըրած պատմութեանը։

/ 22 մատով կը ցցունեն — ցույց են տալիս
23 Պէյոուք Տէրէն— Պոլսի արվարձաններից մէկն է՝ եվրոպական մասում
24 Իսկյուտար — Պոլսի արվարձաններից մէկն է, գտնվում է Բոսֆորի ասիական ափին
25 Գում Գաբուն — Պոլսի քաղաքամասերից մէկն է, Մարմարա ծովի եզերքին /

— Թորոս աղան, ականջը խոսի, կրակ կը կտրի ժամագործին բարկանալուն վրա եւ քանի մը ծանր խոսքեր կընէ իրեն, որ ընելու չէր. այնպէս չէ՞։
— Այնպէս է,— պատասխանեց դարձեալ Աբիսողոմ աղան մեքենաբար՝ միշտ հավանութեան պատասխաններ տալով իրեն եղած հարցումներուն, որպէսզի խոսքը չերկարի, եւ կերակուրը բերեն։
— Ժամագործը կը վռնտէ Թորոս աղան, ականջը խոսի. Թորոս աղան ալ, ականջը խոսի, խանութէն դուրս ելնել չուզեր՝ վռնտվիլն իրեն պզտիկություն համարելով. դուն ալ ըլլա՛ս, չես ելլա՞ր ա՛։
— Չեմ ելլար ա՛,— պատասխանեց Աբիսողոմ աղան, որ չէր գիտեր, թէ ուս կից չէր ելլար եւ ինչո՛ւ չէր ելլար. վասնզի, ինչպէս ըսինք, Թորոս աղային ըրած պատմութեան եւ ոչ մէկ բառը յուր ականջը մտած էր. միայն հարցումներու կը պատասխաներ։



— Ծեծկըվուքը կսկսի. ժամագործն ապտակ մը կը զարկէ Թորոս աղային. ականջը խոսի, Թորոս աղան, ականջը խոսի, կից[26] մը կուտա ժամագործին. կարծեմ, ով ալ ըլլար Թորոս աղային տեղը, ուրիշ կերպով չպիտի կրնար պատասխանել ժամագործին ապտակին։ Ոտքդ պագնեմ, Աբիսողոմ աղա, ըսէ՛, այնպէս չէ՞։
— Դուք ալ հոս դոմադեսո՞վ[27] կը շինէք,— հարցուց մէկէն ի մէկ Աբիսողոմ աղան։
— Դոմադեսո՞վ։
— Այո՛, ուրիշ տեղեր դոմադեսով կը շինեն եղեր։
— Ժամացո՞ւյցը։
— Ո՞ր ժամացույցը։
— Թորոս աղային ժամացույցը։
— Թորոս աղան ո՞վ է։
— Մտիկ չըրի՞ր ուրեմն ըրած պատմությունս։
— Ըրի, կատարեալ մտիկ ըրի,— ըսավ Աբիսողոմ աղան, որ յուր դոմադեսի հարցումովն հաստատեց, թէ միտքն ապուրի, ապուրէն դոմադեսի, դոմադեսէն Պոլսո մէջ բրինձի ապուրին ինչպէս շինվելուն գնացած էր, եւ բնավ ունկն չէր դրած Մանուկ աղային խոսքերուն։

Աբիսողոմ աղան շատ իրավունք ուներ յուր տան տիրոջ երկարաձիգ ճառն մտիկ չընելու, մանավանդ անոթի փորով։

/ 26 կից — քացի
27 դոմադես — լոլիկ /

Աշխարհիս վրա կան մարդեր, որք կը կարծեն, թէ իրավունք ունին մէկու մը քթէն բռնել եւ ժամերով անոր գլուխը ցավցունել։ Ուրիշներ ալ կան, որ իրենց խոսքերը մտիկ անել տալու համար մարդ կը փնտրեն եւ եթէ չգտնեն, պատրաստ են հոժարակամ օրական վարձ մ՚ալ տալ. ոմանք ալ ամսականով ունկնդիր կը փնտրեն։ Շատ անգամ ինծի ալ պատահած է այս փորձանքը, եւ ես մտիկ ընել ձևացունելով՝ իմ գործիս վրա խորհած եմ. հավանութեան պատասխաններ տալով ինծի եղած հարցումներուն՝ այնպէս է պատասխանած եմ, եթէ այնպէս է հարցվեր ինծի. արդարությունն ալ այս է պատասխան տված եմ, երբ արդարությունն ալ այս չէ՞ հարցումն ուղղվեր ինծի. իրավունք ունիս ըսած եմ, երբ իրավունք չունի՞մ հարցումն եղած է, որպէսզի խոսքը կարճ կապվի։

Դժբախտությունն հոն է, որ գլուխդ ցավցնողն երբեմն այնպիսի հարցում մը կընէ, որուն պատասխանելը դժվար է, վասնզի վճիռ տալը քեզի կը թողու։ Օրինակի համար, լմնցնելէն[28] ետքը ճառն, զոր դու բնավ մտիկ ըրած չես կը հարցունէ քեզի.
— Մարկոս աղա՞ն իրավունք ունի, թէ Կիրակոս աղան։

Ի՞նչ պատասխանելու է. գործին վրա բնավ տեղեկություն չունիս. որո՞ւն տալու է իրավունքը. մանավանդ գիտնալու է, թէ իրավունքն որու պետք է տալ, որպէսզի գլուխդ ցավցունողին սիրտը չցավի։ Ասոր ալ ես դյուրին ճանփան գտած եմ եւ հետեւեալ պատասխանները կուտամ.
— Գործն անուշութեամբ լմնցնելու է։
— Այո, բայց իրավունքը որո՞ւ քովն է։

— Ի՞նչ օգուտ... գէշ մարդու հետ գլուխ չելնըվիր։
— Այո՛, բայց կաղաչեմ ըսէ՛, երկուքէն ո՞րն իրավունք ունի։
— Ինչո՞ւ կստիպես, որ ըսեմ, եղբա՛յր, երկու անգամ երկու չորսի պէս հայտնի է իրավունքին ուր ըլլալը։

Շատերն այս պատասխաններովս գոհացուցած եմ. բայց ոմանք ալ կան, որ կարծես զքեզ ոստիկանութեան պիտի հանձնեն եթէ չըսես, թէ Մարկոսն իրավունք ունի, իսկ Կիրակոսն անիրավ է։ Ասոնց ա՛լ ձեռքէն խալսելու համար՝ ստիպողական գործ մ՚ունիմ՝ ըսելով առեր, քալեր եմ։ Իսկ վերջերս տեսնելով, թէ այս ընթացքս կը քաջալերէ շատախոսները, քաղաքավարությունը մէկդի դնելով՝ օր մը անոնցմէ մեկուն ըսի.

— Պարոն, զքեզ երկու ժամ մտիկ ընելու համար երկու ոսկի կուզեմ. երկու ոսկիէն լումա[29] մը պակաս եթէ տաս, չեմ ընդունիր։

Մարդը կէս ոսկի տվավ, իսկ ես չընդունեցի եւ օձիքս խալսեցի։ Այս օրերս կը լսեմ, որ այդ մարդը քառորդ ոսկիի երկու ունկնդիր եւս վարձած է։ Երանի «Մասիսին», որ յուր ունկնդիրներուն ստակ տալու տեղ անոնցմէ ստակ կառնէ։

Աբիսողոմ աղան ինծի պէս չվարվեցավ եւ, ինչպէս հայտնի է, երբ դոմադեսի հարցապնդումով զգալ տվավ ատենաբանին, թէ յուր ճառն բնավ մտիկ ըրած չէր, յուր անքաղաքավարությունն անմիջապէս դարմանելու համար ըսավ.
— Կատարեալ մտիկ ըրի։

Աղէ՞կ ըրավ։ Հայտնի է, որ գէշ ըրավ, եթէ ես յուր տեղն ըլլայի, պարզապէս կըսէի Մանուկ աղային.
«Մանուկ աղա, ինձի նայէ՛, եղբայրս, երբ որ մէկը խոսիլ կսկսի, խղճմտանքը մէկդի դնելու չէ։ Ութը ժամէ ի վեր անոթի եմ ես եւ բնավ պէտք չունիմ գիտնալ, թէ Մարտիրոս աղան որուն տղան է, թէ Գևորգ աղան որու հայրն է, թէ ժամագործը Թորոս աղային ապտակ հաներ է, թէ Թորոս աղան ալ ժամագործին կից տվեր է։

/ 28 լմնցնել — վերջացնել
29 լումա — մանրադրամ /

Այսպէս կը խոսէի բացէ ի բաց, ոչ թէ միայն ընկերութեան մը մէջ գլուխ ցավցնողին, այլ նոյն իսկ այն վարդապետներուն, որ շատ խոսելու նպատակավ միայն չորս ժամ քարոզ կուտան եւ կը վիրավորվին, եթէ ժողովրդեն մէկը քարոզի ժամանակ եկեղեցիէն դուրս ելնէ։ Եվ արդեն ըսած եմ օր մը եպիսկոպոսի մը, որ հինգ ժամ քարոզ խոսելէն ետքը եկեղեցէէն դուրս ելած էր եւ խուցը կերթար։

— Ո՞ւր կերթաք, տրբազան,– հարցուցի։
— Շատ քրտնած ըլլալով խուցս պիտի երթամ եւ լաթ[30] պիտի փոխեմ։
— Դուք ո՞ւր կերթաք,– հարցուց ինծի։
— Ես ալ տուն կերթամ լաթ փոխելու համար,— պատասխանեցի իրեն։ Եվ այն օրէն ի վեր եպիսկոպոսն կարճ կը խոսի քարոզի մէջ։

Աբիսողոմ աղան չունեցավ այս համարձակությունը եւ խրախույս տվավ Մանուկ աղային, որ շարունակէ յուր ճառը դոմադեսական հարցման պատասխանելէն ետքը։

— Դոմադեսը հոս կը գործածենք ապուրի մէջ, բիլավի[31] մէջ եւ ուրիշ մսեղէն քանի մը կերակուրներու մէջ, բայց բնավ երբէք ժամացույցի մէջ։
— Շնորհակալ եմ. ապուրի մէջ կը գործածվի ըսել է ես ալ ատ գիտնալ կը փափագէի։
— Ապուրը դոմադես՞ով կը սիրեք, թէ ոչ։
— Դոմադեսով կը սիրեմ։
— Շատ աղէկ։ Դառնանք հիմա մեր խոսքին... ո՞ւր մնացինք... հա՛, Թորոս աղային վրա էր։ Տարօրինակ մարդ մ’է աս Թորոս աղան, ականջը խոսի, շատ պատմություններ ունի. ուրիշ գիշեր մը զանոնք կը պատմեմ, եւ ժամանակ կանցունենք։ Երկար չընենք, աս առտու հանդիպեցա Մելքոն աղային...

— Բերի, որ տաք-տաք ուտենք,— ըսավ տիկինը ներս մտնելով եւ ապուրը բերելով։
— Այո՛, այո՛, ուտենք, վասն զի շատ անոթի եմ,— ըսավ Աբիսողոմ աղան։
— Հրամմեցէ՛ք...
— Շնորհակալ եմ,— ըսավ Աբիսողոմ աղան եւ գդալը բերանը տանելու մնաց, մէկէն ի մէկ վեր ցատկեց ։
— Կարծեմ թէ շատ տաք էր, ներեցէ՛ք, Աբիսողոմ աղա,— ըսավ տիկինը։
— Քիչ մը ջուր առ բերանդ, Աբիսողոմ աղա,— ավելցուց Մանուկ աղան։
— Վնաս չունի, վնաս չունի...
— Տիկի՛ն, ինչո՞ւ համար ուշադրություն չէք ըներ կերակուրներու տաքութեանը կամ պաղութեանը,– ըսավ էրիկն կնոջը։
— Ա՛լ այս գիշեր մեր պակասություններուն աչք գոցելու է Աբիսողոմ աղան։
— Վնաս չունի, բան մը չէ։
— Ապուրը մինչեւ որ պաղի, այս օրվան դէպքը պատմեմ գոնէ,– ըսավ Մանուկ աղան։
— Մանո՛ւկ աղա, Աբիսողոմ աղային գլուխ մի ցավցուներ այս գիշեր. թերեւս չախորժիր։
— Ժամանակ անցունելու համար պիտի խոսէի, որ զբոսնու եւ չնեղվի։
— Ուրիշ գիշերվան թող. այս գիշեր հոգնած-հոգնած կրնա՞ քեզի մտիկ ընել։

/ 30 լաթ — շոր, ներքնաշոր
31 բիլավի — փլավ /

— Կարծեմ թէ Աբիտողոմ աղան սիրով մտիկ կընէ ազգային գործերը եւ բնաւ ձանձրություն չզգար։
— Այո՛, սիրով մտիկ կընեմ,— պատասխանեց հյուրը,— բայց տիկինին ըսածին պէս վաղը գիշերվան թողունք, վասնզի այսօր շատ հոգնած եմ։
— Շատ լաւ, շատ լաւ, ինչպէս որ կուզէք, այնպէս ըլլա. բայց մեր թաղին թաղականին գործը շատ զվարճալի է։ Մելքոն աղան եթէ հոս ըլլար եւ պատմեր, խնդալէն կը ճաթէինք։
— Ապուրը պաղեցաւ, հրամմեցէ՛ք,— ըսաւ տիկինը։

Աբիտողոմ աղան այս հրաւերն առնելուն պէս՝ գդալով ապուրին վրա հարձակեցաւ։
— Օղի մ՚ալ կը խմէ՞ք, Աբիտողոմ աղա։
— Շնորհակալ եմ, չեմ ուզեր։
— Տիկին, Աբիտողոմ աղային գինի լեցուր։
— Մանուկ աղա, այս գիշեր այլանդակ խոսքեր կընես, ապուրի վրա գինի կը խմվի՞։
— Ինչո՞ւ չխմվիր, տեսնենք պիտի հավնի՞ մեր գինիին։

Տիկինը դուրս ելաւ եւ խաշած միս բերելով սեղանին վրա դրաւ։
Աբիտողոմ աղան այնպիսի ախորժակով մը կուտեր, որ մսի կտորները առանց ծամելու կը կլլեր։
— Փառք քեզ, Աստվա՛ծ, այս գիշեր ալ կշտացանք,— ըսաւ Աբիտողոմ աղան փորն քահանայի մը պէս լեցնելէն ետքը եւ երեսը խաչակնքելով ու ցած ձայնով Հայր մերն ըսելով՝ սեղանէն ելաւ եւ լվացվելու համար ջուր փնտրեց։
— Կերակուրէն վերջը կը լվացվի՞ք,— հարցուց տիկինը հյուրին։
— Եթէ ջուր ըլլար...
— Մենք սովորություն չունինք, բայց ձեզի քիչ մը ջուր բերեմ եւ լվացվեցէք։

Աբիտողոմ աղան լվացվեցաւ եւ ձեռները չորցնելու ատեն հարցուց տիկինին, թէ որ սենեակին մէջ պիտի պառկեր։

Տիկինը ճրագով երկրորդ հարկը սենեակ մը առաջնորդեց հյուրին եւ վար իջաւ։

Այս պառկելու սենեակն փոքր էր, եւ անոր ճիշդ չափը տված կըլլանք, եթէ ըսենք, որ Աբիտողոմ աղային հասակին երկայնությունն ուներ։ Անկողինը շինված էր այն միակ պատուհանին առջեւ, որ փողոցի վրա բացված էր։ Աթոռ մը, քառակուսի պզտիկ սեղան մը, փոքրիկ հայելի մը, ջուրի շիշ մը եւ գավաթ մը, սանտր մը, վրձին մը այս սենյակին կարասիքը կը կազմէին։

Աբիտողոմ աղան սենյակէն ներս մտնելուն պէս ձեռներն բացաւ եւ նորեն փառք տվաւ Աստուծո, որ վերջապէս խալսեցաւ փորձանքներէն եւ առանձին մնաց։ Բանտէն արձակվող մը չէր կարող ավելի ուրախություն զգալ։ Փառաբանությունն ավարտելուն պէս հանվեցաւ եւ ինքզինքն անկողնո մէջ նետեց։

— Ասկեց ետքը ընելիքս գիտեմ,— ըսաւ անկողնո մէջ,— եւ ոչ մէկու հետ պիտի տեսնվիմ, վասնզի ես այս պոլսեցիները շատ չսիրեցի, ատոնք կամ դրամդ առնելու կը նային կոր կամ երկու ժամ գլուխդ ցավցունելու։ Ինչո՞ւս պէտք իմին. ես եկած եմ հոս կին մ՚առնելու եւ երթալու. որուն աղջիկն որ սիրեմ՝ կուզեմ. եթէ տան՝ կառնեմ, գործս կերթամ, եւ եթէ չտան, եթէ չտան... բայց ինչո՞ւ չտան... ինձմէ աղեկի՞ն պիտի տան... Եթէ վաղը սա լրագիրն իմ անունս ալ փառավորապէս գրէ, այն ատեն շատերն պիտի աղաչեն ինձի, որ իրենց աղջիկն առնեմ... Մէկէն ավելին ի՞նչ պիտի ընեմ... անոնց մեջէն պարկեշտ աղջիկ մը կը զատեմ... խոսկապը[32] կընեմ... նշան կուտամ... կը կարգվիմ...

Այս որոշումները տալով կը քնանա Աբիտողոմ աղան։

/ 32 խոսկապ — նշանդրէքից առաջ համաձայնություն /

Աբիսողոմ աղան աղվոր քուն մը քաշեց նույն գիշերը, վասնզի շատ հոգնած էր եւ թերեւս հետեւյալ օրն ալ չէր բանար աչերն, եթէ փողոցի վաճառականներն առավոտուն իրենց ահարկու ձայներովն չխռովէին անոր քունը, մահվան այդ կտորնն, որ ոչ միայն հոգնած մարդերու հանգստարանն է, այլեւ շատ մշտնջենական ցավերու առժամանակեա դարմանն է: Երանի՜ անոնց, որ կը քնանան եւ ուշ կարթննան կամ բնավ չեն արթննար, վասնզի անոնք բնավ չեն զգար կամ գոնէ քիչ կզգան այն ցավերն, որք հալ ու մաշ կընեն մարդս:

Բայց Պոլտ մէջ քնանալու ազատություն ալ չկա. գիշերները պահապաններն այնքան ուժով գետին կը զարնեն իրենց փայտերն, եւ առավոտուն փողոցի վաճառականներն այնքան բարձր ձայնով կեղանակեն իրենց ապրանքներն, որ քունն կը շվարի, կը մնա, թէ ո՛ր կողմ փախչի: Եթէ վերջին դատաստանին օրը Գաբրիէլ հրեշտակապէտը չհաջողի յուր փողովն մեռեալներն արթնցնել, ես պիտի առաջարկեմ, որ այդ պաշտոնը Պոլտ փողոցի վաճառականներուն կամ գիշերային պահապաններուն հանձնվի:

Աբիսողոմ աղան ալ, որ փողոցի վրա սենեակի մը մէջ կը պառկեր, ստիպվեցավ կանուխ արթննալ: Աչերը բանալուն պէս անկողինէն ելավ, սնդուկը բացավ եւ ճերմակեղենները փոխեց, հետո լվացվեցավ եւ հագվեցավ:

Տան տիկինն, որ իմացած էր հյուրին ելած ըլլալն, վեր ելավ եւ զարդարուն սենեակ մը հրամցնելով զայն՝ իմաց տվավ, թէ մէկն կապասեր վարը եւ զինքը տեսնել կուզեր:
— Թո՛ղ հրամմէ,— ըսավ Աբիսողոմ աղան:
— Շատ լավ, կաղաչեմ, ըսէ՛ք ինծի. խահվէն կաթո՞վ կը խմէք, թէ առանց կաթի:
— Կաթ կը խմեմ առանց խահվէի:
— Կաթ բերեմ ուրեմն:
— Այո՛, կաթ բերէ՛ք: Տիկինը վար գնաց:

— Տեսնենք ո՞վ է աս մարդը,— ըսավ ինքնիրեն խոշոր մարդը,– թերեւս աղջիկ ունի կարգելու եւ իմ Պոլիս գալս իմանալով՝ առավոտուն կանուխ հետս խոսելու եկած է: Բայց ես մինչեւ որ չստուգեմ աղջկան ինչ բնութեան տէր ըլլալը, խոսք չեմ տար. նախ ամէն բան հասկնալու եմ, աղջիկը քննելու եմ, վերջէն հորս հարցնելու եմ. վասնզի իմ սիրելս բավական չէ, պետք է որ հայրս ալ սիրէ իմ կինս. ոչ թէ միայն հայրս, այլ ամեն մարդ հավնելու է...

— Բարեւ, վսեմափայլ տէր,— ըսավ երեսնամեա եւ վառվռուն երիտասարդ մը սենեակ մտնելով եւ արագաքայլ Աբիսողոմ աղային վազելով՝ անոր ձեռները տրմելու համար:

Աբիսողոմ աղան տեղէն ելավ եւ ձեռները հանձնեց այդ երիտասարդին, որ ուզածին պէս տրմէ եւ թոթվէ[33] զանոնք՝ հազար ու մէկ հարգանքներ մատուցանելով:

— Նստեցէ՛ք, Աբիսողոմ աղա՛, կաղաչեմ, չվայլեր, որ ոտքի ելնէք,— ըսավ երիտասարդն՝ տիրոջը դարձնելով իրեն հանձնված ձեռներն եւ կոտրտվելով ետ ետ գնաց, թիկնաթոռի մը վրա նստավ:

Աբիսողոմ աղան բազմոցին վրա բազմեցավ:
— Արդարեւ մեր պարտքն էր երեկ գալ եւ ձեր գալուստը շնորհավորել, բայց ուշ իմացանք ձեր գալն. ատոր համար հատկապէս ձեր ներողությունը կը խնդրենք,— ըսավ երիտասարդն ձեռներն իրարու շփելով:

— Այսօր գալով պակասություն մ՚ըրած չէք ըլլար, որ ներողություն խնդրեք :

/ 33 թոթվել — թափ տալ /

— Ձեր քաղաքավարությունն է, որ այնպէս խոսել կուտա ձեզի, բայց մենք մեր պակասությունը միշտ կը ճանչնանք։ Արդարեւ մեծ պակասություն մ՚է մեր ըրածը. ձեզի պէս երեւելի մարդ մը մայրաքաղաքս գա, եւ պատկերահան մը անմիջապէս բարի եկարի չերթա, պակասություններու պակասությունն է, որ եւ ոչ մէկ կերպով մը կրնա պակասություն ըլլալէ դադրիլ։

— Ամենեւին պակասություն մը չէ, եթէ բնավ չգայիք, դարձեալ պակասություն մը չէր համարվեր ինձի համար։
— Շատ վեհանձն էք։
— Ամենեւին վեհանձն չեմ։

— Թող այնպէս ըլլա, ատոր համար հիմա վիճաբանութեան մտնելու հարկ չեմ տեսներ. միայն ինքզինքս ձեր տրամադրութեան տակ կը դնեմ եւ ձեր հրամաններուն կապասեմ, եթէ կուզէք, հոս քաշել[34] տվէք, եթէ կը փափագիք, մեր գրասենեակը պատվել հաճեցէք, եւ հոն հանենք. ինձի համար միևնույն բանն է դուք ինչպէս որ կախորժէք, այնպէս ընելու պատրաստ եմ։

— Ի՞նչ պիտի քաշել տանք... իմ ակռաներրս աղէկ են։
— Գիտեմ, որ ակռաներդ աղեկ են, ինչպէս նաեւ դուք ալ աղեկ էք. ես կը փափագիմ ձեր լուսանկար պատկերը քաշել։

— Ես մինչեւ հիմա պատկերս բնավ քաշել տված չունիմ եւ քաշել տալու հարկ մ՚ալ չեմ տեսներ, վասնզի ամեն օր հայելի կը նայիմ եւ ինքզինքս կը տեսնեմ։
— Եթէ ձեր պատկերը մէկու մը ղրկելու ուզէք, հայելին կրնա՞ք ղրկել, Աբիտողում աղա։
— Հայելին ինչո՞ւ ղրկեմ, ես կերթամ։

— Շատ աղէկ կը խոսիք, բայց ես մինչեւ որ ձեր պատկերը չհանեմ, չեմ կրնար հանգիստ ըլլալ. ինձի համար պզտիկություն մ՚է ձեր պատկերը չհանելը, թող որ ձեզի համար ալ այնպէս է։
— Ինչո՞ւ։
— Լսված բա՞ն է, որ ձեզի պէս երևելի մարդ մը Պոլիս գա եւ պատկերը քաշել չտա. աշխարհի պարտ աստ ձեր վրա պիտի խնդացնէ՞ք։
— Ինչո՞ւ։

— Պատճառը հայտնի է, մեծ մարդերը բնականաբար մեծ բարեկամներ կունենան. դուք մեծ մարդ մ՚էք եւ այսօր կամ վաղը պիտի սկսէք մեծ մարդերու այցելություններն ընդունել։ Ատոնցմէ շատերն իրենց պատկերներն մէյմէկ հատ պիտի նվիրեն ձեզի, եւ դուք ալ պիտի ստիպվէք ձերինէն մէյմէկ հատ տալ ատոնց։
— Եվ եթէ չտամ, կը խնդա՞ն իմ վրա։

— Խնդալն ալ խո՞սք է, ընկերություններու մէջ մատի վրա կառնեն քեզի։
— Զարմանալի բան...
— Լսված բա՞ն է, որ ձեզի պէս ազնվական մը պատկերը հանել չտա. մեծ ամոթ է...
— Մե՞ծ ամոթ...
— Այո, շատ մեծ ամոթ է. անվարտի[35] պտտիլն այնքան ամոթ չէ, որքան իրեն պատկերն չունենալը։
— Ես չէի գիտեր։

/ 34 քաշել — այստեղ՝ լուսանկարել
35 անվարտի — առանց վարտիքի /

— Քաղաքակրթությունը եւ լուսավորությունը պարտք կը դնեն մեր ամենուս վրա, որ մեր պատկերներն ունենանք։
— Լրագիրները պիտի գրե՞ն, որ Աբիտողոմ աղան յուր պատկերը քաշել տված է։
— Լրագիրներու վերաբերեալ խնդիր մը չէ աս...
— Ըսել է թէ եկեղեցիներու մէջ ծանուցում ալ չպիտի ըլլա։
— Ծանուցումի ի՞նչ հարկ կա, Աբիտողոմ աղա, կը ծաղրե՞ք զիս ։

— Ծաղրե՞լ, ատոր շատ դէմ եմ ես... ի՞նչ իրավունք ունիմ ուրիշ մը ծաղրելու...
— Մի՛ բարկանաք...
— Չէ, կը բարկանամ, ես բնավորություն մը ունիմ, որ ամէն բան շիտակ կուզեմ։
— Շատ լավ. ի՞նչ դիրքով հանել կուզէք ձեր պատկերը։
— Միտք չունիմ պատկերս քաշել տալու, վասնզի անօգուտ բան մը կերեւա ինձի։

— Ի՞նչ կըսեք, ասկից ավելի օգտակար ի՞նչ կա. եթէ ձեր բարեկամներէն մէկուն այցելություն մը տալ ուզէք եւ ժամանակ չունենաք, ձեր մէկ պատկերը կը դրկէք, կը լմննա, կերթա։ Եթէ կարգված էք, ձեր ամուսնուն կը դրկէք, որ ձեր բացակայութեանն ատեն անոր վրա նայելով կարոտը կառնէ. եթէ ամուսնացած չէք, շատ աղջիկներ ձեր պատկերը կը տեսնեն եւ ձեր ով ըլլալը կը հասկնան, որով ընկերություններու մէջ ձեր անունը կը խոսվի։ Լուսանկար պատկեր մը այս օրվան օրս հացէն ավելի պէտք է մարդուս. կաղաչեմ, որ համոզվիք, եւ ժամ առաջ երթանք ձեր պատկերը քաշենք։
— Աղջիկներն ի՞նչպէս եւ ո՞ւր պիտի տեսնեն իմ պատկերս...

— Չէ՞ որ ձեր բարեկամներուն պիտի տաք, անոնք ալ իրենց տունը պատկերներու հատուկ գիրքի մը մէջ պիտի անցունեն եւ ամենուն պիտի ցուցնեն։
— Ցուցնելով ի՞նչ պիտի ըլլա։
— Ի՞նչ կուզէք, որ ըլլա... միշտ կը հիշվիք...

— Եթէ չհիշվիմ, ի՞նչ կը կորսնցնեմ. հոգս էր իմին, թէ զիս պիտի հիշեն. կուզեն՝ հիշեն, կուզեն՝ չհիշեն, ես անանկ դատարկ բաներու ատակ չեմ տար եւ քու խոսքերուդ ալ չեմ հավատար։
— Ասիկա պզտիկ էնյուլթ[36] մ՝է։
— Էնյուլթն ո՞վ է։
— Տէր, գիտէք որ արտիստ մը վիրավորեցիք ծանրապէս։
— Ե՞ս վիրավորեցի։
— Այո՛, դուք...
— Պատկերս քաշել չտալուս համար զրպարտութեան սկսա՞ր... ես մինչեւ հիմա մէկը վիրավորած չեմ։
— Այսօր զիս վիրավորեցիք։
— Գնա՛ ոստիկանութեան իմաց տուր, պարապ խոսքեր մտիկ ընելու ժամանակ չունիմ։
— Ոստիկանութեան երթալու հարկ չկա. կը խնդրեմ, որ ձեր բերնէն ելած խոսքը հաշտեցունեք ձեր քաղաքավարութեանը հետ։

— Ես կռվի մէջ չեմ մտներ, գնա, դուն հաշտեցուր, եթէ կռիվ ընողներ կան։

Մանուկ աղան Աբիտողոմ աղային նախաճաշը կը բերէ եւ եռոտանի սեղանի վրա դնելէն վերջը՝
— Հրամմեցէ՛ք, ձեր կաթը խմեցէ՛ք,— կըսէ։

Աբիտողոմ աղան աթոռ մը կառնէ, սեղանին առջեւ կը նստի եւ կսկսի կաթը խմելու։

/ 36 էնյուլթ — վիրավորանք /

— Ի՞նչ որոշեցիք նայինք, Աբիտողոմ աղային պատկերը կէ՞ս մէջքէն պիտի քաշէք, թէ ոտքի վրա,— կը հարցունէ Մանուկ աղան։
— Ոչ կէս մէջքէն, ոչ ալ ոտքի վրա,— կը պատասխանէ Աբիտողոմ աղան։
— Աթոռի մը վրա նստած ամբո՞ղջ պիտի քաշէք։
— Ո՛չ։
— Պառկա՞ծ պիտի հանէք։
— Ոչ։
— Քովընտի՞[37] ։
— Ո՛չ։
— Ի՞նչպէս որոշեցիք ուրեմն։
— Որոշեցինք, որ մեր պատկերը բնաւ քաշել չտանք։

— Ատ չըլլար. ատիկա մեծ պզտիկություն է, Աբիտողոմ աղա՛. հիմա պզտիկներէն բռնէ, մինչեւ մեծերը գնա, ամենն ալ տարին քանի մը անգամ պատկերնին քաշել կուտան. երկու ամսու տղաներն անգամ իրենցն ունեն, միայն իրենց մորը արգանդին մէջ գտնվողները չունին իրենց պատկերը, եթէ անոր ալ դյուրին մէկ ճամփան գտնեն, անոնց ալ պիտի հանեն։

— Ես չկրցի համոզել Աբիտողոմ աղան, որ կարծեց, թէ զինքը խաբելու համար եկած եմ հոս,— ըսաւ պատկերահանը։
— Զէ, չէ, մեր պատկերահանն անանկ մարդ չէ,— ավելցուց Մանուկ աղան։
— Ըսի, թէ Աբիտողոմ աղային պես մեծ եւ երևելի մարդ մը իրեն պատկերն անպատճառ ունենալու է։
— Այո՛, ունենալու է, եւ քանի մը տեսակ։ Օրինակի համար. տասներկու հատ պզտիկ, տասներկու հատ միջին, տասներկու հատ մեծ, տասներկու հատ ոտքի վրա, տասներկու հատ աթոռի մը վրա բազմած, տասներկու հատ քովընտի նստած, տասներկու հատ շիտակ նստած, տասներկու հատ ոտք ոտքի վրա դրած, տասներկու հատ ձեռք ձեռքի վրա, տասներկու հատ գլուխը ձեռքին կոնթած, տասներկու հատ ձեռքը սեղանի մը վրա դրած, տասներկու հատ պառկած, տասներկու հատ ձեռքը գավազան բռնած, տասներկու հատ խնդումներես, տասներկու հատ տխուր դէմքով, տասներկու հատ ալ ոչ խնդումներես[38] եւ ոչ տխուր դէմքով։ Այո՛, Աբիտողոմ աղա՛, աս ըսածներէս հատ մը եթէ պակաս ըլլա, ձեր պատվույն վնաս կուգա։

— Իրա՞վ կըսէք,— հարցուց Աբիտողոմ աղան։
— Սուտ խոսելու բնաւ պարտականություն չունիմ. եթէ ատոնք չունենաս, քու վրադ աղէկ աչքով չեն նայիր. բոլոր մեծ մարդերն ատոնք ունին։
— Մեծ մարդերն ունի՞ն. աղէկ գիտե՞ս։
— Այո, ունին։
— Պզտիկներն ալ ունին՝ ըսիր հապա։
— Պզտիկներն այս չափ չունին, անոնք կամ երեք հատ եւ կամ շատ-շատ վեց հատ հանել կուտան։

— Բնաւ մտքես չէր անցներ, որ պատկերին այս չափ կարեւորություն կը տրվի հոս□
— Այո՛, կարեւորությունը հիմա միայն պատկերներուն կը տրվի, եւ որքան աղէկ քաշված ըլլան, այնքան ավելի կարեւորություն կառնեն։

— Քանի որ ամեն մարդ յուր պատկերն ունի, իմ մեծ մարդ ըլլալս ինչէ՞ն պիտի հասկցվի. միայն մեծ մարդերը քաշել տալու էին, որ այն ատեն...
— Բայց մեծ մարդերունը ուրիշ տեսակ է, խոշոր դիրքով եւ փայլուն թուղթի վրա կը հանեն։
— Չկրնա՞ր ըլլալ, որ սպասավորներս ալ առջեւս բարեւ բռնած հանենք։
— Շատ աղեկ կըլլա։

/ 37 քովընտի — կողքի ընկած
38 խնդումներես — ծիծաղկոտ երեսով /

— Իրա՞վ կըսեք։
— Այո՛։
— Օրինակի համար ես ագարակներ ալ ունիմ, որոնց մէջ շատ մը կովեր, ոչխարներ, ձիեր, սագեր, բադեր կան, անոնք ալ կարելի չէ՞ պատկերին մէկ կողմը դնել։
— Ատոնք կարելի չէ, սպասավորներդ կրնաս առնել, այնպէս չէ՞, պարոն Դերենիկ։

— Այո՛, այնպէս է,— պատասխանեց պատկերիհանը։
— Չկրնա՞ր ըլլալ, որ,— հարցուց նորէն Աբիտողոմ աղան,— պատկերին տակը գրվի, որ այս մարդն ագարակներ[39], ձիեր, կովեր, էշեր ունի։
— Ատ չգրվիր. կրնա գրվիլ, բայց մինչեւ այսօր տվորություն եղած չէ։ Սակայն ի՞նչ հարկ կա զանոնք գրելու, արդեն ամէն մարդ շուտով կիմանա։

— Ձիու վրա նստած կրնա՞նք հանել։
— Այո՛,— պատասխանեց Դերենիկը։
— Ձին վազցունելով սակայն։

— Ատ դժվար է։
— Շատ լավ, վաղը կը նայինք։
— Եթէ կուզէք մեքենան հոս բերեմ վաղը։
— Այո՛, այո՛, հոս բերէ՛ք,— կրկնեց Մանուկ աղան,— վասնզի չվայլեր, որ Աբիտողոմ աղան ձեր սենեակը գա։ Մեծ մարդերը միշտ իրենց տուներուն մէջ քաշել կուտան պատկերնին։
— Գլխուս վրա,— ըսավ Դերենիկն եւ ձեռները շփել սկսելով ոտքի վրա ելավ եւ կոտրվիլ սկսավ այնպէս, որ խոսք մը ըսել կուզեր եւ կը քաշվեր։

Հայտնի է, թէ այն մարդն, որ բան մը ըսել կուզէ եւ կը քաշվի, անպատճառ ստակ պիտի ուզէ։
— Վաղը մեքենան հոս բե՛ր,— ըսավ Աբիտողոմ աղան։
— Շատ լավ,— պատասխանեց պատկերիհանը միշտ կոտրտվելով եւ ձեռները շփելով։
— Վաղը մեքենան հոս բե՛ր՝ ըսինք ա՛,— կրկնեց Աբիտողոմ աղան տեսնելով, որ պատկերիհանը չերթար։
— Այո, հասկցա, մեքենան վաղը հոս պիտի բերենք,— պատասխանեց նորէն Դերենիկը,— բայց տվորություն մը ունինք մենք, որ... ներեցէ՛ք սակայն։
— Ըսե՛ք։

— Բայց կաղաչեմ, ծանր չգա ձեզի։
— Ծանր չգար ինծի։

— Տվորություն մը ունինք, որ եթէ մեքենան մէկու մը տունը տանել հարկ ըլլա, կանխիկ գումար մը կառնենք... ոչ թէ վստահություն չունենալուս համար, այլ տվորություն մը հարգելու համար։
— Ատ ի՞նչ գէշ տվորություն է...
— Վերջապէս տվորություն մ՚է։
— Շատ լավ... երկու ռսկի կը բավէ՞։
— Այո՛, կը բավէ։

Աբիտողոմ աղան երկու ռսկի տվավ պատկերիհանին, որ դուռը բանալն եւ աներեւութանալն մէկ ըրավ։

/ 39 ագարակներ — կալվածներ /

Է

Կան մարդեր, որ ցցունել կուզեն, ինչ որ չունին. կան ալ, որ ցցունել չեն ուզեր, ինչ որ ունին. կան նաև որ ցցունել կուզեն, ինչ որ ունին։

Աբիտողոմ աղան վերջիններէն էր. կը փափագեր, որ բոլոր աշխարհի իմանա ագարակներ ունենալը, եւ յուր փափագն իրացնելու համար ստակ ալ չէր խնայեր։

Այսպէս, երբ ըսին իրեն, թէ մեծ մարդերն իրենց պատկերներն ունին, հավանեցավ, որ ինքն ալ իրենն ունենա, բայց կասկածելով, թէ խաբված ըլլա եւ պարապ տեղը ստակէ ելլա, Դերենիկին մեկնեցէն անմիջապէս ետքը հարցուց Մանուկ աղային.

— Եթէ պատկերս քաշել չտամ, զիս մարդու տեղ չե՞ն դներ։
— Քավ լիցի, բայց քանի որ ձեր աստիճանի մարդերը իրենց պատկերները հանել տված են, ձեզի ալ կը վայելէ, որ անոնց պէս ընէք ։ Երբ մէկն ձեր պատկերն ունենալ կը փափագի, եւ դուք պատասխանէք, թէ պատկերս քաշել տված չեմ...

— Ի՞նչ կըլլա։
— Բան մը չըլլար... բայց...
— Բայց ի՞նչ... ագարակներս կառնե՞ն ձեռքէս...
— Ամէնեւին։
— Ոչխարներս, կովերս կը հափշտակե՞ն։
— Բնավ... բայց... խավարեալ մարդու տեղ կը դնեն ձեզի, չեն ըներ այն պատիվն, որ կուտան մեծ մարդու։

— Հասկցա, ի՞նչպէս հանել տալու եմ ուրեմն պատկերս, որ տարակույս չմնա, թէ պզտիկ մարդ չեմ, վասնզի ըսիք, թէ պզտիկներն ալ իրենց պատկերներն կը հանեն։
— Ձեր պզտիկ մարդ չըլլալը հասկցնելու համար մեծ պատկեր հանելու էք թիկնաթոռի մը վրա նստած։

— Նոր հագուստներս հագնելու եմ, այնպէս չէ՞։
— Այո՛։
— Ժամացույցս ալ կախելու եմ հարկավ։
— Տարակույս չկա։
— Սանկ ծխփող քաշելով եւ երկու մարդ ալ դէմս բարեւ բռնելով եւ մէկն ալ ետեւէս ձիս բռնելով։
— Այո՛, այո՛։
— Դեռ ուրիշ ի՞նչ պէտք է փառավոր երեւնալու համար։
— Այսչափ բավական է։

— Կուզէի, որ սպասավորներս երկուքն ալ չախելով[40] դիմացէս փռնտէի, եւ անոնք ալ գլուխնին ծռած դուրս ելնէին. վերջապէս սանկ բաներ չը՞ կրնար ըլլալ... կամ թէ մէկը ծեծէի... օրինակի համար, մեր ագարակներուն վերակացուին երեսն ի վեր պոռայի... «մա՛րդ, քեզի քա՞նի անգամներ հրամայեցի, որ մշակներու հետ քաղցրութեամբ վարվիս, կովերուս հետ սիրով երթաս, վար ու ցանը ժամանակին ընես, քանի որ ատոնք չըրիր, ես ալ քեզի կը փռնտեմ»։ Վերակացուն ալ թաշկինակովն աչերը սրբելով՝ ոտներուս իյնա, աղաչէ եւ պաղատէ ըսելով. «զավակներուս սիրոյն համար ներէ՛ հանցանացս. այսչափ տարիներէ հետէ ձեր հացը կուտեմ, դուք իմ բարերարս էք, ես ձեզ գրկերուս մէջ այնչափ գրկած ու պտտցուցած եմ, երբ դեռ պզտիկ էիք»... վերջապէս սրվոր նման բաներ չե՞նք կրնար դնել պատկերին մէջ։

/ 40 *չախել — հանդիմանել* /

— Ատոնց վրա վաղը կը խորհինք. մենք հիմա սկսինք մեր երեկվան պատմութեան, որ կիսատ մնաց։ Մելքոն աղան զիս տեսնելուն պէս...

— Կամ թէ սանկ կոնակի վրա պառկիմ, եւ սպասավորներս ալբանթալոնս[41] քաշեն...

— Զիս տեսնելուն պէս մոտեցաւ ինծի եւ...

— Նարկիլէյով ավելի փառավոր չըլլա՞ր...

— Մոտեցաւ ինծի եւ ձեռքերս բռնելով ըսաւ. «Թէ այսօր չաշխատինք, մեր չուզած մարդերը թաղական պիտի ընտրվին»։

— Սանկ տասը կանգուն[42] երկարութեամբ մարբուճ[43] մը...

— Անոնք վաղվան գործ են, Աբիտողոմ աղա, թող տվէք, որ սա պատմությունս լմնցնեմ։ Մելքոն աղան թեւէս բռնելուն պէս քաշեց զիս ազգային ընթերցատունն, ուր երիտասարդները նստած թուղթ կը խաղային։

— Ես ալ կըսեմ, որ մարբուճը եթէ կարճ ըլլա, ավելի աղվոր կերեւնա պատկերին մէջ։

Կեանքիս մէջ հարյուր անգամէն ավելի հանդիպած եմ այս տեսարանին, ուր երկու դերասաններ խոսքն իրարու բեռնէն հափշտակելով, յուրաքանչյուրը կը փափագի առաջ յուր խոսքը մտիկ ընել տալ։ Այո՛, հարյուր անգամ ներկա գտնված եմ. երկու անգամ ընկերություններու մէջ եւ ինքնունը ութը անգամ Ազգային երեսփոխանական ժողովո[44] մէջ։ Հարյուր մէկերորդ անգամն էր այս, եւ սատանան կը դրդեր զիս ըսելու այս երկուքէն մէկուն. «Թո՛ղ տուր դիմացինիդ լմնցնել յուր խոսքն եւ վերջը խոսէ»։ Բայց որովհետեւ ուրիշ անգամներ այսպէս խոսած ըլլալուս համար մէկուն կամ մէկալին սիրտը կոտրած եմ, որոշեցի չեզոքություն պահել, թող տալ իրենց՝ փոխասացություն ընել եւ սպասել տեսնելու համար, թէ ինչպէս պիտի վերջանա այս տեսարանն, որ Ազգային երեսփոխանական ժողովո մէջ գրեթէ միշտ կռիվով կը վախճանի։

— Իրավունք ունիք,— պատասխանեց Մանուկ աղան,— կարճ մարբուճը շատ աղեկ կերեւա պատկերին մէջ, բայց եւ այնպէս մաքուր եւ շիտակ ըլլալու է թաղական ընտրվող մարդ մը։

— Դուք աղեկ կը ճանչնա՞ք։
— Իմ ճանչնալս մինակ օգուտ չըներ, քվէարկութեամբ կընտրվի։
— Քվէարկութեա՞մբ։
— Այո՛, ըստ Սահմանադրութեան[45], քվեարկությունը կընտրէ։
— Ի՞նչ կըսէք, թաղեցին քվէ՞ պիտի տա հիմա աղէկ մարբուճ մը ընտրելու համար։
— Թաղականի վրա է մեր խոսքը։
— Թաղական ո՞ւսկից հանեցիր. մարբուճի վրա է մեր խոսքը։

/ 41 ալբանթալոն — շալվար
42 կանգուն — երկարութեան չափ
43 մարբուճ — նարգիլէի բարակ, երկար խողովակ, որի ծայրից ծխում են

44 Ազգային երեսփոխանական ժողով — ըստ տաճկահայոց Ազգային սահմանադրութեան երեսփոխանական էր կոչվում այն կենտրոնական պատգամավորական ժողովը, որ գումարվում էր Պոլսում եւ որին պատկանում էր ազգային գործերի տնօրինութեան բարձրագույն իրավունքը

45 Ազգային սահմանադրություն — այսպէս կոչվում է հայ ազգային կուլտուրական ինքավարութեան այն կանոնադրությունը, որ հորինված էր տաճկահայերի համար եւ օսմանեան կառավարութեան կողմից հաստատվել 1863 թվականին /

— Մի՛ բարկանաք, Աբիտողոմ աղա, այնպէս ըլլա։
— Ինչո՞ւ բարկանամ պիտի... վաղը կերթանք, հատ մը առնենք։
— Կառնենք։

Այս պահուն սենեակի դուռը բացվեցավ, եւ կնկան մը գլուխ երեւցավ։

Այս կինը Շուշան կը կոչվեր, եւ յուր արհեստն ալ սիրո միջնորդություն էր. այրերուն կին կը գտներ, կիներուն այր կը մատակարարեր եւ զանոնք իրարու հետ ամուսնացնելով յուր աշխատութեան վարձքը կընդուներ։ Երբեմն ալ այրը կինէն կը զատեր եւ դարձեալ յուր աշխատութեան փոխարենը կառներ։ Տարիքն, եթէ հարցունես, երեսունվեց է, իսկ եթէ հարցունես ինծի, որ միշտ սովորություն ունիմ կնկան մը խոստովանած տարիքին վրա տասն ավելցնել, քառասունվեց է։ Ծաղկի հիվանդությունը յուր նշանները ձգած է անոր երեսը։ Սեւ եւ երկար դէմք մը, որուն կէսը կը կազմեր ծնոտը, եւ որուն մէջ տեղը երկնցած էր քիթ մը, որ բարձր եւ ճոխ հանգ[46] մ՚ուներ, կը կրեր յուր վրա երկու փոքրիկ եւ սեւ աչեր, որ ամէն վայրկեանին չորս կողմը կը պտտէին։ Հազիվ երկու մատ լայնութեամբ ճակատ մ՚ուներ. ընքվիները հիվանդութենէ թափած էին։

Տիկին Շուշան գլուխը դռնէն ներս խոթելէն ետքը դուռը բացավ եւ ներս մտավ ըսելով.
— Եթէ գաղտնի խոսք մը ունիք, դուրս ելնեմ։
— Ո՛չ,— պատասխանեց Մանուկ աղան,— թաղականի վրա կը խոսէինք։
— Գետնին տակը անցնի այն թաղականի խնդիրն,— ըսավ տիկին Շուշան եւ ծանրութեամբ գլուխն Աբիտողոմ աղային ծռելով՝ գնաց բազմոցի մը վրա նստելու։
— Բարի եկաք, տիկին,— ըսավ Մանուկ աղան։
— Բարի տե՛սանք։ Դուք ալ բարի էք եկեր, Աբիտողոմ աղա. քաղաքն ի՞նչպէս գտաք նայինք՝ հավնեցա՞ք։
— Հավնեցա, շատ աղէկ է։
— Այս կողմերը ի՞նչ գործ ունիք,— հարցուց Մանուկ աղա,— դարձեալ նշանտո՞ւք[47] մը կա, ի՞նչ կա։
— Հրամմեր էք, սա դիմացի տունը եկա, եւ անգամ մ՚ալ ձեզի հանդիպիմ, ըսի։ Սա Անթառամին աղջիկը դիմացինիդ տղուն կուզեմ շինել. գործն ալ լմնցածի պէս էր, բայց տիկին Մարթան յուր աղջիկը տալ ուզելուն համար Անթառամին աղջկանը վրայոք խել[48] մը խոսքեր ըսած է մանչուն, ան ալ քիչ մը պաղած է։ Այսօր եկա, որ զինքը տեսնեմ եւ համոզեմ, բայց դուրս ելած ըլլալուն՝ վաղը պիտի գամ։
— Աղջիկ մ՚ալ մեր Աբիտողոմ աղային չգտնա՞ս։

Աբիտողոմ աղան ժպտեցավ։
— Տիկինն արդեն իմացուց ինծի վարը, թէ Աբիտողոմ աղան կարգված չէ, եւ ես ալ շիտակը անոր համար վեր ելա,— պատասխանեց տիկին Շուշան ճերմակ թաշկինակովն քիթը սրբելով։
— Անանկ միտք մը ունիմ,— ըսավ Աբիտողոմ աղան տեղէն ելնելով եւ սիգար մը հրամցնելով տիկին Շուշանին։
— Եթէ անանկ միտք մը ունիք, քեզի ալ կրնանք ձեր ուզածին պես աղջիկ մը գտնել. քսան տարիէ ի վեր այս գործին մէջն եմ, ամենքն կը ճանչնամ։ Հրամանքնիդ ի՞նչպէս աղջիկ կուզէք, անգամ մը ան հասկանալու եմ ես։

Մանուկ աղան տեսնելով, որ Աբիտողոմ աղան տիկին Շուշանի հետ խոսքի բռնվեցավ, դուրս ելավ՝ ուրիշ անգամի պահելով թաղականի պատմությունն, զոր չէր կրցած ավարտել։

/ 46 հանգ — ձեւ
47 նշանտուք — նշանդրէք
48 խել — բավականին /

— Աղվոր աղջիկ մը կուզեմ,— պատասխանեց Աբիսողոմ աղան խնդալով։
— Գիտեմ, որ աղվոր աղջիկ կուզես. ուզած աղջիկդ հարո՞ւստ ըլլալու է։
— Այո՛։

— Պարկեշտ։
— Հարկա՛վ։

— Տասնվեց-տասնութ տարեկան։
— Ճիշտ։

— Դաշնակ[49] զարնել գիտնա։
— Գիտնալու է։

— Աղէկ պարէ։
— Հրամմեր էք։

— Շատ լավ, ասանկ աղջիկ մը կա ձեռքիս տակը, բայց այս տեսակ աղջիկները գործ չեն տեսներ տունը. առտվնէ մինչեւ իրիկուն ծունկ ծունկի վրա կը դնեն եւ կերգեն, կը պարեն եւ կամ բոլոր օրը կը պտտին. հիմակվընէ ըսեմ, վերջէն ինձի պատճառ չբռնես. աղեկներն ալ կան, բայց գտնելը շատ դժվար է։ Քու ըսած աղջիկներուդ մեջ անանկներ ալ կան, որ իրենց ուզած մեկը կը սիրեն եւ շատ անգամ անոր հետ գեղ մը կը փախչեն, եւ դուն ալ կսպասես, որ կինդ գա։

— Ի՞նչ կըսեք□ Եթէ այդպէս է, չեմ ուզեր։
— Բայց կան ալ, որ վրադ կխենդենան։
— Եթէ այսպէս է, կուզեմ։
— Բայց կան ալ, որ ամիս մը իրենց սիրածին հետ կապրին եւ քու անունդ բնավ չեն տար։
— Եթէ այնպէս է, չեմ ուզեր։

— Բայց կան ալ, որ վայրկյան մը քովդ չեն բաժնվիր։
— Եթէ այսպէս է, կուզեմ։
— Ասոնք ըսելուս համար ինձի բան մի՛ ըսեր. վասնզի կան անանկներ ալ, որ թող կուտան իրենց կինը ուրիշի մը հետ սիրահարություն ընել եւ աղջկան հորմէն քիչ մը դրամ առնելով աչք գոցել։

— Իրա՞վ կըսեք. անանկ էրիկ մարդ կը գտնվի՞ աշխարհիս վրա։
— Մազէս շատ։
— Եվ այն տեսակ էրիկ մարդերու եւ կիներու երեսը ո՞վ կնայի։
— Ամէն մարդ. կինը կարդարացնեն՝ ըսելով, թէ սատանայէ խաբված է, էրիկն ալ կը արբացնեն՝ ըսելով, թէ խեղճը չգիտեր յուր բռնած ընթացքը։
— Է՛, հիմա կը ճաթիմ... չեմ ուզեր, չեմ ուզեր, թող մնա՛, իմ քաղաքս կը կարգվիմ։

— Բայց եւ այնպէս անանկներ ալ կան, որ քեզի համար իրենց հոգին անգամ կուտան։
— Անանկ մէկն եթէ գտնեմ, կը կարգվիմ։
— Ես անանկ մէկը պիտի գտնեմ քեզի. իմ հարցունելս սա է, որ ձեր ինչ տեսակ աղջիկ ուզելը հասկնամ։

/ 49 դաշնակ — դաշնամուր /

Ես ալ իրավունք կուտամ տիկին Շուշանին. վասնզի ամեն օր այնպիսի ամուսնություններ կը տեսնենք, որք մարդուս զարմանք կուտան։ Ատեն մը հետաքրքրութեան համար կարգված մարդու մը սիրո կրկնատոմարը[50] գրեցի եւ տարեգլխուն հաշվեկշիռը[51] հանելով տեսա, որ մարդը սնանկացած էր բարոյականութեան մէջ։ Բարեւս կտրեցի իրմէ եւ սակայն մեծ զարմանքով տեսա, որ այդ մարդը մեծ պատիվ կը գտնէ ընկերություններու մէջ եւ իբրեւ բարոյականի տէր անձ մը ամեն կողմէ հարգանք կընդունի։
Հետաքրքրությունս ավելցավ. հաշվեկշիռս նորէն աչքէ անցուցի եւ դիտեցի, որ կինն, զոր ես այդ մարդուն ընկեր նշանակած էի, մայր հաշվույն մեջ դրամագլուխի կողմ անցած է էրկանը տետրակին մէջ։ Եթէ օր մը սիրո տոմարակալություն[52] մը հրատարակեմ, մեծ հուզմունք պիտի պատճառեմ հաշվագէտներու մէջ. վասնզի ես շատ էրիկ մարդիկ գիտեմ, որոնք կինն իրենց սիրո հաշվույն մէջ ընդհանուր ծախքի կողմ կանցունեն, շատերը կարասիքի հաշվույն տակ կը գրեն, ոմանք ընդհանուր ապրանքի կարգը կանցունեն, ոմանք վճարելի թուղթերու եւ ոմանք ընդունելի թուղթերու հաշվույն մեջ կը նշանակեն։ Խիստ քիչ են այն նախանձելի ամուսնություններն, որոնց մէջ կինը էրկանը ընկեր կարձանագրվի սիրո տետրակին մէջ։

— Կարգվիլը շատ անուշ բան է,— հարեց սիրո միջնորդն,— քեզի հարմար աղջիկ մը գտա՞ր, ամեն օր արքայութեան մէջ ես...
— Ես ալ ատոր համար է, որ կարգվիլ կուզեմ։

— Կինդ բնավորութեանդ չհարմարեցավ, ամեն օր դժոխքի մէջ ես, կրակներու մէջ կ՝երիս։
— Ես ալ ատոր համար է, որ կարգվելու կը վախնամ։

— Նայեցէ՛ք, ձեզի բան մը ըսեմ, աղա՛, հրամանքնիդ հարկավ մեծ տեղէ մը աղջիկ կուզեք առնել, վասնզի դուք ալ մեծ մարդ մ՝եք։
— Այո՛, այո՛, մեծ տեղէ կուզեմ ։

— Ես ալ քեզի մեծ տեղէ մը աղջիկ կը գտնեմ, բայց հրամանքնիդ ֆրանսերէն գիտե՞ք։
— Մեծ տեղէ աղջիկ առնելու համար անպատճառ ֆրանսերէ՞ն գիտնալու է։

— Այո՛, վասնզի մեծ տեղի աղջիկներն ֆրանսերէն կը խոսին, եւ երբ կին մը յուր էրկանը չգիտցած լեզվով ուրիշի մը հետ կը խոսի, տակէն նախանձ կելնէ։
— Ես ալ կը սորվիմ ֆրանսերէն։

— Բացի ասկից, երջանկությունը շատ քիչ կը գտնվի այն ամուսնութեան մէջ, ուր կնիկն էրիկէն ավելի բան գիտէ։
— Այնպէս է, ես ալ այն կարծիքին եմ։
— Հրամանքնիդ եվրոպական եղանակներէն բան մը կը հասկնա՞ք։
— Ամենեւին բան մը չեմ հասկնար եւ մանավանդ թէ կը ձանձրանամ։

— Ի՞նչ պիտի ընես ուրեմն, եթէ կինդ ժամերով դաշնակի առջեւն անցնի եւ այդ նվագարանի վրա եվրոպական խաղեր զարնէ։
— Թող չեմ տար, ես ձանձրույթ կիմանամ։
— Ան հաճույք կզգա։
— Կին մը ի՞նչ իրավունք ունի յուր էրկանը գլուխ ցավցունելու։
— Էրիկ մը ի՞նչ իրավունք ունի յուր կինն զվարճութենէ զրկելու։

— Եթէ գործը մինչեւ աս տեղվանքը պիտի գա, չեմ կարգվիր[53]։

/ 50 կրկնատոմար — հաշվեմատեան
51 հաշվեկշիռ — բալանս
52 տոմարակալություն — հաշվապահություն
53 կարգվիլ — ամուսնանալ /

— Չկարգվիլ չըլլար, միայն եթէ պիտի ստիպվիս կնկանդ ճաշակին հարմարելու համար դաշնակ տրվիլ։
— Ես կրնա՞մ տրվիլ։
— Ինչո՞ւ չէ, մանավանդ թէ ավելի դյուրին է քեզի դաշնակ զարնել տրվիլ, քան թէ կնկանդ դաշնակ զարնելը մո՛ռնալը։
— Եթէ այդպէս է, ատոր ալ ճամփան գտանք ըսել է։

— Ատոնք ըսելուս պատճառն ան է, որ ես հոգիս սեւցունել չեմ ուզեր. ամեն բան առաջուց կըսեմ, որ վերջէն ինծի պատճառ չբռնեն։ Իմ ձեռքիս տակ ամէն դասէ աղջիկ կա. բարձր դասէն, միջին դասէն եւ ստորին դասէն. այս երեք դասէն ալ ծախու ապրանք ունիմ. հրամանքնիդ ձեր քսակին հետ խորհրդակցեցէք եւ ինծի ըսեք՝ սա դասէն կուզեմ։ Հայտնի է, որ բարձր դասը շատ սուղ է, միջինն՝ նվազ սուղ եւ ստորինն՝ աժան։

— Ես շատ աժան չե՛մ ուզեր։
— Շատ լավ. աղջիկը ճերմա՞կ գույն ունենա, թէ քիչ մը թուխ։
— Ճերմակ կուզեմ։
— Աչքերը սեւ՞, թէ կապույտ։
— Եկու, տես, որ սեւն ալ կը սիրեմ, կապույտն ալ...
— Կամ մին պիտի ըլլա, կամ մյուսը. վասնզի չկրնար ըլլալ անանկ աղջիկ մը, որուն մէկ աչքը կապույտ ըլլա, մյուսը՝ սեւ։
— Կապույտ ըլլա թո՛ղ։
— Շատ լավ□ Հասակն եւ մազերը...
— Երկար, երկար։
— Մէջքը...
— Մէջքը բարակ ըլլա, բայց տկար չեմ սիրեր. կուզեմ, որ քալած ժամանակը միսերը շարժին։

— Կը հասկնամ, այսչափը հերիք է. ճիշտն ուզածիդ պէս աղջիկ մը կա, որ շատ ալ պարկեշտ է եւ իրեն էրկանը համար հոգի տալ կերեւա։
— Ես ալ անանկ մէկը կուզեմ։

— Թերեւս վաղը քու անունդ իրեն ըսելուս պէս վրադ սէր կապէ։ Պատկերդ տուր, որ իրեն անգամ մը ցցունեմ։

— Պատկերս վաղը հանել պիտի տամ։
— Վաղը՞... վաղը հանել տալու որ ըլլաք, ութը օրէն կառնեք, եւ ութ օր սպասե՞նք։
— Ինչո՞ւ սպասենք, վաղը կերթանք. մեծ տեղէ՞ն է աղջիկը։
— Այո՛։
— Հայրը հարո՞ւստ է։
— Շատ հարուստ է, բայց հարստությունը չցցուներ։
— Շատ խանութնե՞ր ունի։
— Քանի չափ։
— Տո՞ւն։
— Քառասունի մոտ։
— Շատ աղէկ, վաղը չէ մյուս օր կերթանք այդ աղջիկը տեսնելու։

— Գլխուս վրա. ցերեկին կուգամ, եւ մէկտեղ կերթանք։ Մնաք բարով, Աբիսողոմ աղա, սիրտդ հանգիստ բռնէ. ես քեզ չեմ խաբեր, ուրիշներու կրակէ շապիկ հագցնողներէ չեմ։ Կեցէք բարով, վաղը չէ, մյուս օր։

Տիկին Շուշանը կը մէկնի։

Ը

Մանուկ աղան, որ վարի սենեակն էր եւ խահվէ կը խմեր, տիկին Շուշանին վար իջնալն տեսնելուն պէս՝ խահվէի գավաթն թողուց եւ Աբիսողոմ աղային քովը գնաց ։
— Այսպէս,— ըսաւ,— Մելքոն աղան թեւէս քաշեց, եւ մէկտեղ ընթերցատունը մտանք։ Այդ ընթերցատունը ժամանակաւ գինետուն էր։ Աստված ողորմի հոգուն, Կոմիկ աղան կը բռներ, աղեկ մարդ մ՚էր, հիվանդություն մը եկաւ վրան, շատ բժիշկներ նայեցան, ճար մը չկրցին գտնել, եւ խեղճը մեռաւ...
Մանուկ աղային կինը լրագիր մը ի ձեռին ներս մտաւ եւ լրագիրը Աբիսողոմ աղային տալով՝
— Մեծապատիվ էֆէնտին հատկապէս բարեւ ըրած է ձեզի,— ըսաւ եւ դուրս ելաւ։

Աբիսողոմ աղան աճապարանոք բացաւ լրագիրն եւ կարդաց.
«Վանէն հետեւեալը կը գրեն մեզ»։ Ասչէ, վարինը կարդանք, ըսաւ եւ կարդաց. — «Մեր բարեկամներէն մին Մուշէն հետեւեալը ղրկած է մեզ ի հրատարակություն»։ Ասալ չէ, մյուսը նայինք. «Քուրիէ տ՚Օրիանի»[54] մէջ հետեւեալ տողերը կը տեսնվին»։ Մյուս երեսն անցնինք. «Թայմզի»[55] թղթակիցը հետեւեալը հեռագրած է հիշեալ լրագրին»։ Ասոնց մէջ իմ անունս չկա... սա կտորը նայինք... «Մայրաքաղաքիս ազնվական դասուն անդամ մ՚ալ ավելցաւ այս օրերս։ Երևելի վաճառական եւ բազում ագարակներու տէր, ազգասէր, լեզվագէտ, ազնվասիրտ եւ վեհանձն Աբիսողոմ էֆէնտի, որ մեր ազգայնոց ծանոթ է, երեկ Տրապիզոնի շոգենավով մայրաքաղաքս եկաւ եւ ուղղակի Բերա[56] եկաւ Ծաղկի փողոց, թիվ 2 տունը։ Աբիսողոմ էֆէնտիի պես մէկու մը մայրաքաղաքս գալն անշուշտ մեծ ուրախություն պիտի պատճառէ մեր բարէմիտ ազգայնոց»։

Աբիսողոմ աղան Մանուկ աղային դառնալով՝ տես,— ըսաւ,— ի՛նչ գրած է ինծի համար, եւ բարձր ձայնով անգամ մ՚ալ կարդաց ։
— Մեծապատիվ էֆէնտին բարեւ կընէ եղեր,— ըսաւ տիկինը նորէն ներս մտնելով, բաժանորդագին պիտի տաք եղեր ։
— Հիմա՛,— ըսաւ Աբիսողոմ աղան եւ տվաւ բաժանորդագինը տիկնոջ, որ վազելով վար իջաւ։
— Սա մարդը գէշ չը՞գրեր կոր, հէ՛,— հարցուց Աբիսողոմ աղան։
— Այո՛, գէշ չգրեր։
— Պատվական լրագիր մ՚է։
— Ավելի պատվականը կրնա ըլլալ։

Տիկինը դուռը բանալով Աբիսողոմ աղային նամակ մը, խոշոր ծրար մը հանձնեց ըսելով.
— Մեծապատիվ էֆէնտին մանավորապէս կը բարեւէ զձեզ։
Աբիսողոմ աղան նամակը բացաւ եւ հետեւեալը կարդաց.
«Մեծապատիվ էֆէնտի,
Ձեր մեծապատվութեան մայրաքաղաքս գալն իմանալով փութացի ձեր գալուստը շնորհավորելով՝ լրագրէս տասն օրինակ ղրկել։ Քաջահույս եմ, որ պիտի հաճիք ձեր բաժանորդութեամբը քաջալերել լրագիրս, որով պիտի խրախուսէք զիս, որ խմբագրական տաժանելի ասպարեզին մէջ ազգին ծառայություններ ընելու կոչված եմ։

Մնամ հարգանոք
Խմբագիր - Տնօրէն
..... ԼՐԱԳՐՈ»
(*Ստորագրություն*)

/ 54 «Քուրիէ տ՚Օրիանի» — «Կուրիեր դ՚ Օրիանը» («Արևելքի Սուրհանդակ») Պոլսում հրատարակվող ֆրանսիական թերթ էր
55 «Թայմզ» — «Թայմզ» անգլիական թերթ
56 Բերա է կոչվում Պոլսի եվրոպական թաղամասը /

— Տասը հատն ի՞նչ ընեմ...
— Կշտանալով կը կարդանք...

Տիկինը նորէն ներկայացաւ ծրարով մը եւ նամակ մ՚ալ տվաւ Աբիտողոմ աղային, որ բանալով սկսաւ կարդալ.
«Մեծապատիվ էֆէնտի,
Ձեր հանրածանոթ ազգասիրությունը քաջալերություն տվաւ ինձ լրագրէս տասնհինգ օրինակ ղրկել ձեզ։ Քաղցր է ինձ հուսալ, որ պիտի բարեհաճիք զանոնք ընդունիլ ի պաշտպան կանգնիլ լրագրութեան, որ մեր մէջ ընթերցասիրութեան չտարածվելուն պատճառովը դժբախտաբար գեշ վիճակի մը մէջ կը գտնվի։

Մնամ հարգանոք
Խմբագիր - Տնօրէն
..... ԼՐԱԳՐՈ»
(*Ստորագրություն*)

Աբիտողոմ աղան նամակը ծալելու վրա էր, տիկինը ներս մտավ.
— Մեծապատիվ էֆէնտին սիրով բարևներ կընէ եղեր ձեզի,— ըսաւ եւ նամակով մը գիրքեր ներկայացուց Աբիտողոմ աղային, որ նամակը բացաւ եւ սկսաւ կարդալ.
«Մեծապատիվ էֆէնտի,
Իմ մտքիս ծնունդն եղող քերթվածները հրատարակած ըլլալով՝ արժան դատեցի անոնցմէ քառասուն օրինակ ձեզ ղրկել։ Կը հուսամ, որ շնորհ կընէք զանոնք ընդունելու եւ կերպով մը քաջալերություն տալու ինձ, որպեսզի մյուս քերթվածներս ալ քիչ օրէն հրատարակութեան տամ□ Խնդրելով, որ ընդունիք իմ խորին մեծարանացս հավաստիքը, մնամ ձերդ մեծապատվութեան խոնարհ ծառա»։

(*Ստորագրություն*)

Աբիտողոմ աղան նամակը գոցեց եւ քովը դրաւ։
Տիկինը դարձեալ ներս մտավ։
— Մեծապատիվ էֆէնտին բարե՞ւ ըրած է դարձեալ,— հարցուց Աբիտողոմ աղան։
— Ո՛չ, բեռնակիրներէն մէկը եկած է եւ կրողչեքը կուզէ։
Աբիտողոմ աղան քսան դահէկան հանեց, տվաւ։

Տիկինը դուրս ելաւ, դուռը գոցեց ։
— Ընթերցատան մէկ անկյունը քանի մը հոգի նստած ընտրելի թաղականներու ցուցակը կը պատարաստէին,— ըսաւ Մանուկ աղան՝ յուր պատմութեան թելն ձեռք առնելով։ —Անոնք մեր կողմէն չէին եւ կաշխատէին, որ իրենց ուզած կաշառակեր մարդերը թաղական ընտրեն։

— Տղուն մէկը եկաւ սա գիրքերը ձգեց, գնաց,— ըսաւ տիկինը նորէն մտնելով. —մեծապատի՛վ Էֆէնտին շատ բարեւ կընէ եղեր եւ այսօր կամ վաղը պիտի գա եղեր զձեզ տեսնելու։
Տիկինը գրքերը սեղանի մը վրա դրաւ։

— Ի՞նչ ընեմ այսչափ գիրքերը, գրավաճա՞ռ պիտի ըլլամ ես։ Չեմ ուզեր, ալ ասկից վերջը եթէ բերող ըլլա, մի ընդունիր, Աբիտողոմ աղան հոս չէ՝ ըսէ եւ ճամփէ։ — Ատ ալ չըլլար, դուն խմբագիրները չես ճանչնար. անոնց մէջ կը գտնվին այնպիսիներ, որ երբ իմանան, թէ իրենց ընկերներէն մէկուն լրագիրն առած ես եւ իրենցը չես առեր, վրադ կը հարձակին եւ չլսված խոսքեր կընեն։
— Եթէ այնպէս է ընդունէ, որչափ լրագիր որ բերեն, ի՞նչ ընենք, բռնվեցանք անգամ մը. եթէ գիրք բերեն, մի ընդունիր։

Տիկինը գլուխը ծռելով դուրս ելաւ։

— Թեպէտ այդ մարդիկն իրենց ուզածները թաղական ընտրելու, կաշխատէին, բայց իրենց մէջ ալ անմիաբանություն կար. ակնավաճառն յուր առաջին հաճախորդը կուզեր թաղական ընտրել, հացագործն կուզեր թաղական ընտրել այն մարդն, որուն տունը օրը տասը հաց կուտար. դերձակն թաղական տեսնել կը փափագեր այն երիտասարդն, որուն վրա շաբաթը երկու անգամ հագուստ կը ձեւեր, կը կարեր. համետագործը[57] քվէ տալ կուզեր այն հարուստին, որուն մէկ-երկու համետ կը շիներ տարին. խմբագիրն յուր բոլոր բաժանորդները թաղական խորհրդոմէջ տեսնել կուզեր. փաստաբանը իրեն շատ դատ հանձնողին քվէ կուտար. բժիշկն՝ յուր ամենէն ծանր հիվանդին, եւ գինեպանն ալ ամենէն շատ օղի եւ գինի խմողին կուզեր հանձնել թաղին գործերը։ Ահա այսպէս իրենց մէջ...

Մանուկ աղան դարձեալ չկրցավ շարունակել յուր պատմությունը, վասնզի ուրիշ հյուր մը ներս մտնելով ընդհատեց անոր խոսքը։
Այս հյուրը մաքուր հագված երիտասարդ մ՚էր. յուր կլոր եւ ճերմակ դէմքը շրջանակված էր դեղինով խառն սեւ մորուքէ մը, որ շատ չէր վայլեր։ Պատկերներ կան, որ առանց շրջանակի ավելի գեղեցիկ կերեւան. թեպէտ եւ կան ալ, որ գեղեցիկ երեւալու համար շրջանակի կը կարոտին։ Եթէ բնությունը չարգիլեր կիներու շրջանակի մէջ անցունել իրենց դէմքերն, այսօր ո՞րչափ կիներ մորուք պիտի ունենային։

Այս երիտասարդը ներս մտնելուն պէս հանեց յուր սեւ եւ երկար գլխարկն եւ բարեւեց սենեակին մէջ գտնվող երկու բարէկամները։
Մանուկ աղան անմիջապէս դուրս ելավ բարկութեամբ մռմռալով.
— Այս տարիքն եկած եմ, եւ ասանկ բան գլուխս եկած չէր. թո՛ղ չեն տար, որ երկու խոսք ընեմ. հազիվ թէ բերանս կը բանամ, մէկը կուգա, կսկսի խոսել, եւ իմ խոսքս բերնիս մէջ կը մնա։

— Աբիտոռոմ աղա հրամանքնի՞դ էք,— հարցուց հյուրն բազմոցի վրա նստելէն ետքը։
— Այո՛, ես եմ։
— Շնորհակալ եմ, որ Աբիտոռոմ աղան դուք էք. ձեր գալուստը լրագրի մէջ կարդացի եւ շատ ուրախացա, որ ազգերնուս մէջ ձեզի պէս ազնիվ սիրտ կրող ազգասէրներ պակաս չեն, վասնզի այն ազգն, որ ազգասէր չունի յուր մէջ, ազգ չէ։
— Այո՛։
— Փոխադարձաբար այն ազգասէրն ալ, որ ազգ չունի, ազգասէր չէ։
— Շիտակ է։
— Այս երկուքն իրարու հետ այնպիսի սերտ կապակցություն մ՚ունին, որ իրարմէ բաժնելուդ պէս՝ երկուքն ալ կը կորսվին։
— Այնպէս է։
— Ազգ մը, որ յուր աշխատավորները չքաջալերեր,— ավելցուց հյուրն միշտ ծանր եւ լրջագույն եղանակով մը,— ազգերու կարգ անցնելու բնավ իրավունք չունի։
— Շատ աղէկ կը խոսիք։
— Եվ երբ աշխատավոր մը վարձքը չընդունիր յուր ազգէն, բնականաբար կը վիատի եւ երբեմն կը խորհի երթալ ինքզինքը ծովը նետել։
— Ատ տղայություն է։
— Ներեցէ՛ք, Աբիտոռոմ աղա, եթէ մեր այս առաջին տեսութեանը քիչ մը համարձակ կը խոսիմ ձեզի հետ։
— Հոգ չէ։
— Ծառադ վեց տարի Եվրոպա մնացած եմ եւ բժշկություն տրված եմ։
— Աղէկ արվեստ։
— Գիշերները քունս ծախելով կարդացած ու գրած եմ, որպէսզի քաղաքս դառնամ եւ ազգիս ծառայություն ընեմ։

/ 57 *համետագործ — ավանակի վրա նստատեղ՝ թամբ շինող* /

— Մարդ ալ յուր ազգին ծառայություն ընելու է։
— Երկու տարի է, որ հոս կը գտնվիմ, եւ մինչեւ այսօր հազիվ չորս հիվանդ նայած եմ. հասկցիր, թէ ի՞նչպէս կը քաջալերվին հոս բժիշկները։
— Ցավալի բա՛ն... այս տեղացիները հիվանդ ըլլալու սովորություն չունի՞ն...
— Ունին, բայց հոս հիվանդները ազգային զգացում չունին, Հայաստանի վրա գաղափար չունին։
— Ի՞նչ կըսէք։
— Այո՛, երբ հայ մը հիվանդ ըլլա, օտար ազգէ բժիշկ մը կը բերէ յուր տունը՝ առանց գիտնալու, թէ հայու ցավն հայը կարող է միայն բժկել, առանց համոզվելու, թէ օտարը չէ կարող հայու ցավուն դարման ըլլալ։ Այսօրվան օրս երկու հազարէն ավելի հայ բժիշկ կա. ասոնց մէջէն հինգ-վեց հատը, մանավանդ երկու-երեք հատը պատվական կեանք կանցունէ, եւ անդին մնացածը ամեն օր բերանը բաց կսպասէ, որ հիվանդ մը ներկայանա իրեն եւ ստակ առնէ։
— Գէշ վիճակ։
— Ի՞նչ ընեն ազգային բժիշկներն, երբ ազգային հիվանդներն օտարներու կը դիմեն... ո՛հ, օտարասիրություն, օտարասիրություն,— գոչեց բժիշկն աչերն երկինք վերցնելով,— ե՞րբ պիտի երթաս մեր քովէն։
— Օտարասիրությունը աղեկ բան չէ։
— Մանավանդ թէ բժիշկները քաջալերելու չափ հիվանդություն ալ չկա մեր ազգին մէջ. եւ այն ազգին մէջ, որ հիվանդությունը տարածված չէ, պարապ բան է Եվրոպայի բժիշկներուն չափ ճարտար բժիշկներ հուսալ, ինչպէս նաեւ այն ազգն, որու մէջ ընթերցասիրությունն տարածված չէ, իրավունք չունի տաղանդավոր եւ հանճարեղ հեղինակներ ունենալու. տաղանդն եւ հանճարն առանց քաջալերութեան կը մեռնի։
— Շատ իրավունք ունիք։
— Չէք կարող երեւակայել, Աբիսողոմ աղա, թէ որչափ հուսահատած եմ. հազար անգամ զղջացած եմ, երկու հազար անգամ անեծք կարդացած եմ բժիշկ ըլլալուս համար. ո՛ւր էր, թէ բժիշկ ըլլալու տեղ հիվանդ ըլլայի եւ մեռանէի. մեր ազգին մէջ հիվանդությունը բժշկութենէն աղեկ է, վասնզի տգիտությունն գիտութենէն ավելի կքաջալերվի... թեթեւությունը ծանրութենէն ավելի հարգ կը գտնէ, մոլիներն առաքինիներէն ավելի պատիվ կը վայելէն. ճշմարիտ Աստված, ուխտ ըրած եմ, որ եթէ օր մը երեւելի ազգայիններէն հիվանդ մը նայիմ, անոր անունը լրագիրներու մէջ բարձրացունեմ։

Այս խոսքին վրա Աբիսողոմ աղա արթնցավ, այսինքն փառասիրությունն արթնցավ։ Ի՜նչ անուշ բան է թերություններ հավաքել միամիտ մարդերու վրայէն։ Խորամանկներն երբեմն վարպետութեամբ այնքան կը կեղծեն իրենց թերություններն, որ անոնց հավաքիչները կը շվարեցնեն. վասնզի անոնք երբեմն միամիտ եւ երբեմն խորամանկ կը ձեւանան, ժամ մը՝ տգէտ, ժամ մը՝ գիտուն, մերթ՝ անաչառ, մերթ՝ աչառու, մերթ՝ կեղծավոր, մերթ՝ անկեղծ, եւ երբ ազգային նշանավոր, հանճարեղ եւ հերանուշ Ծերենցը[58] ասոնցմէ մին նկարագրելով անբնական անձ մը ներկայացնէ, ամէն կողմէն կը բարվի, թէ Ծերենցն տակավին Մանուկենց[59] է անձեր ստեղծելու արհեստին մէջ, թէ միեւնույն անձին վրա Ադամն եւ Նեռն[60], սատանան եւ հրեշտակն, Զոյիլն[61] եւ Հոմերոսն[62], արականն եւ իգականն միանգամայն կներկայացնէ։

/ 58 Ծերենց — (1822-1888) բժ. Հովսեփ Շիշմանյանի գրական կեղծանունն է։ Հայտնի են նրա երեք պատմական վէպերը՝ «Երկունք», «Թորոս Լեւոնի», «Թեոդորոս Ռշտունի»

59 Մանուկենց — այստեղ հեղինակը բառախաղ է անում՝ Ծերենց կեղծ անունի հակառակը նկատի ունենալով

60 Նեռ — հակաքրիստոս (ըստ քրիստոնեական վարդապետության պէտք է հանդէս գա աշխարհի վախճանի ժամանակ եւ կռվի Քրիստոսի դէմ)

61 Զոյիլ— հունական անվանի հռետոր, փիլիսոփա եւ քննադատ (IV—III դար Ք. ա.). նրա անունը դարձել է հասարակ անուն մանրախնդիր, նախանձոտ եւ խայթող քննադատի համար, որովհետեւ Զոյիլը թունոտ, ոչնչացնող քննադատության է ենթարկել Հոմերոսին («Հոմերոսի խարազան»)

62 Հոմերոս — հունական ավանդությունների համաձայն՝ ապրել է մոտ 10-րդ—9-րդ դդ. Ք. ա.։ Հույն ժողովրդական երգիչ էր, որին վերագրում են «Իլիական» եւ «Ոդիսական» աշխարհահռչակ պոեմները, որոնք թարգմանված են բոլոր կուլտուրական ժողովուրդների լեզուներով, ինչպէս եւ հայերէն /

Ի՞նչ հանցանք ունի ճերմակերես Ծերենցն, երբ յուր ներկայացնելիք անձերն խորամանկ են. — Ներեցէ՛ք, Աբիսողոմ աղա եւ տէր բժիշկ, եթէ ձեր խոսակցությունն ընդմիջեցի. ի բնէ քիչ մը անհամբեր եմ. երբ խոսքին կարգը գա, չեմ կարող ինքզինքս բռնել, որչափ ալ այս բնավորութեանս պատիժը կրած ըլլամ եւ կրեմ։— Այո՛, Ծերենցն կը ներկայացնէ անձերն ոչ թէ ինչպէս որ են, այլ ինչպէս որ կերեւին։ Ծերենցն այս մասին որչափ ալ երկնցնէ յուր մազերն, իրավունք ունի, վասնզի ունինք հեղինակներ, որոնք Ծերենցէն ավելի երկար մազ ունին եւ կը ներկայացնեն իրենց անձերն ոչ թէ ինչպէս որ են, այլ ինչպես որ կուզեն իրենք, որ ըլլան անոնք։ Ասոր համար է, որ կին-հեղինակներն, երբ Հայկ կամ Վարդան[63] կամ Արտաշէս[64] ներկայացնել ուզեն, Վիքթոր Հյուկոյի[65] խոսքերը կամ Մոլթքէի[66] կարծիքները կը դնեն անոնց բերնին մէջ։
Ասոնք կը կարծեն, թէ երբ Ադամ յուր ժամանակին հատուկ պարզութեանը մէջ ներկայացնեն, կը կորսուներն իրենց տաղանդն, եթէ ունին, կամ կը վնասեն իրենց հանճարին, զոր ունենալ կը կարծեն, կամ վերջապէս կը զրկվին այն համբավէն, զոր վաստկիլ կերազեն։ Ո՞վ ըսած է այս ողբերգակներուն, թէ ավելի դժվար է մէկուն պատկերն ճշտութեամբ նկարելն, քան թէ երեւկայութեամբ անբնական պատկեր մը գծելն. ո՞վ պռռացած է ասոնց ականջն ի վար, թէ նկարիչ մը պատկերներ ստեղծելու սկսելէ առաջ՝ պատկերներ ընդօրինակելու է։ — Ոչ ոք։ Եվ ով կը հանդգնի այս փափուկ ժամանակին մէջ ուրիշի մը գործն անաչառաբար քննադատելու։ Մեր քննադատները, քիչ բացառութեամբ, ակնոց ակնոցի վրա կդնեն գործի մը մէջ գեղեցիկ կտորներ փնտրելու համար. փնտրելու համար եւ ոչ թէ տեսնելու համար, վասնզի տեսնված բանը չփնտրվիր։ Ասոնք բնավ տարբերություն չունին գրաքննիչներէն, որք որեւէ հրատարակութեան մը մէջ միայն տգեղ կտորներ կը փնտրեն։ Չեմ տեսած քննադատ մը, որ տգեղ հրատարակութեան մը կոկորդէն բռնէ, տրմէ եւ սպանէ զայն։ Սպանելու չէ, գործ մը գեղեցկացնելու աշխատելու է, կըսէ, անոր գեղեցիկ կողմերը ցույց տալով եւ միշտ տգեղ կետերը հեռուանց ցցունելով խիստ քիչ անգամ։ Ո՛չ, պարոն քննադատներ, ո՛չ, իրավունք չունիք, սպանեցէք տգեղ գործերն եւ վստահ եղէք, որ պիտի գեղեցկանան անոնք։ Մարդեր կան, որ կը գեղեցկանան, երբ մեռնին։ Ես, որ այսչափ խստութեամբ կը խոսիմ ուրիշներու երկերուն վրայոք, կը կարծէք, թէ քաղցրութեամբ կը վարվիմ «Մուրացկաններուս» անձերուն հետ, որոնց բերնէն ելած խոսքերն միայն բառ առ բառ կը գրեմ հոս, առանց իմ կողմէն կետ մ՝ ավելցնելու հանդգնությունն ունենալու։ Բնավ երբէք, մանավանդ թէ կզգամ, որ իմ անձերս ալ ունին շատ թերություններ, զորս օր մը պիտի հարվածեմ։ Նույնիսկ մեծ թերություն մ՝ է, որ պատմիչ մը յուր պատմութեան թելը կտրէ եւ յուր ընթերցողներն երկու ժամ խնդիրէն դուրս խոսքերով զբաղեցնե։ Բայց ի՞նչ ընեմ, այս թերությունս իմ առավելությունս է, վասնզի այս թերութեանս շնորհիվ է, որ կրցած եմ քանի մը ընթերցողներու տէր ըլլալ, թերություն, որ թերություններ ուղղելու պաշտոնն ունի։ Այսչափ բացատրություն ալ թերութեանս համար։ Դառնանք ուրեմն մեր պատմութեան։

Աբիսողոմ աղան, ինչպէս ըսինք, ականջները տնկեց, երբ իմացավ, որ բժիշկն եթէ հիվանդ մը գտնէ, անոր անունն լրագիրներու մէջ պիտի հրատարակէ. ուստի անմիջապէս տկարություն ունենալ ուզեց□

/ 63 Վարդան — Մամիկոնյան նախարարական տոհմի հայտնի ներկայացուցիչ, պետական գործիչ եւ զորավար. հռչակվել է Ավարայրի դաշտում տեղի ունեցած ճակատամարտով, որտեղ պարտություն է կրել պարսից զորքերի կողմից (451թ.) ու սպանվել

64 Արտաշէս — մի քանի հայ թագավորների անունն է

65 Վիկտոր Հյուգո (1802—1885)— ֆրանսիական բանաստեղծ, վիպասան եւ դրամատուրգ. ռոմանտիկական դպրոցի պարագլուխն էր Ֆրանսիայում։ Նրա նշանավոր երկերից մի քանիսը թարգմանված են հայերեն

66 Մոլթքէ կոմս (1802—1885) — պրուսական գեներալ-ֆեղմարշալ, գլխավոր շտաբի պետ. հռչակվել է որպէս ռազմագէտ (մանավանդ 1870—71թթ.) ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ /

— Աղէկ եղավ, որ,— ըսավ բժշկին,— այսօր հոս եկաք, վասնզի քանի մ՚օրէ ի վեր վրաս գէշություն մը կա։
— Ի՞նչ կզգա՞ք,— հարցուց բժիշկը։
— Գէշություն մը կզգամ։
— Ո՞ր կողմդ։
— Ո՞ր կողմս։
— Այո՛։
— Ամեն կողմս։
— Ախորժակդ ի՞նչպէս է։
— Աղէկ է։
— Կերածդ շատ մը կը մարսե՞ս։
— Կը մարսեմ։
— Գիշերները հանգիստ կը քնանաս։
— Շատ հանգիստ, բայց վրաս գէշություն մը կզգամ։
— Գլուխդ երբեմն կը ցավի՞։
— Այո՛։
— Վրադ սանկ թուլութեան պէս բան մը...
— Ճիշտ։
— Երբեմն դողալ մը սանկ...
— Այո, այո, դողալ մը սանկ... (մէկուսի) կեանքիս մեջ դողացած չունիմ։
— Դողալէն վերջը տաքություն մը...
— Տաքություն մը։
— Տաքութենէն վերջը քրտինք մը...
— Քրտինք մը։
— Առտուները լեզվիդ վրա լեղիություն մը։
— Այո՛, լեզվիս վրա լեղիություն մը։
— Հասկցա, բան մը չէ, կանցնի, ինքզինքդ մրսեցուցած ես։
— Ինծի ալ այնպէս կուգա, որ ինքզինքս մրսեցուցած եմ։
— Շատ բժիշկներ կան, որ այս հիվանդությունը չեն հասկնար, սխալ դեղեր կուտան, ուրիշ հիվանդություն կը հրավիրեն։
— Ուրախ եմ, որ դուք աղէկ հասկցաք, դեղ մը տվէք, որ շուտ մը անցնի։

Բժիշկը ծոցէն հանեց թերթակալը կամ տետրոնը[67]— երկուքէն որն որ ուզէք, կրնաք գործածել. ազատ էք նաեւ ոչ մին գործածելու եւ ոչ մյուսն,— թուղթ մը քաշեց անոր մէջէն եւ մատիտով քանի մը բառ գծելէն ետքը թուղթին վրա՝ Աբիտողոմ աղային տվավ զայն՝ ըսելով.
— Ասիկա կարմիր ջուր մ՚է. ժամը մէկ անգամ կը խմէք անկից խահվեի գավաթով. թէպէտ եւ քիչ մը լեղի է, բայց ազդու է։
— Շատ աղէկ։
— Մոռցա հարցնելու, թէ բնությունդ ի՞նչպէս է։
— Բնությունս... շիտակը, խարդախ մարդերէն չեմ ախորժիր. ամենուն հետ աղէկ կը վարվիմ...
— Ամեն առտու, դուրս կելլա՞ք,— հարցուց բժիշկն՝ խոսքին ձեւը փոխելու ստիպվելով□
— Հոս գալէս ի վեր երկու առտու դուրս չկրցի ելնել։
— Իրա՞վ կըսէք։
— Սուտ խոսելու ի՞նչ պարտք ունիմ։
— Ուրեմն դեղ մ՚ալ գրեմ։

/ 67 թերթակալ կամ տետրոն — բլոկնոտ, ծոցատետր /

Բժիշկը դեղագիր մ՚ալ գրեց եւ Աբիսողոմ աղային տվավ։
— Նախ այս դեղը պիտի առնես,— ըսավ բժիշկն, որպէսզի վաղը առտու դուրս ելնես եւ վերջը մյուս ջուրը պիտի խմես։
— Եթէ այս դեղէն խմեմ, վաղը առտու անպատճառ դուրս կրնա՞մ ելնել։
— Այո՛, անպատճառ։
— Այս ի՛նչ աղվոր դեղ է... Հապա թէ որ դարձեալ հյուրեր գան եւ զիս խոսքի բռնե՞ն։
— Հյուրերդ ի՞նչ վնաս ունին։
— Ի՞նչպէս վնաս չունին. երկու առտու է, որ դուրս ելնել կուզեմ եւ թող չեն տար. կուգան, երկու ժամ գլուխ կը ցավցունեն։ Բայց վաղը առտու անպատճառ պիտի ելնեմ, վասնզի պատկերս քաշել պիտի տամ։
Բժիշկը դարձեալ հարցման ձեւը փոխեց հարցնելով.
— Փորդ ի՞նչպէս է։
— Ամենուն փորին պէս փոր է։
— Պի՞նդ է։
— Ո՞վ գիտէ... իրավ որ օր մը օրանց հետաքրքրություն ունեցած չեմ հասկնալու համար, թէ պի՞նդ է, թէ ոչ. ո՞վ պիտի նայի անանկ բաներու։
— Աբիսողոմ աղա, ամեն օր մեծ գործ կընե՞ս,— հարցուց վերջապէս բժիշկը ճարը հատնելով։
— Այո՛, այո՛, ամեն օր մեծ գործ կը տեսնեմ։

Ո՛վ մեծագործություն...

Ո՛վ մեծախոսություն...

— Շատ լավ,— պատասխանեց բժիշկն,— ես վաղն առտու նորէն կուգամ ձեզ տեսնելու։
— Կըլլա։
— Մնաք բարով. հոգ մի ընեք, ձեր տկարությունը քանի մը դեղով կանցնի։
— Շնորհակալ եմ։

Բժիշկն գլխարկն առնելով մէկնելու վրա էր, երբ Աբիսողոմ աղան ըսավ անոր.
— Գրելիքդ չմոռնաս։
Բժիշկը խորհիլ սկսավ, թէ ի՛նչ էր գրելիքը, եւ շուտ մը հիշելով՝ պատասխանեց.
— Այո՛, այո՛, միտքս է, լրագրի մը մէջ պիտի գրեմ ձեր անունը։ Մնաք բարով։
— Երթաք բարով։

Բժիշկը մէկնելուն պէս Աբիսողոմ աղան ըսավ ինքնիրեն.
— Վախցա, որ բժիշկը կըսէ, թէ «դուն հիվանդություն մը չունիս» եւ շինծու հիվանդ ըլլալս հայտնի կըլլա. բայց պարապ տեղը վախցած եմ, վասնզի անիկա ոչ թէ միայն չհասկցավ հիվանդ չըլլալս, այլ ըսավ նաեւ, թէ քանի մը դեղով կանցնի հիվանդությունդ։ Էհ, պարոն բժիշկներ, դուք բան մ՚ալ չէք հասկնար, եւ մամս իրավունք ուներ բնավ բժիշկ չկանչելու։ Ես բան մը չունիմ, տէր բժիշկ,— շարունակեց,— անունս լրագրի մէջ գրել տալու համար հիվանդ եղա...

Այս վերջին խոստովանությունը քիչ մը խենդություն երևցավ Աբիսողոմ աղային, որ խղճմտանքը հանդարտեցնելու համար ըսավ ինքնիրեն։
Լսողն ալ պիտի կարծէ, թէ հիվանդ չեմ եւ շինծու հիվանդ եղած եմ. քանի մ՚օրէ ի վեր է, որ անհանգստություն մ՚ունիմ, ոչ կրնամ ուտել եւ ոչ քնանալ, հազ մ՚ալ ունիմ, որ գիշերները չքնացներ զիս։

Ո՛վ փառասիրություն, իրավ է, որ դուն երբեմն խելացիները խենդ եւ խենդերը խելացի կընես...

Աբիսողոմ աղան բերանը քիչ մը բան դնելու համար վար իջավ, բայց երբ տեսավ, որ քանի մը հոգիներ նոր եկած էին զինքը տեսնելու, անոնց ձեռքէն խալսելու համար տունէն դուրս ելավ. եթէ այսպէս չըներ եւ ամեն այցելություններն ընդունելու ըլլար, ժամանակ պիտի չունենար ոչ ուտելու, ոչ քնանալու եւ ոչ արթննալու։ Աբիսողոմ աղան դեռ Պոլիս չեկած՝ իմացած էր, թէ Բերա գաղիական[68] ճաշարան մը կար եւ երեւելի մարդերը հոն կերթային ճաշելու. ուստի տունէն դուրս ելնելուն պէս միտքը դրավ հիշեալ ճաշարանն երթալու։ Հազիվ թէ քանի մի քայլ առավ, հիսուն տարեկան նիհար եւ պատռտած հագուստներով մէկը դէմն ելավ։

— Կարծեմ Աբիսողոմ աղա հրամանքնիդ էք։
— Այո՛, ես եմ։
— Քանի մի վարկեան ձեզի հետ տեսնվիլ կը փափագէի։
— Է։
— Նոր եղանակով, նոր դասագիրքեր հանած եմ, անոնցմէ հարյուրի չափ ձեզի տալ կուզէի. ներեցէք համարձակութեանս, ի՞նչ ընենք, այս համարձակությունը մեզի տվողն ազգն է, որ չքաջալերեր յուր դասատուներն եւ թող կուտա, որ անոնք խեղճ վիճակի մէջ ապրին։ Ա՜հ, եթէ այսօր դասագիրքերը չկարենամ քշել, տպարանապետը բանտը պիտի դնէ զիս. դեռ տպագրութեան եւ թուղթի ծախքը վճարած չեմ իրեն, եւ ամեն օր կապառնա ինձի։

— Դասագիրքն ի՞նչ պիտի ընեմ ես։
— Ձեր բարեկամներուն կուտաք. կաղաչեմ, խնդիրքս մի մերժէր. վեցական դահեկանէն վեց հարյուր դահեկան կընէ, եւ այդ գումարն ալ ձեզի համար մեծ բան մը չէ։

— Գաղիական ճաշարանն ո՞ր կողմէն կերթցվի։
— Ասկից կերթցվի, սիրով կառաջնորդեմ ձեզի հոն։

— Շնորհակալ կըլլամ։
— Կը քալենք եւ կը խոսինք։ Դասատուներն ազգին ծառաները համարված են եւ ամենուն երեսէն ինկած, մինչդեռ անոնք ազգին տէրերն են։ Ազգ մը անոնցմով առաջ կերթա. բայց ի՞նչ օգուտ, մեր մէջ քաջալերություն չկա։ Դասատու մը այսօր դպրոցի մը պաշտոնի կը կոչվի եւ քանի մ՚օրեն կը ճամբվի, վասնզի հոգաբարձուներէն մէկուն գետնէն բարեւ չէ տվեր։ Եթէ քանի մը ամիս պաշտոն վարէ եւ ամսական ուզէ՝ կը փոնտվի ամսական ուզած ըլլալուն համար, եւ միշտ սա խոսքերը կը լսէ. «Ազգին ստակովը[69] կապրիք, ազգին վրա բեռ եղած էք. գացէ՛ք, կորսվեցէ՛ք» ։ Ա՜հ, Աբիսողոմ աղա, չէք գիտեր, թէ ինչ կը քաշեն Պոլսո դասատուները. խեղճութեան զենիթը բարձրացած են. չեմ կարծեր, որ ատոնք իմանալէն ետքը դասագիրքերէս հարյուր օրինակ չառնէք։

— Այդ ճաշարանն ասկից շատ հեռո՞ւ է։
— Չէ, մոտեցանք։ Միայն դասատուները չեն, որ այս վիճակի մէջ են. խմբագիրները, հեղինակները, տպարանապետները, գրավաճառներն, վերջապէս անոնք, որ գիրքով կզբաղին, թշվառութեամբ կը զբաղին։ Հառաջիմություն կը պոռանք եւ ետ ետ կերթանք, լույս կը պոռանք եւ դէպի խավար կերթանք, աջ կը կոչենք եւ դէպի ձախ կերթանք, ապագա կըսենք եւ դէպի անցեալը կը վազենք։ Ո՜հ, մեծ մեծ խոսքեր, իսկ մեծ գո՞րծ...

Ո՜հ, մեծագործություն...
Ո՜հ, մեծախոսություն...

/ 68 գաղիական — ֆրանսիական
69 ստակովը — դրամ, փող /

— Կերակուրներն ի՞նչպէս են այն ճաշարանին։
— Աղէկ են։ Հարյուր դասագիրքը տունը ղրկե՞մ, թէ...
— Պատասխանը քանի մ՝օրէն կուտամ...

Երկու բանակիցներն խոսելով հասան ճաշարանին առջեւ։
— Հրամմեցէ՛ք, մտէ՛ք, Աբիսողոմ աղա։

Աբիսողոմ աղա կը մտնէ ճաշարան եւ չորս կողմը հայելիներէ ուրիշ բան չտեսնելով՝
— Սխալ եկանք,— կըսէ,— հոս հայելի կը ծախեն։
— Չէ, չէ։

Երկու բարէկամներն կը նստին սեղանի մ՝առջեւ։ Մանչուկը կը բերէ կերակուրներու ցուցակը։ Աբիսողոմ աղա թուղթը կառնէ, վրան կը նայի, կը դարձունէ, ետեւի կողմն ալ կը նայի եւ սեղանին վրա կը դնէ։

— Ի՞նչ պիտի ուտէք,— կը հարցունէ դասատուն։
— Միսով կերակուրը կուտեմ եւ։ Դասատուն մանչուկը[70] կը կանչէ եւ կերակուր կապսպրէ թէ՛ Աբիսողոմ աղային համար եւ թէ՛ իրեն համար։

— Ահա այսպէս, Աբիսողոմ աղա, դասատուներուն այս վիճակը լսելով չե՞ս ցավիր։
— Չցավիլն ալ խո՞սք է։
— Կը վայլէ՞ ազգի մը այսպէս մուրացկանի պէս ապրեցնել յուր վարժապետները։
— Չվայլեր։
— Եթէ կուզէք, գիրքերս այս գիշեր տունը ձգեմ։
— Հիմակու հիմա թո՛ղ մնա, ուրիշ օր մը խոսինք ատոր վրա։

Մանչուկը կերակուրները կը բերէ. Աբիսողոմ աղան երեսը խաչակնքելով՝ երկու պատառ կընէ եւ կը կլլէ իրեն բերված խորոված միսը. ետքը բարեկամին դառնալով կըսէ.
— Կտոր մը միսով մա՞ղդ կը կշտանա. զրուցէ՛ սա անպիտանին, որ քիչ շատկեկ բերէ։

Մանչուկը կը կանչվի, եւ բիլավ[71] կապսպրվի։ Այս միջոցին միջահասակ եւ գիրուկ երիտասարդ մը կը մտնէ ճաշարան՝ ի ձեռին ունենալով ծրար մը եւ ուղղակի Աբիսողոմ աղային առջեւ կուգա։
— Կարծեմ,— կըսէ,— Աբիսողոմ աղան տեսնելու պատիվը կը վայելեմ։

Աբիսողոմ աղա բան մը չհասկնալով նոր եկողին երեսը կը նայի անբարբառ։ Քովի բարեկամն ալ ձայն չհաներ։
— Կարծեմ,— կը կրկնէ,— այն մեծ մարդուն առջեւ գտնվելու բարեբախտությունն ունիմ, որ մայրաքաղաքս եկած է մեկենաս անվանվելու համար։
Աբիսողոմ աղան, որ այս ձեւերուն տեղեակ չէր, գդալը կառնէ եւ կսկսի ուտել բիլավն, զոր նոր բերած էր մանչուկը։ Սեղանակիցն ալ նոր գրագէտի մը գալն իր գործոյն արգելք համարելով՝ չուզեր անոր պատասխանել։
— Կարծեմ, կ՝երեքկնէ[72], այդ ազնիվ անձին քովը գտնվելու բախտը կը վայելեմ, որուն անունը քանի մը օր առաջ լրագրի մը մէջ կարդացի։

Աբիսողոմ աղան, որ բիլավով կզբաղեր, դարձեալ պատասխան չտար, եւ նոր եկողը կստիպվի պարզել յուր խոսքն ըսելով.
— Աբիսողոմ աղան հրամանքնիդ էք կարծեմ։
— Այո՛, ես եմ։

/ 70 մանչուկը — մատուցող տղա
71 բիլավ — փլավ
72 կ՝երեքկնէ — երրորդ անգամ կ՝ըսէ /

Նոր եկողն աթոռ մը կառնէ եւ կը նստի։ Մանչուկը կուգա հարցնելու վերջէն եկողին, թէ ի՞նչ կուզէ ուտել։

— Եղի մէջ հավկիթ,— կը պատասխանէ՝ ձեռքի ծրարը քովի աթոռին վրա դնելով։ Աբիտողոմ աղան բիլավն ալ կը հատցունէ եւ կասկարայի[73] ձուկ կապպարէ ։

— Էհ, Աբիտողոմ աղա,— կըսէ նորեկը,— մեծ պատիվ, մեծ բախտ կը համարեմ ինծի ձեզի պէս բաբեսիրտ անձի մը սեղանակից գտնվիլս։ Ծառադ՝ ազգային գրագէտներուն ամենէն ետինն եմ, գրեթե քիչ մ՚ալ բանաստեղծ եմ. քանի մը ողբերգություն գրած եմ եւ կուզեմ որ անոնց յուրաքանչյուրէն քսանական օրինակ ձեզի նվեր ընեմ... — Օ՜օ, Աբիտողոմ աղա,— կըսէ երրորդ մը խնդում երեսով Աբիտողոմ աղային մոտենալավ,— բարի եկած էք։
— Բարի տեսանք։

— Ես ազգային փաստաբաններէն եմ եւ ձեր գալն լսելով փութացի իմ խոնարհ հարգանքներս ձեզի մատուցանել եւ միանգամայն հայտնել, թէ ձեր դատերն ինծի հանձնէք։
— Ես դատ չունիմ։

— Եթէ դատ չունիք, ինչո՞ւ ուրեմն եկաք հոս։
— Ուրիշ գործի մը համար։

— Անկարելի է, որ ձեզի պէս մարդ մը դատ չունենա. ոչ միայն անկարելի է, այլ անպատվություն ալ է. ձեզի պէս մէկը հարյուրներով դատեր ունենալու է, եւ ձեր շնորհիվ քանի մը փաստաբաններ ապրելու են։ Եթէ դուք դատ չունենաք անգին աղքա՞տը պիտի ունենա։

— Մէկու մը հետ դատ չունիմ։
— Զարմանալի բան. մէկու մը դէմ դատ բանալու ալ միտք չունի՞ք։

— Բնավ, դատ բանալու պատճառ մը չունիմ։
— Դատ բանալու համար անպատճա՞ռ պատճառ մը ունենալու է. մէկու մը դէմ դատ կը բանաք, կը լմննա կերթա։

— Է, ի՞նչ կը շահիմ։
— Դուն չես շահիր, բայց փաստաբանը կը շահի. քեզի համար աղոթք կընէ։ Մեծ մարդերն հիմա այնպէս կընեն. փաստաբաններն ապրեցնելու համար՝ իրենց դէմն ելնողներուն դէմ պատվո դատ կը բանան։

— Ես անանկ խայտառակություններ չեմ սիրեր։
— Ես կատակ ըրի, Աբիտողոմ աղա. բայց կատակը մէկդի դնենք եւ լրջորեն խոսինք,— ըսավ փաստաբանը ծանր կերպարանք մ՚առնելով. լսեցի, որ շոգենավուն մէջ մէկու մը հետ քիչ մը առեր, տվեր էք, եւ այն մէկը ձեր պատվույն դէմ ծանր խոսքեր ըրեր է։

— Ամէնեւին։
— Թէ դուք ալ անոր քանի մը խոսք ըրեր էք...
— Բնավ։

— Թէ վերջը ծեծկվուքի[74] ելեր էք...
— Անանկ բան մը բնավ եղած չէ։
— Թէ դուք անոր գլխուն զարկեր էք...

/ 73 կասկարայ — թավա
74 ծեծկվուքի — ծեծ /

— Սուտ է։
— Թէ անիկա ալ ձեզի ապտակ մը տվեր է...

— Բոլորովին սուտ։
— Թէ երրորդ մը մէջ մտեր է...

— Երկրորդ չկա, որ երրորդ ըլլա։
— Թէ քու թեւէդ քաշեր է...

— Սխալ։
— Թէ անոր ալ ձեռքը բռներ է...

— Սուտ։
— Թէ ասանկով զձեզ բաժներ է։

— Բնավ տեղ չկա։
— Թէ դուք այս բաժանումէն գոհ չըլլալով՝ դատ բանալ ուզեր էք։

— Որչա՜փ սուտ։
— Թէ վարպետ փաստաբան մը փնտրեր եք...

— Ամէնն ալ սուտ։
— Թէ զիս կանչել տալ ուզեր եք...

— Ամէնեւին։
— Որպեսզի ձեր դատը պաշտպանեմ. եւ ես ալ ասոր համար եկա։
— Ատանկ բան մը չկա։

Այս խոսակցության միջոցին երկու երեք հոգի եւս կուգան՝ ամենն ալ Աբիսողոմ աղային կամ գիրք նվիրելու կամ լրագրի մը բաժանորդ գրելու դիտավորութեամբ, եւ ամենը պատվական ճաշ մ՚ալ կընեն իրենց առաջարկությունները ներկայացնելով։ Աբիսողոմ աղան հազար անեծք կարդալով ճաշարանն եկած ըլլալուն վրա՝ մանչուկը կը կանչէ եւ հաշիվը կուզէ։ Մանչուկն անմիջապէս կը բերէ հաշիվն, որու գումարն էր քառասուն ֆրանք, զոր տաճկերէն դրամի կը թարգմանեն եւ կըսեն Աբիսողոմ աղային հարյուր յոթանասուն եւ վեց դահեկան[75]։

— Հարյուր յոթանասուն եւ վեց դահեկա՜ն... ես այնչափ բան չկերա։

— Այո՛, դուք չկերաք, բայց ձեզի եկող հյուրերն ալ կերան,— ըսավ փաստաբանն, որու կը վերաբերեր այս դատին պաշտպանությունը։

— Իրավ որ մեծ պզտիկություն եղավ, որ Աբիսողոմ աղան վճարէ մեր ճաշը,— ըսավ մին։

— Այո, ես շատ ամոթով մնացի, մեր պարտականությունն էր անոր կերակուր հրամցնելն,— կրկնեց երկրորդ մը։

— Ներեցէք մեր անքաղաքավարությանն,— ըսավ չորրորդ մը,— ուրիշ անգամ մենք ձեզի կը հրավիրենք ճաշի։

Աբիսողոմ աղան առանց պատասխանելու՝ ստակները համրեց եւ ճաշարանէն դուրս նետեց ինքզինքը՝ որոշելով, որ մէյ մ՚ալ ճաշարան չմտնէ։

/ 75 դահեկան — դրամ՝ 8 մանրադրամի արժեքով /

Ժ

Հետեւինք ուրեմն Աբիսողոմ աղային, որմէ վայրկեան մը չբաժնվեցանք մինչեւ հոս եւ բաժնվելիք ալ չունինք մինչեւ պատմութեանս վախճանը։ Ազնիվ ընթերցողն մինչեւ հոս տեսնելով գրեթէ միօրինակ տեսարաններ, որք բնավ հարաբերություն չունին իրարու հետ, քանի մը անգամ մտքէն անցուց անշուշտ, թէ ինչո՞ւ միայն Աբիսողոմ աղային օձիքը բռներ կերթանք եւ մյուս անձերն, անգամ մը ներկայացնելէն ետքը, բոլորովին կը մոռնանք։ Այս պակասությունը, եթէ երբէք պակասություն է, մեր վրա գրելու չէ, այլ նյութին բնութեանը։

Ամեն նյութ բնություն մ՚ունի։ Նյութ կա, որուն բնությունն է լալ, նյութ կա, որուն բնությունն է խնդալ, նյութ կա, որուն բնությունն է համոզել, նյութ կա, որուն բնությունն է հուզել, դարձեալ նյութ կա, որուն բնությունն է արձակ, ինչպէս նաեւ կա, որուն բնությունն է ոտանավոր, վերջապէս նյութ կա, որուն բնությունն է կրկնություն... Յուրաքանչյուր նյութ իրեն հատուկ ընդհանուր բնութենէն զատ ունի նաեւ մասնավոր բնություններ։ Եվ որովհետեւ մենք հոս ճարտասանութեան դաս տալու պաշտոն չունինք, համառոտիվ մեր միտքը բացատրենք եւ անցնինք։ Մոլիէրի «Միզանթրոբն»[76] ալ կատակերգություն է, «Լէ Ֆաշէոն»[77] ալ, բայց ասոնց յուրաքանչյուրն իրարմէ այնքան տարբեր մասնավոր բնություններ ունին, որ Մոլիէր չէր կարող «Լէ Ֆաշէոյի» տեսարաններով «Միզանթրոբ» մը շինել, ոչ ալ «Միզանթրոբի» տեսարաններով «Լէ Ֆաշեոն» գրել։ Կարծեմ կրկնություն է ըսել, եւ ալ ուրիշ վէպերու տեսարաններով չէի կարող գրել «Մեծապատիվ մուրացկաններս», որոնց բնությունն է աներեւույթ ըլլալ Աբիսողոմ աղային անգամ մը ներկայանալէն ետքը։ Կը խոստովանիմ, որ եթէ սույն նյութը Օվրատիոս[78] առներ, երգիծանք մը կը շիներ, եւ եթէ Մոլիէր ձեռք անցուներ, կատակերգություն մը կը հորիներ. բայց մենք, որ ապրելու պէտք ունինք, ստիպված ենք ժամանակին հարմարիլ, շատ անգամ բանթալոնէն բաճկոն եւ երգիծանքէն վէպ շինելով։

Այս համառոտ բացատրութենէն ետքը դառնանք Աբիսողոմ աղային։

Աբիսողոմ աղան, ինչպէս կը հիշէ ընթերցողն, տուն դարձավ՝ շարունակելով յուր բարկությունն, զոր զգացած էր ճաշարանի մէջ ունեցած ինքնահրավեր սեղանակիցներուն վրա։ Տուն դառնալուն պէս իմաց արվեցավ, որ քսանի չափ նամակներ դրկված էին իրեն։ Վեր ելավ, նամակները մէկիկ մէկիկ բացավ, կարդաց, պատռեց եւ գետինը նետեց։ Սենեակին մէջ քանի մը անգամ դառնալէն ետքը հանկարծ կանգ առավ եւ պոռաց.

/ 76 *Մոլիէր գրական-թատերական կեղծանունն է Ժան-Բատիստ Պոկլէնի (1621, (կամ 1622) — 1673), որ հռչակավոր ֆրանսիական դրամատուրգ-կատակերգու էր եւ դերասան։ Իր ժամանակ առաջադէմ մարդկանց մէկը լինելով՝ Մոլիերը բազմաթիվ կատակերգությունների մէջ խարազանում էր արիստոկրատիայի եւ հոգեւորականութեան բարքերը («Ժլատ», «Դոն-Ժուան», «Միզանթրոբ», «Տարտյուֆ» եւ այլն)։ Մեծ ազդեցություն է ունեցել համաշխարհային կոմէդիայի զարգացման վրա։ Նրա պիէսներից մի քանիսը թարգմանվել են հայերէն*

77 *Լէ Ֆաշէո («Անտանելիները») և Միզանթրոբ («Մարդատյացը») ֆրանսիական հռչակավոր դրամատուրգ Մոլիէրի երկու կատակերգութեան վերնագրերն են։ Առաջին գրվածքը թեթեւ կատակերգութեան բալետ է, որի մէջ հեղինակը կարեւոր տեղ է հատկացրել պարին, երգին ու երաժշտութեանը, մասամբ գրված է Լյուդովիկոս XIV-ի պատվերով, գրական խոշոր արժեք չի ներկայացնում. իսկ երկրորդը Մոլիէրի հանճարի լավագույն գործերից մէկն է. այն տիպի կատակերգություններից, որոնց մէջ ավելի դրամատիզմն է ուժեղ, քան թէ զավեշտը։ «Միզանթրոբը» լուրջ քննադատությունն է XVII դարի ֆրանսիական արիստոկրատիայի։ Պարոնեանն ուզում է ասել, որ բովանդակութեամբ է որոշվում ձեւը, եւ այդ երկու գրվածքի տարբեր բովանդակությունների համեմատ՝ պէտք է տարբեր ձեւեր ունենան նրանք*

78 *Օվրատիոս-Հորացիոս (65 թ.–8 թ. Ք. ա.)— համաշխարհային հռչակ վայելող հռոմեական բանաստեղծ. գրել է ներբողներ, նամակներ, երգիծական բանաստեղծություններ, որոնց մէջ վարպետությունը հասցրել է բարձր կատարելության* /

— Ասոնք զիս քթէս բռնելով կողոպտե՞լ կուզեն։ Սա քաղաքը գալէս ի վեր վայրկեան մը ինքս իմ գլխուս չմնացի. հազիվ մէկը կերթա, մյուսը կուգա, ստակ կուզէ. ես աս տեղ ամենուն ստա՞կ տալու համար եկա։ Ի՞նչ աներես մարդեր են... այսչափ աներեսություն ոչ լսված բան է, ոչ ալ տեսնված։ Եթէ փնտեմ[79] ըսես, ո՞ր մէկը փնտելու է, ո՞ր մէկուն հասնելու է. օրականով չորս հինգ հոգի վարձելու է, որ ուրիշ գործ չունենան, միայն եկողները փնտեն... Եթէ փնտելու ելնես, այն ատեն ալ բոլոր քաղաքին մէջ պիտի բամբասեն զիս՝ ըսելով, թէ անքաղաքավար մարդ է, թէ ստակ չունի։ Չեմ ալ ուզեր, որ վրաս գէշ խոսվի... Աս ի՞նչ փորձանք եկավ գլխուս, Տէր Աստված... Բարով խերով ոտք չկոխէի սա քաղաքը։ Գլուխ ելնելու բան չէ, շուտով աղջիկ մը գտնելու է, շոգենավ մտնելու եւ փախչելու է. ասոնք պիտի սնանկացնեն մարդը... Քաշվելու բան չէ սա... ճաթելու բան է։ Աշխատէ, արյուն քրտինք թափէ, քիչ մը ստակ վաստակէ եւ հոս եկուր վարժապետներուն, բաներուն ցրվէ. ո՞ւր լսված բան է սա...

— Կարծեմ այս իրիկուն բարկացած էք,— ըսավ Մանուկ աղան սենեակին դուռն կամացուկ մը բանալով եւ ներս մտնելով։

— Բարկությունն ալ խո՞սք է. իմ տեղս եթէ ուրիշ մը ըլլար, մինչեւ հիմա բարկութենէ ճաթած էր։

— Ի՞նչ եղավ, հոգի՛ս։

— Ի՞նչ կուզես, որ ըլլա. վայրկեան մը հանգիստ չեն թողուր. տուն կը նստիմ, վրաս կը թափվին, ստակ կուզեն. փողոց կելնեմ, չորս կողմս կպաշարեն, ստակ կուզեն. ճաշարան կերթամ, բոլորտիքս կը շարվին, ստակ կուզեն. եւ ես ասոնց ձեռքին խալսելու համար տունէն փողոց, փողոցէն տուն կը վազեմ։ Կաղաչեմ, ասոնց ձեռքէն խալսելու համար ո՞ր ծակը մտնեմ, ըսէ՛ ինծի։

— Իրավունք ունիս. ես չե՞մ հասկնար, ինծի ալ թող տվի՞ն, որ սա թաղականին գործը պատմեմ։

— Քսան նամակ դեռ հիմա պատռեցի։

— Ի՞նչ ըսած էին այդ նամակներուն մէջ։

— Ըսած էին, թէ հետս գալ կուզէին տանս վարժապետություն ընելու համար, թէ գիրք մը ինծի պիտի նվիրեն եղեր, եւ ասոր համար քսան ռսկի տալու եմ եղեր, թէ լրագրի երկու բաժանորդ գրվելու եղեր, թէ... ի՞նչ գիտնամ, ո՞ր մէկը համրեմ, ո՞ր մէկն ըսեմ, դիմանալու բան չէ։

— Անոնք ալ աղքատ են խեղճերն, ինչ ընեն։

— Ապրելու համար թող ուրիշ գործ մը փնտրեն, արհեստ մը տրվին, վերջապէս ընեն, ինչ որ կուզեն. ես ի՞նչ հանցանք ունիմ, որ կուգան գլուխս կը թափվին, եղբա՛յր. ունեցածս չունեցածս հանեմ, անո՞նց տամ։

— Ի՞նչու անոնց տաս։

— Մարդս քիչ մ՚ալ ամչնալու է... չճանչցած մարդուս երթամ եւ բարեւ, Աստծու բարին, ինծի ստակ տուր, ըսեմ... դուն կրնա՞ս ըսել։

— Աստված ան օրը չցցունէ։

Սենեակին դուռը նորէն բացվեցավ, եւ քսանհինգ տարեկանի մոտ միջահասակ պատանի մը դողդողուն քայլերով ներս մտավ եւ նամակ մը հանձնեց Աբիսողոմ աղային, որ նամակը չբանալով հարցուց բարկութեամբ.

— Ի՞նչ կուզես, մարդ։

— Մէջը գրված է,— պատասխանեց պատանին թոթովելով։

— Դուրսը մէջը քեզի ըլլա, ի՞նչ կուզես, ըսէ։

— Վաղը իրիկուն ներկայացում մը պիտի տամ իմ հաշվույս համար, եւ ձեր ազնվութեան օթեակի[80] մը տոմսակ բերի։

79 փնտել — դուրս անել

80 օթեակ — թատերական և այլ հանդիսարահներում առանձնացրած պատշգամբանման տեղ, սենեակ՝ մի քանի հանդիսատեսի համար (լոժա)

— Ես չեմ ուզեր,— պատասխանեց Աբիսողոմ աղան՝ նամակը պատանվույն երեսը նետելով։
— Բռնութեամբ գործ ալ չըլլար,— ըսավ Մանուկ աղան։

— Տասը տարիէ ի վեր,— ըսավ պատանին,— թատերական բէմին վրա կը քալեմ...
— Թող նստէիր,— պոռաց Աբիսողոմ աղան։

— Եվ ազգին ծառայություն կընեմ։
— Աղայություն ընէիր թո՛ղ, ինչո՞ւս պէտք իմին, ատոնք պարապ խոսքեր են։

— Իրավունք ունի, ատոնք պարապ խոսքեր են,— կրկնեց Մանուկ աղան։
— Տասը տարիէ ի վեր է, որ բարոյական դպրոցի մը մէջ ազգին վարժապետություն կընեմ։
— Ի՞նչ փույթ ինծի։
— Ի՞նչ փույթ անոր,— արձագանք տվավ Մանուկ աղան։

— Եվ իրավունք ունիմ, կարծեմ, ինծի համար տրվելիք ներկայացման ձեզի պէս ազնիվ մէկն ալ հրավիրել։
— Ես պէտք չունիմ։
— Ան պէտք չունի,— կրկնեց Մանուկ աղան։

— Եթէ դուք օթեակ մը չէք ընդունիր, որո՞ւ ուրեմն տամ օթեակի տոմսակներն։
— Ուր ուզես, հոն տար. ատ իմ խառնվելու բանս չէ։
— Ատ իր խառնվելու բանը չէ, տղա՛ս,— ըսավ Մանուկ աղան։

— Կաղաչեմ, մի՛ մերժէք այս տոմսակն. եթէ մերժելու ըլլաք, զիս փողոցներու մէջ խայտառակ ընելու պատճառ պիտի տաք։
— Գնա՛ բանդ, ես ձանձրացա այդ տեսակ խոսքեր մտիկ ընելէ։
— Ան ձանձրացավ այդ տեսակ խոսքեր մտիկ ընելէ,— հարեց Մանուկ աղան։
— Ա՛հ, եթէ ասկից ձեռնունայն ետ դառնամ, իմ մահս պիտի տեսնեմ։
— Քեզ մտիկ ընելու ժամանակ չունիմ։
— Քեզ մտիկ ընելու ժամանակ չունի,— ըսավ Մանուկ աղան։
— Մէկ ոսկիի բան է, ընդունեցէ՛ք զայն, կաղաչեմ, մեծ հուսով եկած եմ հոս, պարապ ետ մի դարձունէք զիս։
— Դուրս է՛լ, գնա՛, Աստվածդ սիրես, քե՞զ մտիկ պիտի ընենք հոս։

Սենեակին դուռը նորէն բացվեցավ, եւ մազերու մէջ ճերմակ ինկած՝ հիսունը անցած մարդ մը ներս մտավ հանկարծ եւ յուր խոսքերն Աբիսողոմ աղային ուղղելով՝
— Չե՞ս խպնիր[81] դուն,— հարցուց։
— Ինչո՞ւ պիտի խպնիմ,— պատասխանեց Աբիսողոմ աղան շվարելով։
— Ինչո՞ւ խեղճ տղան երկու ժամէ ի վեր հոս կսպասցնես։

— Ո՞վ կսպասցունէ, ո՞վ կուզէ, որ սպասէ, կը փոնտեմ, չերթալ։
— Կը փոնտես, բայց առանց մի ոսկի պարտքդ տալու։
— Ո՞վ պարտք ունի անոր։

— Դուն ունիս. եւ եթէ ան չըսեր ինծի, թէ քեզմէ առնելիքն այս իրիկուն պիտի առներ եւ ինծի պիտի տար, ես չէի տպեր այդ տոմսակներն եւ ներկայացման ազդերը։ Երկու ժամ է, որ վարը դռան առջեւ կսպասեմ, որ իջնա եւ պարտքը տա, եւ դուն հոս կը խաղցունես խեղճը։

— Աս ի՞նչ է, ես անոր պարտք ունենա՛մ... ամենեւին...
— Ամենեւին,— ըսավ Մանուկ աղան։

/ 81 *խպնել — ամաչել* /

— Ես անպատճառ առնելիք ունիմ չըսի քեզի, պարոն տպարանապետ,— ըսավ դերասանը,— այլ ըսի, թէ օթեակի տոմսակ մը պիտի տամ, ոսկի մը պիտի առնեմ։
— Ինչո՞ւ ուրեմն խաբեցիր զիս, ստախո՛ս։
— Որպեսզի ծանուցումները ետ չմնան։
— Ես քու խաղալի՞քդ եմ։
— Ան քու խաղալի՞քդ է,— ըսավ Մանուկ աղան։

— Ինչո՞ւ խաղալիքս ըլլաս։
— Թշվառակա՛ն, խայտառա՛կ, անամո՛թ, աներե՛ս...
— Ատոնց ամենն ալ դու ես։
— Դո՛ւ ես։
— Ես չեմ, դու ես։

Ես չեմ, դու ես-ի վրա ծեծկրուք կը ծագի դերասանին եւ տպարարանապետին մէջտեղ, Աբիտողոմ ու Մանուկ աղաները մեծ դժվարութեամբ կը հաջողին զանոնք իրարմէ բաժնել։

— Վա՛ր իջէք,— պոռաց Աբիտողոմ աղան զանոնք զատելէն ետքը,— վար իջէք եւ հոն կռվեցէք։

— Դուն մեր կռվույն խառնվելու ի՞նչ իրավունք ունիս. դուն զիս չես կրնար փոնտել. ես առնելիքս կուզեմ եւ ինծի պարտական եղողն ուր որ գտնեմ, հոն կրնամ մտնել։

— Դուն վար իջիր,— ըսավ դերասանին Աբիտողոմ աղան։
— Ի՞նչպէս իջնամ. տեսար, որ աչքիդ առջեւ ինչեր ըրավ։

— Մինչեւ որ ան չիջնա, ես քայլ մը չեմ առներ,— կրկնեց տպարանապետը։
— Մինչեւ որ ան չհեռանա, ես չեմ կրնար փողոց ելնել,— ըսավ դերասանը։
— Մենք իջնանք ուրեմն, Մանուկ աղա,— ըսավ Աբիտողոմ աղան։

Դերասանը Աբիտողոմ աղային ծունկերուն փաթթվելով աղաչեց, որ ոսկի մը փոխ տա գոնէ։ Աբիտողոմ աղան շատ ընդդիմացավ, բայց հետո տեսնելով, որ անոնց ձեռքէն ուրիշ կերպով փրկվելու ճար չկա, ակռաները կրճտելով հանեց բարկութեամբ, ոսկի մը տվավ տպարանապետին, որ շնորհակալություն հայտնելով դուրս ելավ։ Դերասանն ալ ներումն խնդրելով վար իջավ եւ գնաց։

— Ասոր ի՞նչ կըսես, Մանուկ աղա։
— Ըսելիք չմնաց, Աբիտողոմ աղա։

— Հրամանքդ վար իջիր, դուռը գոցէ եւ ապսպրէ, որ չբանան դուռն։
— Շատ լավ։

— Որպեսզի այս գիշերը գոնէ հանգիստ անցունենք եւ մեր ի՞նչ ընելիքին վրա խորհինք։
— Իրավունք ունիս։

— Շուտ ըրէք, վասնզի հիմա մէկիկ մէկիկ կուգան։
— Հիմա կերթամ։

Մանուկ աղան վար գնաց իրեն տված հրամանները կատարելու, եւ Աբիտողոմ աղան գլուխը բարձի մը վրա դրավ քիչ մը հանգստանալու համար։

ԺԱ

Աբիտողոմ աղան քանի մը ժամ քնացավ բազմոցի վրա։ Սակայն դատելով այն ձայներէն, զորս կը բառնար քունին մէջ, կը հասկցվեր, թէ խմբագիրներն, բանաստեղծներն եւ դաստառներն քունի մէջ ալ հանգիստ չէին թողուր զինքն, որ կը պոռար մերթ ընդ մերթ. «գացէ՛ք, կորսվեցէ՛ք, ստակ չունիմ ա՛լ տալու» ։ Երեք ժամու չափ այսպես հուզված մրափելէն ետքը մէկէն ի մէկ աչքերը բացավ ահ գոչելով։ Կարծես խմբագիր մը անոր կոկորդէն տմելով խղդեր կսպառնար զինքն, եթէ չբարեհաճեր յուր թերթին բաժանորդ գրվելու։ «Տէր ողորմեա, Տէր ողորմեա»,— պոռաց աչերը շփելով,— «հանգիստ քուն մ՚ալ չունինք» ։

Հետո ոտքի ելնելով գազը վառեց եւ կանչեց Մանուկ աղան, որուն քիչ մը կերակուր ապսպրեց[82]։ Քառորդէ մը բերվեցավ կերակուրն, որուն հաջորդեց խահվէն, որուն ետեւէն եկավ քունը։ Հանվեցավ Աբիտողոմ աղան եւ անկողինը մտավ քնանալու համար։ Հարկ չէ կրկնել, թէ նույն գիշերն հանդարտ քուն մը չունեցավ։ Առավոտուն կանուխ ելավ անկողինէն, երեսը լվաց, հագվեցավ, տունէն դուրս ելավ եւ շիտակ պ. Դերենիկին գործատունը գնաց լուսանկար պատկերը քաշել տալու համար։

Գործատունը դեռ բացված չէր, եւ Աբիտողոմ աղան Բերայի փողոցներուն մէջ կը շրջեր, որպէսզի ժամանակ անցնի, եւ գործատունը բացվի։ Ժամը չորսին (ըստ տաճկաց) բացվեցավ գործատունը, եւ Աբիտողոմ աղան սանդուղէ մը վեր ելնելով մտավ սենեակ մը, որ լուսանկար պատկերներով զարդարված էր եւ ուր պ. Դերենիկ նստած կը կարդար։

— Բարի եկաք, Աբիտողոմ աղա, սանկ հրամմեցէք,— ըսավ պ. Դերենիկ՝ սեղանի վրա դնելով լրագիրն։ Եվ հետո գրագրին դառնալով նշանացի հրամայեց անոր, որ խահվէ բերեն։
— Ժամ առաջ քաշէք սա պատկերս, որովհետեւ քանի մը մեծ մարդոց այցելություն պիտի ընեմ։
— Շատ լավ։

— Կուզեմ, որ պատկերս փառավոր կերպով քաշվի։ Կուզեմ թիկնաթոռի մը վրա նստիլ, առջեւս ունենալ երկու սպասավոր, մէկ աղախին. այնպէս ըրէք, որպէս թէ ագարակի մը մէջ ըլլամ, ատին վարուցան, անդին կովերէն կաթ կթեն, ատին ոչխարներն արածեն, ատին ցանեն՝ անդին քաղեն, ատին հերկեն, անդին մածուն շինեն, ատին ձմերուկ փրցունեն, անդին կարագ շինեն, ատին սագերը ծովու մէջ լողան, անդին անտառին մէջ փայտ կտրեն, ատին սայլերով ցորեն փոխադրեն, անդին վերջապէս ինչ որ կըլլա ագարակի մը մէջ, տեսնվի պատկերիս մէջ։

— Այդ ամենը կարելի չէ կատարել. միայն քանի մը սպասավորներ կրնամ կայնեցնել քովդ։
— Ինչո՞ւ չըլլար։
— Որովհետեւ անկարելի է։
— Մեծ մարդոց համար ի՞նչպես կընէք։
— Անոնք աթոռի վրա նստած կամ ոտքի վրա քաշել կուտան իրենց կենդանագիրը[83] ։
— Ի՞նչպէս ուրեմն կը հասկցվի անոնց մեծ մարդ ըլլալը։
— Պատկերը մեծկակ[84] ու փայլուն կըլլա։
— Իմի՞նս ալ անանկ պիտի ըլլա ուրեմն։
— Այո՛։
— Ոտքի՞ վրա, թէ նստած։
— Ինչպէս որ կուզէք։
— Դուք ի՞նչպէս կուզեք. ի՞նչպէս հանեմ նէ, աղէկ կըլլա ։

/ 82 ապսպրեց — պատվիրել
83 կենդանագիր — լուսանկար
84 մեծկակ — մի փոքր մեծ /

— Ձեզի համար ոտքի վրա կը վայլէ։
— Շատ աղեկ. սպասավորներն ալ դէմս։
— Այո՛։
— Ես անոնք չափելու պէս կըլլամ, անոնք ալ առջեւնին կը նային։
— Սքանչելի։
— Ծեծելու պէս կըլլամ զանոնք, եւ վերջը բարկությունս իջած կըլլա։
— Աղէկ խորհած էք։



— Հագուստներս ի՞նչպէս են։
— Ընտիր։
— Ուրիշ ժամացույց մը ալ ունիմ, անի ալ կրնա՞նք մէկ կողմերնիս կախել։
— Մէկ ժամացույցը բավական է, ավելին ավելորդ է։
— Այս հագուստներուս համար հիսուն ոսկի տված եմ. անոնց խումաշին[85] աղէկ եւ ընտիր ըլլալն ի՞նչպէս պիտի հասկցվի պատկերէս։
— Հոգ մի՛ ըներ, կը հասկցվի։
— Ընտո՞ր[86] պիտի ցուցնես։
— Հանգիստ եղէ՛ք։
— Չկարծվի սակայն, թէ երկու ոսկինոց հագուստ է հագածս։
— Այդ մասին անհոգ եղէ՛ք։
— Շատ լավ։
— Ես կերթամ անդիի սենյակն նախնական պատրաստություններս ընելու, քանի մը վայրկենէն հրամանքնիդ ալ հրամմեցէք։
— Շատ աղէկ։
— Եթէ կուզէք, մինչեւ որ անդիի սրահը մտնէք, սափրիչ մը կանչել տանք, որ գա մազերդ ու բեղերդ սանտրէ, շտկէ ու շտկռտէ[87] ։
— Աղէկ։
Գործարանի պաշտոնյաներէն մին վազելով կերթա սափրիչ մը բերելու։

/ 85 խումաշին — թանկագին կերպաս
86 ընտո՞ր — ի՞նչպէս
87 շտկռտել — ուղղել, կարգի բերել /

Քանի մը վայրկյանէն կուգա սափրիչն, որ գլուխն ծռելով եւ ետ-ետ երթալով հարգանքներ կը մատուցանէ Աբիսողոմ աղային։
— Եկուր սա մազերս շտկէ, նայինք,— կըսէ Աբիսողոմ աղան։
— Պարտքերնիս է,— կը պատասխանէ սափրիչը։
— Աղէկ մը շտկէ, որովհետեւ պատկերս հանել պիտի տամ։
— Գլխուս վրա։ Ա՛բ...
— Ես շատ կարեւորություն կուտամ գլխուս։
— Ինչո՞ւ չտաք, վեմապատիվ տէր... Ա՜խ... եթէ դուք չտաք, ո՞վ տա։ Ա՜խ... երանի թէ ես ալ ուրիշ մտմտուք[88] չունենայի եւ...
— Շտկուտէ նայինք։
— Գիտեմ, որ ես հանցավոր եմ ձեզի բարի եկաքի չգալուս համար, բայց ի՜նչ ընեմ... պարագաները թող չտվին, որ կարենայի կատարել այդ պարտականությունս եւ այսօր երես ունենայի, աղաչէի ձեր վեմության, որ...
— Վերջը կը խոսինք, սա մազերս սանրէ... մարդը կապասէ ինձի։
— Վնաս չունի, անիկա կապասէ։ Աղաչելու ձեր վեմութեան, եթէ կարելի է, հիսուն վաթսուն ոսկի մը... ես ալ ազգային սափրիչ մ՝եմ։
— Ի՞նչ ըսել է հիսուն վաթսուն ոսկի...
— Կը խնդրեմ, մի բարկանաք, հիսուն վաթսուն ոսկի փոխատվություն մ՝ընէիք ինձ, որպէսզի այդ գումարն Փարիզ ղրկէի տղուս, որ այդ գումարով պարտքերը տար ու բժշկութեան վկայական առներ, գար ու քանի մը տարիէն վաստկեր ու տոկոսովն ձեզի հատուցաներ։ Բայց ինչ օգուտ, որ այսօր երես չունիմ ասանկ առաջարկություն մը ձեզի ընելու, որովհետեւ բարի եկաքի չեկա ձեզի։ Եթէ բարի եկաքի եկած ըլլայի ձեզի, համարձակություն կունենայի ձեզի աղաչելու, որ սա պզտիկ խնդիրքս կատարէիք, բայց քանի որ բարի եկաքի չեկա ձեզի, դուք ալ իրավունք ունիք խնդիրքս մերժելու, թեեւ ազգային արհեստավոր մ՝ըլլամ։

— Հիմա ատանկ խոսքեր մտիկ ընելու ժամանակ չունիմ, ինչ որ պիտի ընես նէ, ըրէ... Աս ի՜նչ տարօրինակ քաղաք է. բարեւ, Աստծու բարին՝ բարա[89] տուր... Մէկու մը բարեւ տալու չէ... Տէր ողորմեա... Տէր Աստված, մեղա... Ամէն բան սահման մ՝ունի, էֆէնտիմ... Հասկցա... Ժամ առաջ փախչելու է այս քաղաքէն...

— Կերեւի թէ էֆէնտին բարկացուցած են,— ըսավ՝ ներս մտնելով տարիքը հիսունին եւ վաթսունին մէջ կորսված քահանա մը։
— Աս չքաշվիր, տէր հայր։
— Ողջույն օրհնած. թեպէտ եւ դուք զիս չէք ճանչնար, բայց ես ձերին ով ըլլալն շատ լավ գիտեմ... ի՞նչպէս է, պատվական քեֆերնիդ աղէ՞կ է։
— Շիտակը՝ աղէկ չէ։
— Աստված չընէ. Աստուծով քիչ ատենէն ավելի աղէկ կըլլա։ Ձեզի հետ քիչ մը առանձին մնալ կուզէի։ (Սափրիչին) Քիչ մը դուրս կելլա՞ք։ Ես քեզի համար ալ կը խոսիմ, էֆէնտիէն կը հասկնամ խնդիրքդ եւ ես ալ կը բարեխոսեմ, որ ի նպաստ քեզի բան մ՝ընե։ Էֆէնտի, սափրիչնիս ալ, գիտէք ա՞, ազգայիններէն է, անոր ալ երակներուն մէջ Հայկա արյունը կ՝եռա, անտես ընելու չէ զանոնք ալ... (սափրիչը կերթա)։ Ձեզի հետ մասնավոր եւ առանձին տեսակցություն մ՝ընել ուզելուս պատճառն սա է, որ հրամանքնիդ կարգվիլ կուզէք եղեր... եւ ինչո՞ւ չկարգվիք։ Իմացա նէ, շատ ուրախացա, եւ ինչո՞ւ չուրախանայի։ Ձեզի պէսներն կարգվելու են, որ ազգերնուս մէջ հարուստ աղայք շատնան։ Աղվոր աղջիկ կը փնտրէք կոր եղեր... եւ ինչո՞ւ չփնտրէք. ես ալ ձեր տեղն ըլլայի նէ, ես ալ կը փնտրէի։ Ստակ ալ կուզէք կոր եղեր քիչ մը... ինչո՞ւ չուզէք, առանց ստակի կարգվիլն ալ, շիտակը, աղէկ բան մը չէ։ Այդ ես իմ ձեռքիս տակն ունիմ անանկ աղջիկներ, որ թէ աղվոր են եւ թէ հարուստ։

/ 88 մտմտուք — հոգս
89 բարա — փող /

— Շնորհակալ եմ, օր մը կը նայինք, աչքէ կանցունենք զանոնք։ Եթէ կուզէք, քիչ մը սպասեցէք, սա պատկերս քաշել տամ ու երթանք։ Շիտակը խոսելով՝ ես ուրիշ գործ չունիմ հոս, աղջիկ փնտրելու եկած եմ. քանի մ՚օր պիտի մնամ... եթէ կրցի գտնել, կարգվիմ պիտի հետն ու առնեմ, պիտի երթամ, եթէ չգտնեմ, դարձեալ պիտի երթամ, որովհետեւ հոս հանգիստ չեն թողուր զիս վայրկեան մը. ալ ձանձրացա։
— Իրավունք ունիք, ժամանակներն ալ գէշ են, էֆէնտիս, դրամական տագնապ, տագնապ դրամական ամէնուրեք կը տիրէ, ազգին աղքատները շատ են։ Ինչ որ է, կսպասեմ ձեզի ու ի միասին կերթանք։
— Սա անպիտանն ալ մազերս շտկելու համար եկավ ու...

Այս միջոցին պ. Դերենիկ ներս կմտնէ ու
— Հրամմեցէք,— կըսէ,— սրահը։
— Բայց մազերս...
— Հոգ չէ, ես կը սանտրեմ։
— Բայց բեղերս...
— Վնաս չունի, ես կը շտկեմ։
Պ. Դերենիկ Աբիտողոմ աղային կառաջնորդէ լուսանկարի սրահը։

Քահանան առանձին կը մնա եւ կսկսի մտքովը հետեւեալ խորհրդածություններն ընել։ Բայց ի՞նչպէս կրնանք մտքով եղած խորհրդածություններն գուշակել. դէմքէն անշուշտ. դէմքերը շատ անգամ կը խոսին. ինչպէս հարուստներուն, նոյնպէս նաեւ աղքատներուն լեզուն շատ անգամ անոնց դէմքին վրա է։ Մէկու մը դէմքը նայելով կրնանք ըսել՝
— Այս մարդն իձմէ ստակ ուզելու եկած է, կամ այս մարդն ինձի ստակ տալու եկած է։

Քահանային դէմքն ալ կըսեր. «Ի՞նչ ճանփա բռնեմ, որ սա ձմեռվան ածուխիս ու փայտիս ստակն սա մարդէն փրցնեմ»[90] ։

Քահանան այս խորհրդածութեանց մէջ էր, երբ սափրիչն ներս մտավ նորէն ու քահանային ըսավ.
— Տէր հայր, գործս ավրեցիր[91] եթէ ներս չմտնէիր, քանի մ՚ոսկի պիտի փրցնէի այս մարդէն. տվող է՝ կըսեն կոր, տվող. բոլոր խմբագիրներուն եւ դասատուներուն ստակ տվեր է։
— Եղբայր, անոնք չե՞ն մի, որ պատճառ կըլլան կոր, որ մեզի պէս աղքատները չեն կրնար կոր օտարականներէ ստակ փրցնել։ Հյուր մը եկա՞վ մի, բոլոր խմբագիրներն ու դասատուները վրան կը թափին կոր... անիծեալ գարշելիներ...
— Ի՞նչ պիտի ընենք հիմա։
— Ես քեզի համար կբարեխոսեմ, դուն ալ ինձի համար միջնորդէ, գոնէ մէյմէկ[92] կտոր բան փրցնենք սա մարդէն։
— Շատ աղէկ։
— Հիմա հոս պիտի գա, ես անոր ականջն ի վար կըսեմ, որ այս սափրիչը գոհ ըլէ, որովհետեւ շատ հարուստ տուներ կը մտնէ, կելնէ եւ կրնա, եթէ ուզէ, գործդ ավրել։
— Գործը ի՞նչ է։
— Հարուստ աղջիկ մը կը փնտրէ կոր։
— Աղէկ։ Ես ալ կըսեմ, որ քահանայէն զատ մէկու մը մի՛ վստահիր։
— Շատ աղէկ։
— Աս աղէկ ճամբա է։
— Միամիտին մէկն է։
— Այո՛, դյուրահավան է, բայց կողոպտեր են մարդը, էֆէնտի՛մ, կողոպտեր են. մենք շատ ուշ հասանք։

/ 90 փրցնել — պոկել
91 ավրել — խանգարել, փչացնել
92 մէյմէկ — մի մի /

Աբիսողոմ աղան զվարթ դէմքով կը դառնա սենեակն՝ ուր քահանան սափրիչին հետ կխոսեր։

— Ներեցէ՛ք, Աբիսողոմ աղա,— կըսէ սափրիչն,— ձեզի այդ խնդիրքն ընելուս համար. սակայն ես կարծեցի, թէ կրնայի իմ կողմէս ես ալ ծառայություն մ՚ընել ձեզ։

— Աբիսողոմ աղա, պէտք է գիտնալ որ,— կըսէ քահանան,— մեր սափրիչ էֆէնտին գրեթէ մայրաքաղաքիս բոլոր հարուստ տուները կը մտնէ, բոլոր աղջիկները կճանչնա։
— Ի՞նչ կըսէք։
— Այո՛, ինքն ալ բարի մարդ մ՚է, կատարեցէք խնդիրքը, մեղք է։

— Արժանապատիվ հորէն մի զատվիք, եթէ անանկ միտք մ՚ունիք. տէր հոր ձեռամբ կարգված երիտասարդներն միշտ գոհ մնացած են։ Ուրախ եմ, որ ձեր գործը տէր հոր պես բանիբուն եւ գործունեա քահանայի մը ձեռքն ինկած է, վստահ եղէք, որ երջանիկ պիտի ըլլաք ձեր ամուսնութեան մէջ։

— Բայց դուք ալ պիտի օգնէք ինծի, տէր սափրիչ,— կը հարէ քահանան։
— Ես ի՞նչ բանի կարող եմ...

— Ձեր աջակցությունն ալ պէտք է։
— Կընեմ, ինչ որ կարող եմ ընել։
— Շնորհակալ եմ։ Աբիսողոմ աղան օտարական չէ, ազգային է, կարգվելու համար եկած է հոս. մեր պարտքն է օգնել իրեն։

— Հարկավ։ Աբիսողոմ աղային հետ ատելություն մը չունիմ ես, մանավանդ թէ ինքը շատ բարի ու առաքինի մարդ մ՚է։
— Երեսին խոսիլ չըլլա, ընտիր մարդ մ՚է։

— Պատվական մարդ է։
— Վրան նայես նէ, կըսես, որ քիպարությունը[93] վրայէն կը վազե կոր։

— Ո՞վ կը պնդէ հակառակը, ես անոր թշնամին չեմ։
— Այսինքն թէ որ քեզի այլ հարցվի նէ, բարի վկայություն տաս։

— Անշուշտ։
— Աբիսողոմ աղան չիյ[94] մարդ չէ, քեզի կվարձատրէ վերջը։
— Գլխուս վրա, գլխուս վրա։ Ա՜խ, տղուս վկայականն առնվեր անգամ մը։

— Հինգ օրէն ետքը, Աբիսողոմ աղա, հինգ օրէն ետքը պատրաստ են պատկերներդ,— ըսավ պ. Դերենիկ ներս մտնելով։

— Շատ աղէկ,— պատասխանեց Աբիսողոմ աղան ու գործարանէն վար իջավ ընկերակցութեամբ քահանային ու սափրիչին։

/ 93 քիպարություն — ազնվություն, վեհանձնություն

94 չիյ — խակ /

Տիկին Շուշան, զոր ընթերցողն մոռցած չէ անշուշտ, Աբիտողոմ աղային տունէն տեղեկացած էր, թէ... քահանան Աբիտողոմ աղան գտնելու համար պ. Դերենիկի գործատունն գացած էր։ Ուստի որսն քահանային հափշտակել չտալու համար՝ հեւալով կը վազեր դեպի ի պ. Դերենիկի գործարանը, ուր կը հասներ ճիշտ այն վայրկենին, որում քահանան սափրիչն վարպետութեամբ ճամփեղէ հետո՝ Աբիտողոմ աղային կբարեխոսէ հետեւեալ կերպով. «Ներեցէք, որ քիչ մ՚ուշացա ճշմարտությունն ձեզի հայտնելու սափրիչի մասին։ Այս սափրիչը աներես մարդ մ՚է, բոլոր Պոլիս եկողներուն օձիքէն կբռնէ եւ անոնցմէ ստակ կորզելու կաշխատի։ Անպիտանին մէկն է։ Իմ պարտքս է, որպէս խոստովանահայր, զգուշացնել զձեզ այս կարգի մարդերէն, որք միմիայն քանի մը ոսկի հափշտակելու նպատակով կը մոտենան հարուստներուն։ Ո՛րքան կատեմ այդ մարդերը»։

— Շնորհակալ եմ ձեր բարեսրտութենէն եւ մարդասիրութենէն։
— Երես մի՛ տաք այդ մարդոց։
— Ո՛չ։
— Տէր պապա[95], դու ի՞նչ գործ ունիս Աբիտողոմ աղային հետ,— կը հարցնէ տիկին Շուշանն, որ, ինչպէս ըսինք, հեւալով հասած էր։
— Պզտիկ գործ մը։
— Ոչ, բնավ գործ պիտի չունենաս դուն անոր հետը. դուք ձեր պարտքը կատարեցէք եւ թող տվէք, որ մենք ալ մերինը կատարենք. ալ խպնեցէ՛ք քիչ մը։ Երթանք, Աբիտողոմ աղա։
— Ո՛չ, դուք խպնեցէք քիչ մը, մենք Աբիտողոմ աղային հետ պզտիկ գործ մ՚ունինք. երթանք, Աբիտողո՛մ աղա։
Եվ քահանան Աբիտողոմ աղային ձախ թեւէն կը քաշէ։
— Տէր պապայի մը չվայլեր ըրածդ։
— Լռէ՛։
— Չպիտի լռեմ։

— Թո՛ղ տվէք թեւերս։
— Թող՛ չեմ տար,— կը պասասխանէ տիկին Շուշան,— իմ իրավունքս է։
— Ոչ, իմ իրավունքս է։

/ 95 տէր պապա — տէր հայր /

— Քանի մը հարյուր դահեկան առնելու համար կուզես, որ խեղճ մարդը թշվառ ընես. դուն աղջիկ չես ճանչնար ։
— Մի՛ պոռար. պիտի թողում, որ կողոպտէք այս ազնիվ մարդն, այնպէս չէ՞։

— Ինչո՞ւ կռիվ կընէք, ամոթ չէ՞... ես չեմ ուզեր աղջիկ։
— Չըլլար,— կը պատասխանէ տիկին Շուշան,— մենք քեզի աղջիկ մը պիտի գտնենք. բայց թէ որ տէր պապային ձեռքով աղջիկ փնտրես, գիտցած եղիր, որ պատիվդ մէկ ստակի[96] կըլլա։

— Ընդհակառակն, քահանայի ձեռամբը աղջիկ փնտրողն է պատվավորը։ Երթանք, Աբիտողոմ աղա։
— Թող չեմ տար։

— Երթանք, Աբիտողոմ աղա։
— Թող չեմ տար, որ երթա. ես անոր աղջիկներ պատրաստած եմ, աղջիկտեսի պիտի երթանք։

Այս տեսարանը տեղի կունենար պ. Դերենիկի գործատան[97] առջեւ, եւ անցնողներէն պզտիկ խումբ մը հանդիսականի պաշտոն կը վարեր անդ, երբ Մանուկ աղան ստիպված Աբիտողոմ աղան անպատճառ գտնելու՝ եկավ հոն, տեսավ Աբիտողոմ աղան, որուն մէկ թեւէն քահանան եւ մյուս թեւէն տիկին Շուշան կը քաշեր, եւ մէկդի քաշելով զայն՝ քանի մը ծանր խոսքեր ուղղեց քահանային եւ տիկին Շուշանին եւ հեռացուց զանոնք։

— Ա՜հ,— ըսավ Մանուկ աղան Աբիտողոմ աղայի դառնալով,— հանցանքը ձերն է, ամէնուն երես կուտաք. ասոնք միմիայն քեզմէ օգտվելու համար կը մոտենան քովդ։
— Իրա՞վ կըսէք։
— Ինչո՞ւ սուտ պիտի զրուցեմ։ Կարգվիլ կուզես, լավ. ես գտնեմ քեզի աղջիկներ, ընտրէ եւ ուզածդ առ։
— Աղէկ ըսիր։
— Պատվավոր ընտանիքէ աղջիկներ ցուցնել տամ քեզի։
— Ցուցո՛ւր։
— Միջնորդով աղջիկ փնտրելու ժամանակը անցած է հիմա։
— Այդպէ՞ս է։

— Մինչեւ անգամ ամոթ է։
— Ամոթ է նէ, չուզեր։
— Ես քեզի աղջիկ կը հավնեցնեմ։
— Շնորհակալ եմ։
— Տուր ինծի դուն սրկեց հիսուն ոսկի։
— Սա ի՞նչ ըսել է։
— Տուր դուն ինծի հիսուն ոսկի։
— Ի՞նչու տամ։
— Ա՜ստվա՜ծ, տուր կըսեմ կոր նէ, հարկավ բան մը գիտեմ կոր. տէր ողորմեա, պիտի առնեմ, չպիտի փախչիմ յա։
— Չպիտի փախչիս, բայց...
— Կը վախնա՞ս կոր ինծի հիսուն ոսկի տալու, արդեն այքան գումար մը պահանջող եմ ես քեզմէ, ձեզի համար այնքա՜ն ծախքեր ըրած եմ։

— Այնքան ծախքե՜ր... ի՞նչ ծախքեր են անոնք...
— Մէկիկ մէկեկ չպիտի գրենք ա՛, տիկինը գիտէ։ Բայց թողունք այդ խնդիրը հիմա։
— Ո՛չ, չթողունք այս խնդիրը. հիսուն ոսկի... քա՞նի օր եղավ որ...

/ 96 ստակ — դրամ
97 գործատուն — արհեստանոց /

— Մէկու մը պարտք ունէի, այսօր եկաւ, նեղը խոթեց զիս, եւ եթէ այդ գումարը չվճարեմ, տունէն պիտի հանեն մեզի։ Ասիկա ինծի համար ամոթ է, քեզի համար ալ պատվաբեր բան մը չէ։ Տուր սա հիսուն ոսկին, հաշիվը կը կարգադրենք վերջը։
— Ի՞նչ խայտառակություն է սա...
— Աղջիկ գտնամ նէ, միջնորդէք[98] չպիտի ուզեմ ես քեզմէ. տուր սա հիսուն ոսկին։
— Ինչո՞ւ տամ... ի՞նչ ըրի ես քեզի...
— Կցավիմ, որ խոսք չէք հասկնար կոր. քեզի ինչ կըսեմ կոր նէ, ան ըրէ. ինչո՞ւ չէս տար կոր սա հիսուն ոսկին։
— Չեմ տար, տունէդ ալ կելնեմ, կերթամ։

Եվ խոսելով դէպ ի տուն կը քալէին։
— Հիսուն ոսկին ալ մեծ բան մ՚ըլլար, որ չէք ուզեր կոր տալ։ Իրավ որ ես ձեզմէ չէի հուսար։
— Հուսացէ՛ք։
— Ձեր քիպարութեանը չէի ձգեր, որ հիսուն ոսկիի խոսքն ընէք։
— Սնդուկներս կառնեմ, կերթամ ես։
— Կրնաք երթալ, բայց հիսուն ոսկին տալէն ետքը։
— Չեմ տար։
— Կուտաք։

Կհասնին Ծաղկի փողոց, ուր եկած էին նաեւ քահանան, սափրիչն ու տիկին Շուշան։
— Գնացէ՛ք, մէկդի գացէք, երեսնիդ տեսնել չեմ ուզեր,— պոռաց Աբիսողոմ աղան տեսնելով զանոնք։

Հետո դուռը զարկաւ, ներս մտաւ եւ սկսաւ սնդուկները կապել ի զարմացումն տան տիկնոջ։
— Ինչո՞ւ կը ժողվըվիք կոր, Աբիսողոմ աղա,— հարցուց տան տիկինը։

— Երթամ պիտի, պիտի երթամ։ Միտքս փոխեցի. չպիտի կարգվիմ։
— Բարկացուցի՞ն ձեզի։
— Ո՛չ։
— Ինչո՞ւ ուրեմն բարկացած էք։
— Բարկացած չեմ։
— Քուզում[99] Աբիսողոմ Աղա, Մանուկ աղան հիսուն ոսկի պիտի ուզեր քեզմէ, ուզե՞ց։
— Ուզեց։
— Սխալմունք մ՚է եղեր։
— Սխալմո՞ւնք է եղեր։
— Այո՛, հիսուն ոսկի չպիտի ըլլա, այլ հարյուր հիսուն ոսկի։ Սա բարությունն ըրէ՛ մեզի։ Դուն քիպար մարդ ես։ Մենք ալ քու սայէ-էդ[100] պարտքէ կազատինք։

Աբիսողոմ աղան սնդուկները կապեն, փողոց ցատկեն, երեք բեռնակիր բերեն ու սնդուկներն դուրս հանեն մէկ կընէ։

Սափրիչը, քահանան, տիկին Շուշան եւ Մանուկ աղան կը հետեւին իրեն մինչեւ... հյուրանոցի դուռը։ Ուսկից կը մտնէ Աբիսողոմ աղան, եւ կհեռանան իրեն հետևողները։ Բացի Մանուկ աղայէն, որը կընկերանա Աբիսողոմ աղային հաշիվները կարգավորելու համար։

/ 98 միջնորդէք — մի գործ հաջողեցնելու համար միջնորդություն
99 քուզում — սիրելի
100 սայէ-էդ — հովանի, պաշտպանություն /

Այն օրէն ի վեր Աբիսողոմ աղան տեսնող չեղաւ. միայն թէ քանի մը շաբաթներ նոյն հյուրանոցին դռան առջեւ կտեսնվէին խմբագիրք, հեղինակք, բանաստեղծք՝ իրենց թեւի տակը թղթեա ծրարներ ունենալով։

Այսպէս ուրեմն, կարգվելու նպատակաւ Պոլիս եկողն աղջիկ մ՝իսկ տեսնելու ժամանակ չունեցաւ եւ, ինչպէս կըսեն, բուրդ ու բապուճ փախաւ[101] մայրաքաղաքէս։
Բայց անջնջելի հիշատակ մը թողուց գրական մարդոց մտքին մէջ։



Երբ երկու երեք հեղինակք մէկտեղին, «ինտոր փախցուցինք սա Աբիսողոմ աղան» կըսեն ու կը խնդան քիչ մը։
Իսկ երբ դրամական տագնապի մէջ գտնվին,— «Աստված, Աբիսողոմ աղա մը ղրկէ մեզի»— կըսեն եւ իրենց մտքով ալ կը հավելուն.— խնդրեցէք զԱբիսողոմ աղան, եւ ամենայն ինչ հավելցի ձեզ[102]» ։
Մեծատուններն ալ կիիշեն Աբիսողոմ աղան, երբ գրական մարդ մը անոնց մեկենասությունը խնդրէ։
Աբիսողոմ աղա չենք մենք, կըսեն ։

Իսկ մենք, որ ներկայացած չենք Աբիսողոմ աղային, կը հրատարակենք սույն գործն ոչ այնքան մեղադրելու նպատակաւ ազգային խմբագիրներն, հեղինակներն, բանաստեղծներն եւ այլն, որքան ներկայացնելու համար ապագա սերնդեան՝ ժամանակիս գրագէտներու ողբալի կացությունն եւ գրականութեան մասին ազգային մեծատուններու սարսափելի անտարբերությունը։

/ 101 բուրդ ու բապուճ — հողաթափ, չուստ։ Այստեղ՝բուրդ ու բապուճ փախչել — օձիքն ազատելով փախչել
102 խնդրեցէք զԱբիսողոմ աղան, եւ ամենայն ինչ հավելցի ձեզ — որոնեցեք Աբիսողոմ աղային, եւ ամէն բան կտրվի ձեզ /

Նկարիչ՝ Հովհաննես Շավարշ



Աղբյուրը՝
https://hy.wikisource.org/wiki/%D5%84%D5%A5%D5%AE%D5%A1%D5%BA%D5%A1%D5%BF%D5%AB%D5%BE_%D5%B4%D5%B8%D6%82%D6%80%D5%A1%D6%81%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8

Գրքի մէկ այլ հրատարակչություն՝ տպագրված 1981 թվականին Վենետիկում